



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 97 2017

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Միեր Հակոբյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան Հայաստանի Հանրապետության ատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրոյթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 22.02.2017թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,5 պայմ. մասով
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ գլխավոր դատախազի այցը Մոսկվա	3
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավարին	3
ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովային	4
ՀՀ գլխավոր դատախազն Արդարադատության ակադեմիայի շրջանավարտներին հանձնել է դիպլոմներ և նշանակել դատախազներ	5

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵՐ

Մարզային ամփոփումների շրջանակում ՀՀ գլխավոր դատախազն աշխատանքային այցով այցելել է Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի, Լոռու մարզեր	6
---	---

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Արթուր Ղամբարյան Հանցակիցների մեղադրանքների փոխազդեցությունը՝ դատավարական ակտերի բացառող բնույթի (preclusion) և նախադատելիության (praesudicium) համատեքստում	7
Հայկ Հարությունյան, Լիանա Ղազարյան Կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման համաչափությունը՝ ըստ անմեղության կանխավարկածի սկզբունքի	22
Նարեկ Մինասյան «Քրեական հետապնդում» և «մեղադրանք» հասկացությունների ընդհանրությունը և տարբերությունը քրեական դատավարությունում	28

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հրայր Թովմասյան Ֆինլանդիայի կառավարման ձևի առանձնահատկությունները կառավարման կիսանախագահական համակարգի համատեքստում	36
Հայկ Կետոյան Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի սահմանադրական կարգավիճակն իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում	41

ՓԱՏՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համլետ Ստեփանյան Փաստաբանության՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի հասկացությունը, զարգացման և ձևավորման հիմնախնդիրները	49
---	----

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վարսեր Կարապետյան Կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության հիմնախնդիրն Իսրայելում. Սուրբ վայրերում կրոնական վարքագծի կարգավորման առանձնահատկությունները .	57
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	63
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	72
--	----

ՀՀ ՂԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ԱՅՅԸ ՄՈՍԿՎԱ

Հայաստանի և Ռուսաստանի դատախազական համակարգերի միջև ձևավորվել է համագործակցության բարձր մակարդակ: Այս մասին հունվարի 12-ին, Ռուսաստանի Դաշնության դատախազության կազմավորման 295-ամյակին նվիրված պաշտոնական միջոցառումների շրջանակում Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Յուրի Զայկայի հետ հանդիպման



ժամանակ նշել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը: ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը շնորհավորել է ՌԴ իր գործընկերոջը ՌԴ

դատախազության կազմավորման 295-ամյակի առթիվ, ընդգծել բարեկամ երկրների դատախազական համակարգերի միջև արդեն իսկ ձևավորված սերտ համագործակցության բարձր մակարդակը՝ վստահություն հայտնելով, որ հետագայում ևս դա կլինի շարունակական և արդյունավետ:

Յուրի Զայկան ևս շնորհավորել է Արթուր Դավթյանին ՀՀ գլխավոր դատախազի բարձր ու պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ նշելով, որ իրավական ոլորտում համագործակցության ամրապնդումը կնպաստի երկու երկրների միջև հարաբերությունների առավել սերտացմանը:

Երկու երկրների դատախազներն ընդգծել են, որ նմանատիպ ձևաչափով հանդիպումները կամրապնդեն փոխըմբռնումը և կնպաստեն օրենքի գերակայության սկզբունքի առավել արդյունավետ կիրառմանը:

Հանդիպմանը քննարկվել է դատաիրավական ոլորտին վերաբերող հարցերի լայն շրջանակ, պայմանավորվածություն է ձեռք բերվել կոնկրետ ուղղություններով համագործակցության առավել ակտիվացման վերաբերյալ:

ՀՀ ՂԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԵՄ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՎԱՎԱՐԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկիին:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է ՀՀ-ում ԵՄ պատվիրակության հետ համագործակցության բարձր մակարդակը: Արթուր Դավթյանը կարևորել է արդյունավետ համագործակցությունը նաև ապրիլի 2-ին ՀՀ-ում կայանալիք համապետական ընտրություններին նախորդող ընտրական գործընթացների ընթացքում հնարավոր իրավախախտումները կանխելու, իրավական առումով ընտրության մասնակիցների իրազեկվածությունն ապահովելու ուղղությամբ հա-

մատել աշխատանքների իրականացման հարցում:



ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին նշել է, որ ԵՄ պատվիրակությունը կարևորում է ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացումը:

Դեսպան Սվիտալսկին, շնորհակալություն հայտնելով ՀՀ գլխավոր դատախազին նման նախաձեռնության համար, պատրաստակամություն է հայտնել համատեղ աշխատանքների միջոցով օժանդակել նախընտրական գործըն-

թացներում հնարավոր իրավախախտումները կանխելու նպատակով ՀՀ դատախազության կողմից իր լիազորությունների շրջանակներում իրականացվելիք աշխատանքներին:

Հանդիպմանը պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի հետ համագործակցությունը շարունակել աշխատանքային ընթացակարգով:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՏԱԼՅԱ ՎՈՒՏՈՎԱՅԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է Հայաստանում Եվրոպայի



խորհրդի գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովային: Արթուր Դավթյանը բարձր է գնահատել ՀՀ-ում ընտրական գործընթացների արդյունավետ իրականացման ուղղությամբ Եվրոպայի խորհրդի գրասենյակի իրականացրած աշխատանքները:

Քննարկման առանցքում եղել են ՀՀ-ում կայանալիք ընտրությունների ընթացքում հնարավոր իրավախախտումները կանխելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծված աշխատանքային խմբին, ՀՀ-ում գործող եվրոպական կառույցների, շահագրգիռ այլ մարմինների համագործակցությամբ իրազեկման և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը վերաբերող հարցեր:

Երկուստեք կարևորվել է ազատ, արդար, թափանցիկ ընտրական գործընթացների ապահովումը: Հայաստանում ԵԽ գրասենյակի ղեկավարը պատրաստակամություն է հայտնել՝ ՀՀ գլխավոր դատախազության հետ համագործակցությամբ նպաստել այդ աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Հանդիպմանը քննարկվել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

ՀՀ ՎԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԱԳԵՄԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼ Է ԳԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՇԱՆԱԿԵԼ ԴԱՏԱԽԱՉՆԵՐ

ՀՀ վլխավոր դատախազությունում տեղի է ունեցել Արդարադատության ակադեմիայի շրջանավարտների դիպլոմների հանձնման ա-



րարողությունը, որին զուգահեռ՝ շրջանավարտները ստացել են նաև ՀՀ դատախազության ստորաբաժանումներում դատախազի պաշտոնին նշանակման հրամանները:

Շնորհավորելով արդեն նորանշանակ դա-

տախազներին՝ ՀՀ վլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդգծել է դատախազի աշխատանքի կարևորությունը՝ նշելով, որ երիտասարդ կադրերից ակնկալվում է ակտիվ ու նախաձեռնողական գործունեություն՝ ի նպաստ դատախազության համակարգի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն՝ օրինականության ամրապնդման, մարդու իրավունքների անշեղ պաշտպանության գործում: ՀՀ վլխավոր դատախազը կարևորել է հատկապես ՀՀ վլխավորական դատախազության ստորաբաժանումներում աշխատանքը, նշել, որ դա պահանջում է առավել պատասխանատու և նրբանկատ մոտեցում:

Նորանշանակ դատախազներին շնորհավորել է նաև ՀՀ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանը՝ վստահություն հայտնելով, որ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կուղղվեն իրավական պետության ամրապնդմանը:



ՄԱՐԶԱՅԻՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐԻ ՀՐԶԱՆԱԿՈՄ ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ԱՅՑԵԼԵԼ Է ՎԱՅՈՋ ԶՈՐԻ, ՍՅՈՒՆԻՔԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶԵՐ

Փետրվարի 1-ին և 2-ին նշված մարզերում տեղի են ունեցել խորհրդակցություններ, որոնց



մասնակցել են նաև տվյալ մարզերի իրավապահ մյուս համակարգերի պատասխանատուները: Խորհրդակցությունների ընթացքում նշված մարզերի դատախազները զեկուցել են 2016-ին կատարված աշխատանքները, ներկայացրել հանցագործությունների աճի և նվազման շարժընթացը՝ ըստ հանցատեսակների: ՀՀ գլխավոր դատախազը, յուրաքանչյուր մարզում հանցավորության վիճակի վերլուծության արդյունքներով պայմանավորված, տվել է կոնկրետ հանձնարարականներ:



ՀՀ գլխավոր դատախազը կարևորել է հատկապես հանցագործությունների կանխարգելմանն ուղղված իրավապահ բոլոր մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացումը: Արթուր Դավթյանը հանձնարարել է ակտիվացնել ջանքերը և համագործակցված աշխատանքի շնորհիվ ապահովել մարզերում հանցագործությունների բացահայտմանն ուղղությամբ ակտիվ և հետևողական աշխատանք, հանցագործությունների նախականիսման՝ յուրաքանչյուր դեպքով հետաքննության ու նախաքննության օբյեկտիվության պատշաճ որակն ապահովելու նպատակով կիրառելով դատախազական ներգործության բոլոր միջոցները:



Ամփոփելով խորհրդակցության արդյունքները՝ ՀՀ գլխավոր դատախազը մարզերի դատախազությունների, ինչպես նաև իրավապահ մյուս կառույցների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով մի շարք հանձնարարականներ է տվել՝ ընդգծելով իրավապահ համակարգի գործունեության կանխատեսելիության ու որոշակիության անհրաժեշտությունը:

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,
Հայ-ռուսական համալսարանի Պետության և
իրավունքի տեսության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՆՁԱԿԻՑՆԵՐԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՉԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ՝
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱՅԱՌՈՂ ԲՆՈՒՅԹԻ (PRECLUSION) ԵՎ
ՆԱԽԱԴԱՏԵԼԻՈՒԹՅԱՆ (PRAEJUDICIUM) ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Նախաբան

Հանցակցությամբ կատարված արարքների կամ ծանր ու առանձնապես ծանր հանցագործության նախապես չխոստացված պարտականան՝ կամ հանցագործության քննության ընթացքում արդարադատության դեմ ուղղված հանցագործություն (օրինակ՝ սպանության վերաբերյալ քրեական գործով տրվել է սուտ ցուցմունք) կատարելու վերաբերյալ քրեական գործերով մեղադրանքների հիմքում ընկած փաստական հանգամանքները միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են, ինչը որոշակի դեպքերում առաջացնում է կազուսային իրավիճակներ:

Սույն հոդվածում, մասնավորապես, կքննարկենք փաստական հանգամանքներով փոխկապակցված մեղադրանքների այն իրավիճակները, երբ՝ 1) ենթադրյալ հանցակիցներից մեկի մասով հիմնական քրեական գործերից մաս է անջատվում, որը կասեցվում է, իսկ հիմնական քրեական գործն ուղարկվում է դատարան, 2) մինչդատական վարույթի ընթացքում ենթադրյալ հանցակիցներից մեկի նկատմամբ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցվում է (օրինակ՝ կատարողի նկատ-

մամբ քրեական հետապնդումը դադարեցնելը մահանալու հիմքով), իսկ մյուսի նկատմամբ քրեական գործն ուղարկվում է դատարան: Նկարագրված իրավիճակներում առաջանում են միմյանց հետ փոխկապակցված, սակայն տարբեր վարույթներով (հիմնական գործով և անջատված գործով վարույթներ) կամ տարբեր ժամանակներում իրականացված վարույթներով (մինչդատական և դատական վարույթներ) կայացված դատավարական ակտերում հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության և դրանից բխող իրավական նշանակությամբ բարդ և խնդրահարույց հարցեր:

Նշված հարցերը վերլուծելու նպատակով սույն հոդվածը կներկայացվի հետևյալ կառուցվածքով՝

1. դատավարական որոշումների բացառող (պրեկլուզիվ) և նախադատելի (պրեյուդիցիալ) բնույթի ընդհանուր նկարագիրը,
2. հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության վերաբերյալ ձևավորված պրակտիկան,
3. հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության իրավական սկզբունքները դատավարագիտության մեջ և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում:

¹ Գրականության մեջ նշվում է, որ, քանի դեռ դատավճռով ապացուցված չէ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության փաստը, նախապես չխոստացված պարտական հանցակազմը բացակայում է: Հիմնական հանցագործության բացակայության պայմաններում նախապես չխոստացված պարտական համար քրեական հետապնդում հարուցելը խախտում է անմեղության կանխավարկածը: Այս մասին տես Денисов С. А. Законность и обоснованность соединения и выделения уголовных дел. М.: Изд. Юрлитинформ, 2004. С. 87:

Կարծում ենք՝ անթույլատրելի է նախապես չխոստացված պարտական մասն անջատել և գործն ուղարկել դատարան, իսկ հիմնական հանցագործության մեջ մեղադրվող անձի վերաբերյալ վարույթը կասեցնել: Նման իրավիճակում կատարվող, որ անձը դատապարտվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության նախապես չխոստացված պարտական համար, երբ հիմնական հանցագործությունը դեռևս դատավճռով ապացուցված չէ: Այս մասին մանրամասն տես Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2, Հեղ. Խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Եր.: Հրատ. «Տիգրան Մեծ», 2017, էջ 129-130:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

Այս համատեքստում կքննարկվեն, մասնավորապես՝

3.1. դատաքննությանը չմասնակցած ենթադրյալ հանցակցի մասին դատական ակտում արված գնահատականի իրավաչափությունը,

3.2. հանցակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ գործով կասեցված վարույթի ողջամիտ ժամկետը և քրեական հետապնդման որոշակիությունը,

3.3. պարզեցված դատական վարույթով կայացված դատական ակտի նախադատելիության սահմանները հանցակցի վերաբերյալ անջարված գործով,

3.4. կատարողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը մինչդատական վարույթում, իսկ այլ հանցակցի վերաբերյալ քրեական հետապնդում շարունակելը դատարանում,

4. Եզրակացություն:

1. Դատավարական որոշումների բացառող (պրեկլյուզիվ) և նախադատելի (պրեյուդիցիալ) բնույթի ընդհանուր նկարագիրը

Փաստական հանգամանքներով փոխկապակցված մեղադրանքների վերլուծության համար հիմնարար նշանակություն ունի դատավարական ակտերի պրեկլյուզիվ և նախադատելի ազդեցությունը:

Պրեկլյուզիվ լատիներեն՝ praecclusio բառից է և նշանակում է՝ փակող, իսկ նախադատելի լատիներեն՝ praesudicium բառից է և նշանակում է՝ հարցի նախապես լուծված լինելը, նախապես կայացրած որոշում²:

Ամերիկյան իրավունքում տարբերվում են «claim preclusion» և «issue preclusion» հասկացությունները: «Claim preclusion» նշանակում է, որ եթե դատավարության ընթացքում գործը լուծվել է, ապա նույն գործի վերաբերյալ պահանջը

կրկին քննարկելու հնարավորությունը բացառվում է (փակված է), իսկ «issue preclusion» նշանակում է, որ եթե դատավարության ընթացքում կոնկրետ փաստի վերաբերյալ հարցը քննարկվել է, ապա այդ հարցի կրկին քննությունը բացառվում է (փակված է): «Claim preclusion»-ի և «Issue preclusion»-ի հիմնական տարբերությունն այն է, որ առաջինը կոչված է բացառելու ամբողջ պահանջի կրկնակի քննարկումը, իսկ երկրորդը կոչված է բացառելու կոնկրետ փաստի վերաբերյալ հարցի կրկնակի քննարկումը³:

«Claim preclusion» պահանջը, ըստ էության, նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայության պայմաններում վարույթը նորոգելու անթույլատրելիության մասին է, որը, հայ իրավաբանական տերմինաբանությամբ, անվանում են դատավճռի բացառիկություն⁴, իսկ «issue preclusion» պահանջը, ըստ էության, դատական ակտով հաստատված փաստերը մեկ այլ դատավարությունում դրանք կրկին ապացուցելու պարտականությունից ազատելու մասին է, որը, հայ իրավաբանական տերմինաբանությամբ, կարելի է անվանել փաստի նախադատելիություն:

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման և դատավճռի պրեկլյուզիվ (claim preclusion) բնույթի մասին դատավարական նորմերը նախատեսված են ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ և 35-րդ հոդվածներում: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը՝ մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կբերի անձի վիճակի վատացում: Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդ-

² Щерба С.П., Чашина И.В. Преюдиция в уголовном процессе России и зарубежных стран. М.: Юрлитинформ. 2013. С. 6.

³ Michelle S. Simon Offensive Issue Preclusion in the Criminal Context: Two Steps Forward, One Step Back Mem. L. Rev. 753 (2004), <http://digitalcommons.pace.edu/lawfaculty/212/>.

⁴ Ամերիկյան իրավունքում օգտագործվող «claim preclusion» հասկացությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է հռոմեական իրավունքում օգտագործվող «res judicata» արտահայտությանը, որը լատիներենից բառացի նշանակում էր «լուծված գործ» կամ «գործ, որի վերաբերյալ կայացվել է որոշում»:

դում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե դա կարող է հանգեցնել անձի վիճակի վատացման՝ բացառությամբ հողվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերի: ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել, և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը, կամ անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում:

Դատական ակտի նախադատելիության (issue preclusion, praejudicium) վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատը 13.02.2009թ. թիվ **ԵՔԴ/0244/02/09 գործով նշել է**, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Հետևաբար՝ նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն:

Քրեական դատավարության պոզիտիվ իրավունքում ճյուղային նախադատելիության մասին դատավարական նորմեր նախատեսված չեն, իսկ ՀՀ քաղ. դատ. օր-ի 52-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է դատավճռի միջնորդային նախադատելիության վերաբերյալ դրույթ, որի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք⁵:

Իրավական տրամաբանության շրջանակում աքսիոմատիկ նշանակություն ունի այն, որ փաստական հանգամանքներով փոխկապված գործերով դատական ակտերը չպետք է հակասեն միմյանց, ուստի հանցակցությամբ կատարված հանցագործությունների փաստական հանգամանքները և դրանց իրավական գնահատականները հիմնական և անջատված վարույթներով չեն կարող էապես միմյանցից տարբերվել: Այս հարցում առկա է նաև այլ մոտեցում: Օրինակ՝ Գերմանական քրեական դատավարությունում դատավճռի օրինական ուժը տարածվում է դատավճռի միայն եզրափակիչ մասի նկատմամբ: Օրինական ուժը դատավճռի հիմնավորումների վրա չի տարածվում և չի արգելափակում, այսինքն՝ այլ դատավարություններում, օրինակ՝ հանցակիցների վերաբերյալ գործերով, կարող են սահմանվել դատավճռի այլ հիմնավորումներ: Օրինակ՝ գողության մեղադրանքով Ա-ն արդարացվել է, իսկ մեկ այլ դատավճռով Բ-ն դատապարտվել է գողնող ձեռք բերելու համար: Ընդ որում՝ Բ-ի դատավճռի հիմնավորումներում նշվել է, որ գողությունը կատարել է Ա-ն: Գերմանացի դատավարագետները և պրակտիկները չեն կարծում, թե այս հակասությունը ենթակա է վերացման, քանի որ դատավճիռների եզրափակիչ մասերը հակասություն չունեն: Բ-ի մեղադրանքով դատավճռի եզրափակիչ մասում նշված չէ, որ Ա-ն կատարել է գողություն⁶: Կար-

⁵ ՀՀ վճռաբեկ դատարանը 05.09.2007թ. թիվ 3-1091 (ՎԴ) գործով նշել է, որ ՀՀ քաղ. դատ. օր-ի 52-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի (պրեյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար՝ հետևյալ շրջանակներում. 1. կատարվել են արդյոք որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը), 2. արդյոք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից: Այլ հարցերով դատավճիռը քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով պարտադիր չէ: Օրինակ՝ դատավճռով հաստատված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, ինչպես նաև այդ վնասի հատուցման պահանջի առկայությունը կամ բացակայությունը նախադատելի չեն, և այդ հարցը ենթակա է ապացուցման ընդհանուր հիմունքներով՝ չնայած դրանք հաստատված են դատավճռով:

⁶ Барабанов П.К. Уголовный процесс ФРГ. М.: Изд. Спутник, 2014. С. 336.

ծում ենք՝ այս մոտեցումը խիստ վիճելի հատկապես անմեղության կանխավարկածի տեսանկյունից (այս մասին՝ ստորև):

Եթե հիմնական գործով կայացված դատավճռով հաստատվել են հանցակցի կողմից կատարված արարքի փաստական հանգամանքները և դրա իրավական գնահատականը, ապա մյուս հանցակցի մասով անջատված քրեական գործով հետագայում կայացվող դատական ակտը պետք է համապատասխանի սկզբնական գործով կայացված դատական ակտի տրամաբանությանը: Նման դեպքերում պետք է խոսել հիմնական գործով կայացված դատական ակտի **փաստացի** նախադատելիության մասին (ընդգծումը՝ հեղ.):

Մյուս կողմից՝ եթե հիմնական և անջատված վարույթներով արդարադատություն իրականացնում են տարբեր դատավորներ, ապա արդյոք դատավորը կաշկանդված է մեկ այլ դատավորի՝ նախկինում կայացրած դատական ակտով հաստատված հանգամանքներով: Դեռևս խորհրդային քրեական դատավարության մասնագետները (Մ. Ստրոգովիչ, Ի. Պետրովսին, Ու. Յուսուպովա և այլք) դատավճռի նախադատելիության և ապացույցների ազատ գնահատման սկզբունքի հարաբերակցության հարցում առավելությունը տալիս էին ապացույցների ազատ գնահատման սկզբունքին և մեղադրյալի պաշտպանության իրավունքին: Միևնույն ժամանակ՝ դատավճիռների հակասություններից խուսափելու նպատակով առաջարկվում էր մշակել նախկինում կայացված դատավճիռը վերանայելու կառուցակարգ, մասնավորապես՝ սահմանել, որ նախադատելիությունը հերքող նոր դատավճիռն օրինական ուժի մեջ չի մտնում, քանի դեռ վերադաս դատարանը չի վերանայել նախկին և նոր դատավճիռները⁷:

Դատավարագիտության մեջ առանձնացվում են նախադատելիության երկու տեսակ՝ հերքելի և անհերքելի նախադատելիություն: Ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որտեղ դատական ակտով հաստատված փաստերի նախադատելիությունն անհերքելի է⁸, ժամանակակից քրեական դատավարությունում առավելապես գերիշխում է հերքելի նախադատելիության մոտեցումը⁹, ըստ որի՝ հանցակցի վերաբերյալ ընդհանուր կարգով կայացված դատավճռով հաստատված փաստերը կարող են նախադատելի նշանակություն ունենալ, եթե մյուս հանցակցի վերաբերյալ գործը քննող դատավորը կասկածի տակ չի դնում այդ փաստերը, կամ դատավարության մասնակիցները չեն պահանջում դատարանում հետազոտել նախկին դատավճռով հաստատված փաստերի վերաբերյալ ապացույցները (պարզեցված վարույթների արդյունքով կայացված դատական ակտերի նախադատելիության մասին կխոսվի ստորև):

Կարծում ենք՝ եթե գործը քննող դատավորն օրենքի ուժով կաշկանդված լինի մյուս հանցակցի վերաբերյալ մեկ այլ դատավորի դատավճռով հաստատված փաստերով, ապա կխախտվեն ապացույցների ազատ գնահատման սկզբունքը և մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Հերքելի նախադատելիության մասին մոտեցումը բխում է մեղադրյալի իրավունքների պաշտպանության պահանջից, քանի որ դատավարությանը չմասնակցած ենթադրյալ հանցակիցն իր վերաբերյալ դատավարության ընթացքում հնարավորություն կունենա վիճարկելու այլ գործով հաստատված ապացույցները:

Արտասահմանյան առանձին երկրների քրեական դատավարության մեջ նույնպես ամ-

⁷ Теория доказательств в советском уголовном процессе. Отв. ред. Н.В. Жогин, изд. 2-е. М.: Юридическая литература, 1973. <http://kalinovskiy-k.narod.ru/b/td-1973.htm> (29.10.2016), Юсубова У. М. Преюдиции в советском уголовном процессе. Автореф. дисс. канд.юрид. наук. М.: 1979. С. 7, 17.

⁸ ՀՀ վճռաբեկ դատարանը 23.03.2012 թ. թիվ ԵՃԴ/0220/02/11 գործով արձանագրել է, որ դատական ակտի պրեյյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք ... ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս:

⁹ Տեսության մեջ նշվում է, որ նույնիսկ քրեական դատավարության շրջանակում ճանաչված փաստը ոչ միշտ է, որ կարող է հաստատված համարվել մեկ այլ քրեական գործով: Եվ դրանում ոչ մի զարմանալի բան չկա, քանի որ ճանաչողության միևնույն մեթոդների կիրառումն ինքնին չի երաշխավորում միևնույն արդյունքները: Միևնույն ժամանակ՝ ճանաչողության տարբեր մեթոդների կիրառումը չի բացառում միևնույն արդյունքներին հասնելու հնարավորությունը: Տնտ. Колоколов Н. А. Преюдиция: проблемы законодательного регулирования правоприменительной практики. Уголовное судопроизводство в 3 т. Том 1. М.: Изд. Юрайт, 2016. С. 377.

րագրված են հերքելի նախադատելիության մասին դրույթներ: Օրինակ՝ Վրաստանի քր. դատ. օր-ի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմերի նախաձեռնությամբ դատարանը կարող է մերժել նախադատելի փաստը, եթե վերջինս հակասում է դատարանում ապացույցների հետազոտման արդյունքներին: Մոնտենեգրոյի քր. դատ. օր-ի (18.09.2009թ.) 246-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նախադատելի փաստի վերաբերյալ հարցն արդեն լուծվել է դատարանի կողմից այլ դատավարությունների շրջանակներում կամ պետական այլ իշխանության կողմից, ապա նման որոշումը չի կաշկանդում քրեական դատարանին՝ լուծելու քրեական հանցանքի առկայությունը կամ բացակայությունը¹⁰:

Ինչ վերաբերում է քրեական հետապնդման մարմինների՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ հաստատված փաստերի նախադատելիությանը՝ կանխավ նշենք, որ քրեական հետապնդման մարմնի նշված որոշումը մյուս ենթադրյալ հանցակիցների վերաբերյալ գործով արդարադատություն իրականացնող դատավորի համար նախադատելի նշանակություն չունի՝ բացառությամբ մինչդատական վարույթի ընթացքում հանցակցի, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, արարքի ապացուցված լինելու հանգամանքի նախադատելիությանը (այս մասին կխոսվի ստորև):

2. Հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության վերաբերյալ ձևավորված պրակտիկան

Հանցակիցների փոխկապակցված մեղադրանքներով քրեական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում ծագում են հետևյալ վիճելի դեպքերը:

Առաջին՝ եթե մեղադրանքի բնույթն այնպիսին է, որ հնարավորություն է տալիս հանցակիցների վերաբերյալ քրեական գործերն առանձին քննելու, ապա քննիչը հետախուզվող

մեղադրյալի մասով քրեական գործից մաս է անջատում և կասեցնում է, իսկ հիմնական քրեական գործն ուղարկում է դատարան: Գործնականում նման դեպքերում դատարանը դատավճիռ կայացնելիս հաճախ նշում է նաև անջատված մասով հետախուզվող անձի անհատական տվյալները, ինչի հետևանքով ստեղծում է այնպիսի տպավորություն, որ դատապարտվել է ոչ միայն դատավարությանը մասնակցած մեղադրյալը, այլ նաև՝ անջատված մասով հետախուզման մեջ գտնվող ենթադրյալ հանցակիցը:

Երկրորդ՝ հանցակցությամբ կատարված հանցագործությունների դեպքում մեղադրանքի փաստական հանգամանքների կապն այնպիսին է, որ անջատված քրեական գործերի քննությունն օբյեկտիվորեն դժվար է կամ անհնար, քանի որ մի հանցակցի մեղավորության ապացուցման համար անհրաժեշտ է հիմնավորել նաև հանցակցի մեղադրանքը: Օրինակ՝ միջնորդի (օժանդակողի) միջոցով կաշառք տվողի դեպքում միջնորդին քրեական պատասխանատվության ենթարկելու համար վճռորոշ նշանակություն ունի կաշառք տվողի մեղադրանքի փաստական հանգամանքների ապացուցվածությունը: Եթե հանցակիցներից մեկը թաքնվել է քննությունից, ապա գործնականում նման դեպքերում քննիչը հանցակիցների վերաբերյալ քրեական գործը չի անջատում, այլ կասեցնում է երկու հիմքով. քննությունից թաքնված մեղադրյալի մասով՝ ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իսկ դատավարությանը մասնակցող մեղադրյալի մասով՝ ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, այն է՝ անհաղթահարելի ուժի առկայության հիմքով: Տվյալ դեպքում անհաղթահարելի ուժ է համարվում այն, որ առանց քննությունից թաքնված մեղադրյալի մասնակցության հնարավոր չէ լուծել դատավարությանը մասնակցող մեղադրյալի վերաբերյալ գործը դատարան ուղարկելու հարցը:

Երրորդ՝ առաջին կետում նկարագրված իրավիճակն ավելի է սրվում, երբ հիմնական

¹⁰ Ուկրաինայի քր. դատ. օր-ի 198-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննելիս գործի հանգամանքների վերաբերյալ քննիչ-դատավորի որոշման մեջ արտացոլված եզրահանգումները, որոնք վերաբերում են կասկածանքին, մեղադրանքին, տվյալ կամ այլ դատավարության ընթացքում քննիչի, դատախազի կամ դատարանի համար նախադատելի նշանակություն չունեն:

գործով դատաքննությունն իրականացվում է արագացված կարգով՝ առանց ապացույցների հետազոտության:

Չորրորդ՝ հանցակիցների վերաբերյալ քրեական գործը քննվում է մեկ վարույթի շրջանակում, սակայն մինչդատական վարույթի ընթացքում ենթադրյալ հանցակցի նկատմամբ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցվում է, իսկ մյուս հանցակցի վերաբերյալ քրեական գործն ուղարկվում է դատարան: Օրինակ՝ մինչդատական վարույթի ընթացքում գողություն կատարողի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցվում է, իսկ օժանդակողի վերաբերյալ գործն ուղարկվում է դատարան, և կայացվում է մեղադրական դատավճիռ:

Այս խնդիրների հնարավոր լուծումների վերաբերյալ որպես ելակետ կընդունվեն Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները և այդ համատեքստում կատարված դատավարագիտական վերլուծությունները:

3. Հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության իրավական սկզբունքները դատավարագիտության մեջ և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում

3.1. Դատաքննությանը չմասնակցած ենթադրյալ հանցակցի մասին դատական ակտում տրված գնահատականի իրավաչափությունը

Եթե մեղադրանքի փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս հանցակիցների վերաբերյալ քրեական գործերն անջատելու և առանձին քննելու, ապա քննիչը հետախուզվող ենթադրյալ հանցակցի (մեղադրյալի) մասով քրեական գործից մաս է անջատում, որը կասեցնում է, իսկ հիմնական քրեական գործն ուղարկում է դատարան: Գործնականում նման դեպքերում դատարանը դատավճիռ կայացնելիս հաճախ նշում է նաև անջատված գործով հետախուզվող մեղադրյալի անհատական տվյալները, ինչի հետևանքով ստեղծում է այնպիսի վիճակ (տպավորություն), որ կարծեք թե դատապարտվել է ոչ միայն հիմնական գործով մեղադրյալը, այլ նաև՝ անջատ-

ված գործով հետախուզման մեջ գտնվող ենթադրյալ հանցակիցը:

Եվրոպական դատարանը 23.02.2016թ. Նավալինի և այլք ընդդեմ Ռուսաստանի վերաբերյալ գործով նշել է. «Եթե խմբի մասնակցությամբ կատարված հանցագործությունների դեպքում խմբի մասնակիցներին հնարավոր չէ միաժամանակ դատապարտել, ապա ամբաստանյալների մեղավորության որոշման համար կարող է անհրաժեշտ լինել հիշատակել երրորդ անձանց, ովքեր կարող են դատապարտվել հետագայում: Քրեական գործը քննող դատավորը մեղադրյալի իրավաբանական պատասխանատվության հստակ որոշման նպատակով պարտավոր է պարզել գործի բոլոր հանգամանքները և չի կարող իր կողմից պարզված հանգամանքների մասին խոսել պարզ ենթադրություններով կամ կասկածներով: Ասվածը վերաբերում է նաև հանցակից երրորդ անձանց հետ կապված հանգամանքներին, սակայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է վկայակոչել նման հանգամանքներ, դատարանը պետք է ձեռնպահ մնա այնպիսի տեղեկություններ ներկայացնելուց, որոնք անհրաժեշտ չեն ամբաստանյալի իրավաբանական պատասխանատվության որոշման համար: Նույնիսկ եթե օրենսդրությամբ հստակ սահմանված է դատավճռում դատավարությանը չմասնակցած անձի մեղավորության մասին եզրահանգումների անթույլատրելիության մասին նորմ, միևնույն է՝ դատական ակտում պետք է խուսափել դատավճռում երրորդ անձի մեղավորության մասին եզրակացություններ օգտագործելուց»:

Ամմեղության կանխավարկածի սահմանադրական պահանջից և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումից բխում է, որ դատաքննությանը մասնակցող ամբաստանյալի քրեական պատասխանատվության որոշման նպատակով գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների, այդ թվում՝ հանցակից երրորդ անձանց (դատաքննությանը չմասնակցող հանցակից) հետ կապված հանգամանքների հստակ և ոչ երկիմաստ ներկայացնելն ինքնին չի հակասի Եվրոպական կոնվենցիային, եթե.

առաջին՝ նման հանգամանքների վերլուծությունը և գնահատականը անհրաժեշտ են դա-

տաքննությանը մասնակցած ամբաստանյալի արարքներին գնահատական տալու համար: Անթույլատրելի է դատավճռում նկարագրել դատաքննությանը չմասնակցող հանցակիցներին առնչվող այնպիսի հանգամանքներ, որոնք անմիջականորեն չեն առնչվում դատաքննությանը մասնակցող ամբաստանյալի արարքներին:

*Երկրորդ*¹¹ հանցակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ հիմնական գործով կայացվող դատավճռում չի կանխորոշվել դատաքննությանը չմասնակցած (քննությունից խուսափող) մեղադրյալի մեղավորությունը:

*Երրորդ*¹² հիմնական գործով կայացված դատավճռում չի նշվել դատաքննությանը չմասնակցած մեղադրյալի վերաբերյալ տվյալներ: Այս հարցի լուծման նպատակով քրեական դատավարության գիտության մեջ առաջարկվում է դատավճռում նշել հանցակիցների տվյալները ոչ թե ամբողջությամբ (անուն, ազգանուն, հայրանուն) այլ, օրինակ՝ միայն անունը կամ անվան և ազգանվան առաջին տառերը¹¹: Հեղինակների մեկ այլ խումբ նշում է, որ առանձնացված գործով մյուս հանցակիցները պետք է կոչվեն «չպարզված անձիք»¹²:

Կարծում ենք՝ հիմնական գործով կայացված դատավճռում չպետք է նշել դատաքննությանը չմասնակցած ենթադրյալ հանցակցի ոչ միայն անունը, ազգանունը, այլև ցանկացած տեղեկություն, որը հնարավորություն կտա նույնականացնելու (անհատականացնելու) դատաքննությանը չմասնակցած ենթադրյալ հանցակցին: Օրինակ՝ Նավալինին և այլք ընդդեմ Ռուսաստանի վերաբերյալ գործով ներպետական դատարանը դատավճռում նշել էր դատաքննությանը չմասնակցած հանցակիցների անվան և ազգանվան առաջին տառերը, սակայն նշել էր նաև տվյալ անձանց պաշտոնները, ինչի կապակցությամբ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դատավճռում օգտագործված ձևակերպումները, անկասկած, վկայում էին, թե ո՞ւմ մասին է խոսքը, և դրանով ցույց էր տրվում նրանց առնչությունն այն հան-

ցագործությանը, որի համար դիմումատուն դատապարտվել էր:

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հնարավոր չէ դատաքննությանը մասնակցող ամբաստանյալին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը որոշել առանց դատաքննությանը չմասնակցող հանցակցի արարքների վերաբերյալ եզրակացություններ կատարելու: Նշված հարցով Եվրոպական դատարանը 23.02.2016թ. Նավալինին և այլք ընդդեմ Ռուսաստանի վերաբերյալ գործով նշել է՝ եթե մեղադրանքի բնույթն այնպիսին է, որ դատավորին հնարավորություն չի տալիս անջատված վարույթում շրջանցելու հանցակից երրորդ անձանց վերաբերյալ եզրակացություններ կատարելուց, և այդ եզրահանգումները կարող են ազդել երրորդ անձանց իրավաբանական պատասխանատվության ենթարկելու հարցը որոշելու վրա, ապա նման իրավիճակը կարելի է դիտել քրեական գործերի վարույթներն անջատելու էական խոչընդոտ: Ընդհանուր փաստերով այդ աստիճանի փոխկապված գործերի անջատման հարցի լուծումը պետք է հիմնվի մրցակցող շահերի մանրակրկիտ վերլուծության վրա, և մյուս մեղադրյալներին պետք է հնարավորություն տալ՝ առարկելու վարույթն անջատելու դեմ:

Հիմնական քրեական գործից մաս անջատելու դեմ առարկելու՝ մեղադրյալի իրավունքի մասին Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը կիրառվում է այն դեպքերում, երբ բոլոր մեղադրյալները մասնակցում են դատավարությանը, սակայն առկա են հանգամանքներ, որոնք խոչընդոտում են հանցակիցների վերաբերյալ մեղադրանքը քննել մեկ վարույթի շրջանակներում, օրինակ՝ եթե գործի քննության ընթացքում պարզվի, որ հանցակիցներից մեկը հանցանքը կատարելուց հետո ստացել է հոգեկան խանգարում, ապա, ՀՀ քր. դատ. օր-ի 468-րդ հոդվածի համաձայն՝ նրա նկատմամբ գործը կարող է առանձնացվել առանձին վարույթում: Նման իրավիճակներ կարող են առաջանալ նաև այն դեպքերում, երբ

¹¹ Հայրապետյան Զ. Դատավճռի որպես արդարադատության իրականացման ակտի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում: Թեկնածուական ատենախոսություն, 2015, էջ 70:

¹² Виницкий Л.В., Кубрикова М.Е. Актуальные вопросы института досудебного соглашения о сотрудничестве. М.: Юр-литинформ, 2015. С. 125.

մեղադրյալներից մեկը համագործակցում է իրավապահ մարմինների հետ, և նրա վերաբերյալ քրեական գործը հիմնական գործից անջատվում է:

Կարծում ենք՝ իրավապահ մարմինների հետ համագործակցող ենթադրյալ հանցակցի վերաբերյալ գործից մաս անջատելու դեմ մյուս մեղադրյալի առարկելու՝ Եվրոպական դատարանի կողմից սահմանված իրավունքը չպետք է դիտել որպես բացարձակ իրավունք: Իրավապահ մարմինների հետ համագործակցող հանցակցի մասով գործի անջատումը չի հակասի Եվրոպական կոնվենցիային, եթե.

առաջին՝ վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն է տվել մեղադրյալին դիրքորոշում հայտնելու իրավապահ մարմինների հետ համագործակցող հանցակցի վերաբերյալ գործն անջատելու մասին.

երկրորդ՝ վարույթն իրականացնող մարմինը մանրամասն վերլուծել է մրցակցող շահերը, որոնք կապված են, մի կողմից՝ համագործակցող հանցակցի անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության հետ, մյուս կողմից՝ մեղադրյալի, ում դեմ համագործակցող հանցակիցը ցուցմունքներ է տալիս, պաշտպանության իրավունքի հետ¹³:

3.2. Հանցակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ գործով կասեցված վարույթի ողջամիտ ժամկետը և քրեական հետապնդման որոշակիությունը

Եվրոպական դատարանը Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի գործով 10.07.2012թ. անդրադարձել է այն իրավիճակներին, երբ հանցակցությամբ կատարված հանցագործությունների դեպքում մեղադրանքի փաստական հանգամանքների կապն այնպիսին է, որ թույլ չի տալիս քննությունից թաքնվող մեղադրյալի մասով գործն անջատել, իսկ առկա մեղադրյալի մասով հիմնական գործն ուղարկել դատարան, ուստի քրեական գործի վարույթը կասեցվում է անհաղթահարելի ուժի առկայության հիմքով: Նշված գործով քննիչը 10.09.2006թ. որոշում է կայացրել՝ ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-

ին մասի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ կասեցնել քրեական վարույթը: Նշված որոշմամբ սահմանված է. «*Վարույթի ներկա փուլում հնարավոր չէ առանձնացնել (դիմումատուի) դեմ քրեական գործի նյութերը և մեղադրական եզրակացություն ներկայացնել, քանի որ նրա հանցակիցների [A.H. և T.A.] փախուստի և չբացահայտված գտնվելու վայրի պատճառով անհնարին է դառնում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետին համապատասխան դիմումատուի իրավունքների երաշխավորումը: Միաժամանակ՝ նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցը թույլ չի տալիս դիմումատուի դեմ քրեական վարույթը դադարեցնել որևէ հիմքով: Բացահայտված փաստական հանգամանքների վերաբերյալ մեղադրյալներ A.H.-ի և T.A.-ի հայտարարությունները, որոնք նաև հաստատվել են փախուստից հետո իրականացված նախաքննությամբ և քննչական միջոցառումներով, կարող էին զգալի նշանակություն ունենալ քրեական գործի մյուս մեղադրյալի՝ դիմումատուի դեմ մեղադրանքի բովանդակության որոշման և նրա կողմից կատարված արարքների՝ քրեական իրավունքի պտասնկյունից որակման և գնահատման հարցում: Այնուամենայնիվ, A.H.-ը և T.A.-ը գտնվում են հետախուզման մեջ, և նրանց գտնվելու վայրն անհայտ է, այն է՝ առկա է անհաղթահարելի ուժը, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործի հետագա քննությունը»:*

Եվրոպական դատարանը քրեական հետապնդման վիճակում գտնվող դիմումատուի վերաբերյալ քրեական վարույթն անհաղթահարելի ուժով **տևական** (ընդգծումը՝ հեղ.) ժամկետով կասեցնելու հանգամանքը դիտել է որպես Եվրոպական կոնվենցիայի խախտում՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Դիմումատուի համար ռիսկի գործոնի աստիճանը մեծ էր, քանի որ նա *երկարատև* ժամանակահատվածում տառապել էր իր ապագայի մասին անորոշություն զգացումից՝ հաշվի առնելով, որ նրան սպառնում է քրեական գործով դատապարտում: Այս առումով՝ քրեական վարույթում մեղադրյալն իրավունք ունի պահանջելու, որ իր գործի քննու-

¹³ Այս մասին տե՛ս Гамбарян А. С., Симонян С. А. Судебное депонирование показаний в современном уголовном процессе. Науч. ред. С. С. Аветисян. М.: Юрлитинформ, 2016. С. 80-90.

թյունն իրականացվի հատուկ ջանասիրությամբ, և որ քրեական գործերում Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կոչված է ապահովելու այն, որ մեղադրյալը, վարույթի արդյունքների առումով, չափազանց երկար չգտնվի անորոշ իրավիճակում»:

Ելնելով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումից՝ կարելի է առանձնացնել հետևյալ իրավիճակները:

Իրավիճակ առաջին: Նկարագրված հանգամանքներում անհաղթահարելի ուժի առկայության հիմքով քրեական գործով վարույթի կասեցումն ինքնին չի հակասի Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջին, եթե կասեցված քրեական գործով դատավարությանը մասնակցած ենթադրյալ հանցակիցը քրեական հետապնդման վիճակում չի մնացել տևական ժամանակով: Եթե վարույթն իրականացնող մարմինն ունի հիմքեր ենթադրելու, թե քննությունից թաքնված մեղադրյալին (հանցակցին) հնարավոր է հայտնաբերել ողջամիտ ժամկետում, ապա նա կարող է քրեական գործի վարույթը կասեցնել քննությունից թաքնված մեղադրյալի մասով՝ ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իսկ դատավարությանը մասնակցող մեղադրյալի մասով՝ ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ անհաղթահարելի ուժի առկայության հիմքով: Այս դեպքում դատավարությանը մասնակցող ենթադրյալ հանցակիցը թեև շարունակում է մնալ մեղադրյալի կարգավիճակում, սակայն վարույթն իրականացնող մարմինը վերացնում է նրա իրավունքների բոլոր սահմանափակումները: Կրկին անգամ ընդգծենք, որ անթույլատրելի է դատավարությանը մասնակցող ենթադրյալ հանցակցին տևական ժամանակ պահել քրեական հետապնդման վիճակում: Ժամկետի ողջամտությունը որոշվում է յուրաքանչյուր քրեական գործով՝ հիմք ընդունելով Եվրոպական դատարանի պրակտիկայում ձևավորված չափանիշները:

Իրավիճակ երկրորդ. Եթե, մի կողմից, հանցակիցների վերաբերյալ մեղադրանքների փաստական հանգամանքների կապն օբյեկտիվորեն բացառում (դժվարեցնում) է դատավարությանը մասնակցող մեղադրյալի մասով քրեական գործից մաս անջատելը և դատարան ու

ղարկելը, մյուս կողմից՝ ողջամիտ ժամկետում հնարավոր չէ հայտնաբերել քննությունից թաքնվող հանցակցին, ապա դատավարությանը մասնակցող ենթադրյալ հանցակցի մասով անհաղթահարելի ուժի հիմքով քրեական գործի վարույթը տևական ժամանակով կասեցնելը (քրեական հետապնդման վիճակում անձին պահելը) կհակասի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, ուստի նման իրավիճակում քննիչը պարտավոր է.

առաջին՝ դատավարությանը մասնակցող ենթադրյալ հանցակցի մասով՝ կայացնել քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, որի հիմքում կարող է դրվել, անմեղության կանխավարկածի համատեքստում, դատավարության կոնկրետ ժամանակահատվածում, փաստերի անբավարարությամբ պայմանավորված՝ հանցակազմի բացակայությունը (ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ).

երկրորդ՝ քննությունից խուսափող ենթադրյալ հանցակիցների մասով՝ ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով որոշում կայացնել քրեական վարույթը կասեցնելու մասին.

երրորդ՝ քննությունից խուսափող հանցակցին հայտնաբերելու դեպքում որոշում կայացնել՝ վարույթը վերսկսել, իսկ դատավարության մասնակցող ենթադրյալ հանցակցի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնել՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով:

Այս իրավիճակում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու նոր երևան եկած հանգամանք կարող են դիտարկվել քննությունից թաքնված ենթադրյալ հանցակցի հայտնած տեղեկությունները: Եթե հանցակիցը, մինչև քննությունից թաքնվելը, ցուցմունք է տվել և հայտնել է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները, ապա նրան հայտնաբերելու դեպքում պետք է գնահատել, թե նրա տված լրացուցիչ ցուցմունքներն արդյոք դատավարությանը մասնակցած ենթադրյալ հանցակցի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նոր երևան եկած հանգամանքներով վերացնելու հիմք են:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

3.3. Պարզեցված դատական վարույթով կայացված դատական ակտի նախադատելիության սահմանները հանցակցի վերաբերյալ անջատված գործով

Ինչպես նշվեց՝ ընդհանուր կարգով քննվող քրեական գործով հանցակցի վերաբերյալ կայացված դատավճռով հաստատված փաստերը կարող են նախադատելի նշանակություն ունենալ, եթե մյուս ենթադրյալ հանցակցի վերաբերյալ գործը քննող դատավորը կասկածի տակ չի դնում այդ փաստերը, կամ դատավարության մասնակիցները չեն պահանջում՝ դատարանում հետազոտել նախկին դատավճռով հաստատված փաստերի վերաբերյալ ապացույցները: Հերքելի նախադատելիության վերաբերյալ մոտեցումը չի կարող կիրառվել պարզեցված վարույթներով, մասնավորապես՝ արագացված դատաքննության դեպքում: Ինդիքն այն է, որ արագացված դատաքննության ընթացքում ապացույցներ չեն հետազոտվում (բացառությամբ օրենքով նախատեսված առանձին դեպքերի), ուստի դատավարական այս ձևի շրջանակում կայացված դատական ակտը ենթադրյալ հանցակցի վերաբերյալ գործով, ընդհանուր առմամբ, չի կարող նախադատելի նշանակություն ունենալ: Պարզեցված դատավարական ձևի շրջանակում կայացված դատական ակտն անջատված քրեական գործով նախադատելի նշանակություն չի կարող ունենալ նույնիսկ այն դեպքում, երբ անջատված գործով դատավորը կամ վարույթի մասնակիցները չեն վիճարկում արագացված դատական քննության արդյունքով կայացված դատական ակտով «հաստատված» հանգամանքները: Այս մոտեցումից միակ բացառությունը դատական ակտով համագործակցող մեղադրյալի մեղավորության հաստատման փաստն է, որն ունի ինչպես պրեկլուզիվ, այնպես էլ նախադատելի նշանակություն:

Որոշ հեղինակներ կարծում են, թե պարզեցված վարույթով օրինական ուժի մեջ մտած

դատավճռի նախադատելիությունը վերաբերում է միայն հանցագործության դեպքին (ժամանակ, վայր, եղանակ և այլ հանգամանքներ) և այն հանցակցի մեղավորությանը, ում վերաբերյալ գործն անջատվել է առանձին վարույթ¹⁴: Պարզեցված վարույթի արդյունքով կայացված դատավճիռը համագործակցող մեղադրյալի մեղավորության մասով ունի անհերքելի նախադատելի նշանակություն, սակայն կրկին ընդգծենք, որ պարզեցված վարույթի շրջանակներում կայացված դատական ակտով հաստատված հանցագործության դեպքին առնչվող հարցերը (ժամանակ, վայր, եղանակ և այլ հանգամանքներ) հիմնական գործով նախադատելի ազդեցություն չպետք է ունենան:

Այս կապակցությամբ Լ. Գոլովկոն արդարացիորեն նշում է, որ համագործակցության համաձայնագիր կնքելու դեպքում քրեական գործն անջատվում է, և գործը քննվում է հատուկ կարգով՝ առանց դատաքննություն իրականացնելու, ուստի գործարք կնքած անձի վերաբերյալ կայացված դատավճիռն այլ գործով չի կարող ունենալ նախադատելի նշանակություն: Այս կարևոր դրույթն ունի գիտական աքսիոմատիկ բնույթ¹⁵: Ի.Ս. Դիկարևի կարծիքով՝ արագացված դատավարության կարգով քննվող գործերի առանձնահատկությունն այն է, որ de facto սահմանափակվում է դատարանի ճանաչողական գործունեությունը, ինչն օբյեկտիվ խոչընդոտ է նման կարգով կայացված դատավճռի նախադատելի հատկության համար¹⁶:

Եվրոպական դատարանը 23.02.2016թ. Նավալնին և այլք ընդդեմ Ռուսաստանի վերաբերյալ գործով հատուկ ընդգծել է, որ X-ի (համագործակցող մեղադրյալ) վերաբերյալ գործը քննվել է պարզեցված ընթացակարգով, և գործի համապատասխան հանգամանքները հաստատվել են ոչ թե ապացույցների դատական հետազոտման, այլ՝ մինչդատական համաձայնագրի հիման վրա: Հետևա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 97 2017

¹⁴ Веницкий Л. В., Кубрикова М. Е. Актуальные вопросы института досудебного соглашения о сотрудничестве. М.: Юрлитинформ, 2015. С. 125.
¹⁵ Головки Л. В. Три аксиомы применения института преюдиции в уголовном процессе. Доказывание и принятие решений в современном уголовном судопроизводстве. Материалы межд. научно-практ. конф., посвященной памяти П. А. Лупинской. М.: Изд. Элит, 2011.
¹⁶ Дикарев И. С. Спорные вопросы преюдиции в уголовном процессе. Мировой судья. 2011. №2, С. 27-31.

բար՝ հանգամանքները, որոնք դատարանը հիմք է ընդունել X-ի վերաբերյալ գործը քննելիս, ոչ թե ապացուցվել են, այլ դարձել են իրավական կանխավարկածի առարկա: Դրանք չէին կարող ներմուծվել այլ դատավարություն՝ առանց մանրակրկիտ ստուգելու և այլ դատավարության շրջանակներում դրանց թույլատրելիությունն ու հավաստիությունը հաստատելու:

Պարզեցված դատական վարույթի շրջանակում կայացված դատական ակտերի փաստացի նախադատելի ազդեցությունից խուսափելու նպատակով առաջարկում ենք լուծման հետևյալ տարբերակները.

Տարբերակ առաջին. մեղքն ընդունած և համագործակցող մեղադրյալի վերաբերյալ անջատված քրեական գործը դատարան ուղարկել հիմնական գործով դատավճիռ կայացնելուց հետո: Նման մոտեցման դեպքում պարզեցված դատական վարույթի արդյունքները փաստացի չեն կարող ազդել ընդհանուր կարգով իրականացվող դատական վարույթի վրա, քանի որ այդ գործով դատավճիռն արդեն իսկ կայացվել է¹⁷:

Մինչույն ժամանակ՝ այս մոտեցման խոցելի կողմն այն է, որ համագործակցող մեղադրյալի վերաբերյալ քրեական գործը ուշ (հիմնական գործով դատավճիռ կայացնելուց հետո) դատարան ուղարկելը կարող է խախտել համագործակցող մեղադրյալի՝ քրեական գործը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրական իրավունքը¹⁸:

Տարբերակ երկրորդ. եթե համագործակ-

ցող մեղադրյալի վերաբերյալ քրեական գործն ուղարկվում է դատարան, այնուհետև հիմնական գործն է ուղարկվում դատարան, ապա հիմնական գործով վարույթի վրա պարզեցված դատական վարույթի շրջանակներում կայացված դատական ակտի փաստացի նախադատելի ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար համագործակցող մեղադրյալի վերաբերյալ պարզեցված դատական վարույթն իրականացնող դատավորը չի կարող հանդիսանալ հիմնական քրեական գործով ընդհանուր կարգով արդարադատությունն իրականացնող դատավոր: Պատճառն այն է, որ, եթե դատավորը համագործակցող ամբաստանյալի վերաբերյալ իրականացրել է պարզեցված դատական վարույթ և հետագայում հիմնական գործով իրականացնի նաև արդարադատություն, ապա պարզեցված դատական վարույթի արդյունքները հիմնական գործով փաստացի կունենան նախադատելի նշանակություն: Թեև ֆորմալ իրավաբանական իմաստով հիմնական գործով արդարադատություն իրականացնելիս դատավորը կաշկանդված չէ պարզեցված վարույթի ընթացքում կայացրած իր դատական ակտով, սակայն, իրավաբանական ռեալիզմի տեսանկյունից՝ քիչ հավանական է, որ դատավորը, ով հիմնական գործով պետք է արդարադատություն իրականացնի, կկարողանա իր գիտակցությունից ջնջել պարզեցված վարույթի ընթացքում կայացրած դատական ակտի բովանդակությունը և «սպիտակ թղթի վրա» ձևավորել այլ ներքին համոզմունք:

¹⁷ ՌԴ-ում ձևավորված իրավակիրառ պրակտիկայի համաձայն՝ ՌԴ քր. դատ. օր-ի 40.1-րդ գլխով սահմանված կարգով անջատված քրեական գործերի բացարձակ մեծամասնությունը դատարան է ուղարկվում մինչև հիմնական գործը դատարան ուղարկելը: Դա պայմանավորված է նախաքննության մարմինների այն ձգտմամբ, ըստ որի՝ անհրաժեշտ է օրինական ուժի մեջ մտած դատավճիռի նախադատելի նշանակությամբ ուժեղացնել համագործակցող մեղադրյալի հանցակիցների մեղավորության վերաբերյալ ապացույցները: Այս մասին տե՛ս Тисен О. Н. К проблеме ограниченной преюдиции фактов, установленных в отношении субъекта досудебного соглашения о сотрудничестве. Российская юстиция. 2014. №10. С. 67-69. Նույն հեղինակը հետագա իր աշխատանքներում փաստում է, որ, ի հակադրություն քրեական հետապնդման մարմինների վերը նշված ձգտումների՝ դատավորները գիտակցաբար չեն ցանկանում համագործակցող մեղադրյալի վերաբերյալ անջատված քրեական գործը, պարզեցված կարգով, քննել ավելի շուտ, քանի դեռ հիմնական գործով ընդհանուր կարգով դատավճիռ չի կայացվել: Ողջ Ռուսաստանի տարածքում տարածված են համագործակցող մեղադրյալների վերաբերյալ քրեական գործերի դատաքննությունների ակնհայտ ձգձգումները, քանի դեռ հիմնական գործերի՝ ընդհանուր կարգով քննությունը չի ավարտվել: Այս մասին տե՛ս Тисен О. Н. Теоретические и практические проблемы института досудебного соглашения о сотрудничестве в российском уголовном судопроизводстве. М.: Юрлитинформ, 2016. С. 220.

¹⁸ Նման առաջարկի իրականացումը հնարավոր է, եթե օրենսդրությամբ նախատեսվի այս հիմքով համագործակցող մեղադրյալի վերաբերյալ քրեական գործի վարույթը կասեցնելու հիմք:

3.4. Կատարողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը մինչդատական վարույթում, իսկ այլ հանցակցի վերաբերյալ քրեական հետապնդում շարունակելը դատարանում

Փաստական հանգամանքներով փոխկապված մեղադրանքների մյուս իրավիճակը վերաբերում է այն դեպքերին, երբ մինչդատական վարույթի ընթացքում կատարողի (համակատարողի) նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվում է, իսկ մյուս ենթադրյալ հանցակցի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան: Օրինակ՝ գողության վերաբերյալ քրեական գործով օժանդակողը կատարողին տեղեկատվություն է տրամադրել բնակարան մուտք գործելու ուղիների և նյութական արժեքների գտնվելու վերաբերյալ: Մինչդատական վարույթի ընթացքում կատարողի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցվել է նրա մահանալու հիմքով, իսկ օժանդակողի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան: Նման իրավիճակում հարց է ծագում՝ արդյոք հնարավոր է ենթադրյալ հանցակցին դատապարտել, եթե մինչդատական վարույթի ընթացքում կատարողի վերաբերյալ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցվել է: Այս հարցին պատասխանելու համար պետք է քննարկել երկու ընդհանուր խնդիր՝

ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ արդյո՞ք ապացուցված է համարվում հանցակցի վերաբերյալ արարքի կատարման փաստը, թե՞ ոչ,

եթե՛ այո, ապա քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ հաստատված հանգամանքներն արդյո՞ք ենթադրյալ հանցակցի վերաբերյալ գործը քննող դատավորի համար կարող են ունենալ նախադատելի նշանակություն:

Առաջին՝ ոչ արդարացվող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ մեղադրյալի արարքի ապացուցված լինելու հարցը դատավարության բարդ հարցերից է, որտեղ խաչվում են, մի կողմից՝ անմեղության կանխավարկածի, մյուս կողմից՝ տուժողին պատճառված վնասի հատուցման կամ

ենթադրյալ հանցակցի քրեական հետապնդումը շարունակելու պահանջները: Թերևս՝ խնդրի բարդությամբ կարելի է բացատրել սույն հարցի վերաբերյալ բարձր դատարանների հակասական դիրքորոշումները: Այսպես՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանը, մեկնաբանելով Գ. Վիրաբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին դատախազի որոշումը, նշել է. «Այս որոշումը ձևակերպվել է այնպես, որ կասկած չի առաջացել այն առումով, որ դատախազի կարծիքով դիմումատուն հանցանք է կատարել: Մասնավորապես՝ դատախազն սկզբում ամփոփ տեսքով հավաքել է գործի փաստական հանգամանքները, ինչպես նշված է դիմումատուի դեմ ներկայացված մեղադրանքի մեջ, և ներկայացրել այնպես, որ դրանով առաջարկվում է հաստատել, որ ոստիկան Հ.Մ-ն գործել է ինքնապաշտպանության նկատառումներով, իսկ դիմումատուն կանխամտածված վնասվածքներ է հասցրել նրան»: Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում: Մինչդեռ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 30.03.2010թ. ՍԴՈ-871 որոշման մեջ նշել է. «Ի տարբերություն ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված՝ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման, երբ մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդատական կամ դատական վարույթներում ապացուցված է (ընդգծումը՝ հեղ.), և ըստ այդմ՝ օրենսդիրը մեղադրյալին արդարացվածի կարգավիճակ չի տրամադրում, ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անձին վերապահվում է արդարացվածի կարգավիճակ»: ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ հստակ սահմանված է, որ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման դեպքում, որպես կանոն, ապացուցված է մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը: ՌԴ Սահմանադրական դատարանի քաղաքականության համաձայն՝ ոչ արդարացնող, օրինակ՝ համաներման ակտի հիմքով, քրեական գործի վարույթը կարճելն

իր բովանդակությամբ և իրավական հետևանքներով չի հանդիսանում ակտ, որով ՌԴ Սահմանադրության 49-րդ հոդվածի իմաստով հաստատվում է անձի մեղավորությունը: Սակայն այդ որոշումը ենթադրում է քննության նյութերի վրա հիմնված հաստատում այն մասին, որ անձը կատարել է հանցագործության հատկանիշներ պարունակող արարք: Այդ է պատճառը, որ համաներման ակտի հիմքով քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել, եթե մեղադրյալն առարկում է դրա դեմ¹⁹:

Եթե ղեկավարվենք ՀՀ և ՌԴ Սահմանադրական դատարանների քաղաքականությամբ, ապա պետք է ընդունել, որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ ապացուցված է համարվում մեղադրյալի կողմից հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի կատարումը²⁰:

Երկրորդ՝ քրեական հետապնդման մարմնի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը ունի առավելապես պրեկլյուզիվ ազդեցություն: Առանձին հեղինակներ նշում են, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն ունի նախադատելի նշանակություն, սակայն հետագայում ճշգրտում են, որ դա ավելի շատ պրեկլյուզիվ նշանակության ակտ է, քանի որ կոնկրետ անձի նկատմամբ միևնույն կասկածանքով ապագա քրեական հետապնդումը բացառող հիմք է²¹:

Մինչդատական վարույթի ընթացքում կա-

տարողի (համակատարողի) վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նրա կողմից *հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի կատարման ապացուցված լինելու մասով ունի նախադատելի նշանակություն*, սակայն քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ նկարագրված՝ հանցագործության դեպքին առնչվող հանգամանքները (ժամանակ, վայր, եղանակ և այլ հանգամանքներ), որոնք վերաբերում են նաև մյուս հանցակիցների մեղադրանքին, դատավորի համար նախադատելի նշանակություն չեն կարող ունենալ: Ասվածը հիմնավորվում է նաև իրավահամեմատական վերլուծությամբ: Այսպես՝ **Ղազախստանի քր. դատ. օր-ի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման մարմնի որոշումները դատավորի համար պարտադիր ուժ չունեն՝ բացառությամբ միևնույն կասկածանքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմանը**: Մոնտենեգրոյի քր. դատ. օր-ի 246-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նախադատելի փաստի վերաբերյալ հարցն արդեն լուծվել է դատարանի կողմից այլ դատավարությունների շրջանակներում կամ պետական այլ իշխանության կողմից, ապա նման որոշումը չի կաշկանդում Քրեական դատարանին՝ լուծելու քրեական հանցանքի առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով՝ թեև կատարողի (համակատա-

¹⁹ Այս մասին տե՛ս Вопросы уголовного судопроизводства в решениях Конституционного суда РФ в 2 ч. Часть 1. практ. Пособие. Е. Васильева, Е. В. Ежова, Р. М. Шагеева. 3-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2016. С. 67.

²⁰ Ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ արարքի ապացուցված լինելու մասին դատողությունից պետք է կատարել երկու կարևոր եզրակացություն՝ 1. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ արարքի ապացուցված լինելը (դրա հիմքում ընկած ապացույցները) կարող է ունենալ բացառապես դատավարական նշանակություն, որը թույլ կտա քաղաքացիական դատավարության շրջանակներում ապացուցման ավելի մեղմ չափանիշների հիման վրա լուծել տուժողին պատճառված վնասի հատուցման, իսկ հանցակցությամբ կատարված արարքների դեպքում նաև՝ ենթադրյալ հանցակցի քրեական հետապնդումը շարունակելու հարցերը, 2. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ, թեև ապացուցված է արարքի կատարումը (ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշման), սակայն սահմանադրական իմաստով անձի մեղավորության մասին պնդում չէ, ինչը նշանակում է, որ ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող անձի սահմանադրական կարգավիճակի վրա բացասական ազդել, օրինակ՝ չի կարելի այդ ակտի հիմքով սահմանափակել անձի հանրային ծառայության սահմանադրական իրավունքը: Ի դեպ՝ առաջին անգամ հանցանք կատարած անձանց նկատմամբ հայեցողական քրեական հետապնդումը կիրառելու (ՀՀ քր. դատ. օր-ի 37-րդ հոդված) հարցի կապակցությամբ նախկինում նշել ենք, որ ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը ինքնին չի խոչընդոտում ՀՀ քր. դատ. օր-ի 37-րդ հոդվածի կիրառումը, սակայն նման մոտեցումը խոցելի է, եթե հարցը դիտարկենք ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 30.03.2010թ. ՍԴԴ-871 որոշմամբ արտահայտած դիրքորոշման համատեքստում, որտեղ նշված է մեղադրյալի կողմից հանցանքի կատարման ապացուցված լինելու մասին: Այս մասին տե՛ս Ղամբարյան Ա. Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում: Ուսումնական ձեռնարկ, Եր.: Հրատ. Անտարես, 2016, էջ 159-160:

²¹ Смирнов А. В., Калиновский К. Б. Уголовный процесс. Учебник. Под общ. ред. А. В. Смирнова. 6-е изд., перераб. М.: Норма: ИНФРА-М.: 2015. С. 368.

րողի) վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նրա կողմից հանցագործության հարկանիշներ պարունակող արարքի կատարման ապացուցված լինելու մասով դատավորի համար ունի նախադատելի նշանակություն, սակայն.

1. դատավորը, հանցակիցների վերաբերյալ գործը քննելիս, կաշկանդված չէ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ նկարագրված այն հանգամանքներով և դրանց տրված գնահատականներով, որոնք վերաբերում են ոչ միայն կատարողին, ում նկատմամբ հետապնդումը դադարեցվել է, այլև մյուս հանցակիցներին, որոնց մեղադրանքը քննվում է դատարանում.

2. ենթադրյալ հանցակիցների վերաբերյալ գործով դատավճիռ կայացնելիս դատավորը պետք է խուսափի կատարողի, ում նկատմամբ հետապնդումը դադարեցվել է, մեղավորության վերաբերյալ ձևակերպումներից, որոնք կխախտեն անմեղության կանխավարկածը:

Սույն հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել 10.01.2012թ. Վուլպի և այլք ընդդեմ Ռուսաստանի գործով, որի փաստերի համաձայն՝ չորս դիմումատուն ժառանգներն էին Վ.Վ-ի, ով իշխանությունների կողմից կասկածվում էր բռնությամբ կատարված մի շարք հանցագործությունների կատարման համար հետապնդվող հանցավոր միավորման ղեկավար լինելու մեջ: Ենթադրյալ հանցավոր միավորման երեք երիտասարդ անդամների ձերբակալման լուրը ստանալուն հաջորդել է Վ.Վ-ի ինքնասպանությունը, որի պատճառով քրեական հետապնդումը դադարեցվել էր: Հանցավոր միավորման մյուս երեք ենթադրյալ անդամները հետագայում դատապարտվել են մի շարք հանցագործությունների համար, և առաջին ատյանի դատարանը 03.10.2002թ. որոշման մեջ հստակ նշել է, որ Վ.Վ-ն միանշանակ հանդիսացել է հանցավոր միավորման ղեկավար և հանձնարարել է կատարել սպանություններ: Դատավճռում, մասնավորապես, նշված է եղել. «Հանցավոր միավորման ղեկավար Վ.Վ-ն, ում վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցվել է մահանալու հիմքով, ֆինանսավորել է բանդան և դրա յուրաքանչյուր անդամի վճարել է հանցագործություններ կատարելու համար՝ գնել է մեքենաները,

վճարել է վառելիքի և տեխնիկական սպասարկման համար»:

Հետագա քաղաքացիական հայցի շրջանակներում քաղաքացիական դատարանները կարգադրել են Վ.Վ-ի կաթի գործարանի բաժնեմասերի մի մասը փոխանցել հանցագործությունից տուժած անձանց: Չնայած Վ.Վ-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել էր՝ այդ որոշումը կայացնելիս քաղաքացիական դատարանները հիմնվել են հանցախմբում Վ.Վ-ի դերի հետ կապված քրեական դատարանների կողմից պարզված հանգամանքների վրա: Քաղաքացիական գործով դատարանը 04.09.2003թ. վճռում նշել է. «03.10.2002թ. դատավճռի համաձայն՝ Վ.Վ-ն ղեկավարել է հանցավոր միավորում, որի կազմում գտնվող հանցակիցները նրա ղեկավարմամբ կատարել են ծանր հանցագործություններ: Վ.Վ-ն պետք է պատասխանատվություն կրեր պատճառված նյութական և բարոյական վնասի համար, սակայն նա նախաքննության ընթացքում ինքնասպան է եղել»:

Եվրոպական դատարանը նշել է, որ անմեղության կանխավարկածի շրջանակները չեն սահմանափակվում ընթացիկ քրեական դատավարություններով, այլ նաև տարածվում են այն դատական որոշումների վրա, որոնք ընդունվել են քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո: Ավելին՝ դա քրեական իրավունքի հիմնարար կանոններից է, որ քրեական պատասխանատվությունը չի կարող գերազանցել քրեական արարք կատարած անձի կեցությունը: Այնուամենայնիվ, քրեական նույն գործի շրջանակներում համապատասխանողների նկատմամբ իրականացվող քրեական դատաքննության ընթացքում քրեական գործով դատավորը, առանց որևէ սահմանափակման և վերապահման, հաստատված է համարել այն փաստը, որ Վ.Վ-ն հանդիսացել է հանցավոր միավորման ղեկավար և համակարգել ու ֆինանսավորել է միավորման հանցավոր գործունեությունը: Հետագա քաղաքացիական դատավարության ընթացքում կիրառվող ձևակերպումն ավելին քան հստակ փաստում էր, որ հանցախումբը Վ.Վ-ի գլխավորությամբ կատարել էր ծանր հանցագործություններ՝ ներառյալ սպանություններ և սպանության փորձեր: Եվրոպական դատարանը նշել է, որ անհրաժեշտ

էր հստակ տարբերակել հանցագործության կատարման մեջ պարզապես կասկածվելու հանգամանքը և դատարանի կողմից արված այն հստակ հայտարարությունը, ըստ որի՝ անձը, ըստ էության, կատարել է հանցագործություն: Հանցակիցների վերաբերյալ քրեական գործը քննելիս դատավորները կարծիք են հայտնել, թե՛ Վ.Վ-ն «կազմակերպել է զինված միավորում», «ֆինանսավորել է բանդայի գործունեությունը և վճարել է յուրաքանչյուր անդամի հանցագործություններ կատարելու համար»: Այդ հայտարարությունները չեն սահմանափակվել Վ.Վ-ի վերաբերյալ որպես «կասկածանք» նկարագրելով, այլ, առանց որևէ վերապահման, որպես հաստատված փաստ, նշվել է, որ նա հանցավոր միավորման ղեկավար է և ֆինանսավորել է հանցավոր գործունեությունը: Այս ձևակերպումները հետագայում օգտագործվել են նաև քաղաքացիական դատավարության ընթացքում

Ներպետական դատարանների դատական ակտերում բովանդակվող՝ Վ.Վ-ին մինչև մեղքի հաստատումը մեղավոր ճանաչող հայտարարությունների բացահայտ և անվերապահ բնույթը դիտարկվում է որպես նրա անմեղության կանխավարկածի իրավունքի խախտում:

Այսպիսով՝ մինչդատական վարույթի ընթացքում կատարողի, ում վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցվել է մինչդատական վարույթում, անմեղության կանխավարկածի խախտումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք.

1. հանցակիցների վերաբերյալ դատավճռի «նախապատմություն» բաժնում նշել և մեջբերել կատարողի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը.

2. եթե քրեական գործի հանգամանքներն այնպիսին են, որ հանցակցի արարքների նկարագրությունն օբյեկտիվորեն պահանջում է նաև անդրադառնալ կատարողի, ում նկատմամբ հետապնդումը դադարեցվել է, արարքներին, ա-

պա դատավճռի պատճառաբանական մասում դատավորը պետք է հղում կատարի ՀՀ Սահմանադրական դատարանի 30.03.2010թ. ՍԴԴ-871 որոշման վրա, այնուհետև մեջբերի մինչդատական վարույթի ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման վերաբերելի հատվածը.

3. եթե կատարողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճառաբանական մասում հանցակցի մասով վերաբերելի որևէ հանգամանք նկարագրված չէ, ապա անհրաժեշտության դեպքում դատավորը կարող է կատարողի, ում մեղադրանքը դատաքննության ընթացքում չի քննարկվել, արարքները ներկայացնել «կասկածանքի» ձևաչափով: Ընդ որում՝ այս դեպքում պետք է խուսափել, կատարողի մեղավորության մասին հստակ ձևակերպումներից:

4. Եզրակացություն

Հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության հարցերը, թերևս, դատավարագիտության և իրավակիրառ պրակտիկայի առավել բարդ հիմնախնդիրներից են, քանի որ այս տիրույթում խաչվում են իրավաչափ բազմաթիվ և բազմաշերտ շահեր (նպատակներ). մի կողմից՝ ենթադրյալ հանցակցի անմեղության կանխավարկածի և պաշտպանության իրավունքը, մյուս կողմից՝ դատավորի անկախության և ապացույցների ազատ գնահատման սկզբունքները, երրորդ կողմից՝ քրեական գործով վարույթի ողջամիտ ժամկետի պահպանման և քրեական հետապնդման որոշակիության պահանջները, չորրորդ կողմից՝ քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը: Բնականաբար, նման բազմաշերտ շահերի հակադրությունների տիրույթում գտնվող հարցերը կարիք ունեն համակողմանի քննարկման:

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ,
Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԼԻԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարան (ՀՖՀՀ)
իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատի
2-րդ կուրս

ԿԱՆԱՆՔԻ՝ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱԶՎՓՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ (տեսական և գործնական հիմնախնդիրներ)

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: Անմեղության կանխավարկածի սկզբունքի վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի պահանջներն իրենց արտացոլում են ստացել նաև ՀՀ օրենսդրությունում: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Իրավական մտքի պատմության մեջ անմեղության կանխավարկածի գաղափարն առաջին անգամ առաջ է քաշել ականավոր իրապարակախոս, իրավագետ Չեզարե Բեկարիան: Նա իր «Հանցագործությունների և պատիժների մասին» (1764թ.) աշխատության մեջ անդրադառնում է հանցագործության մեջ կասկածվող անձին մեղադրելու անթույլատրելիությանը՝ նշելով որ անձի մեղավորությունը կարող է ապացուցվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով¹:

Ներկայումս անմեղության կանխավարկածը՝ որպես քրեական դատավարության հիմնարար սկզբունք և սահմանադրական երաշխիք, համարվում է արդար դատաքննության

իրավունքի անբաժան մաս և գործում է քրեական դատավարության բոլոր փուլերում՝ մինչև դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Անմեղության կանխավարկածն ուղղված է պաշտպանելու անձին անհիմն մեղադրանքներից և անձի մի շարք իրավունքների պաշտպանության երաշխիք է:

Անմեղության կանխավարկածը մեղադրյալի օբյեկտիվ կարգավիճակն է, ինչը ենթադրում է՝

- անձն անմեղ է համարվում պետության կողմից, չնայած առկա են նրա կողմից հանցագործություն կատարելու կասկածներ, կամ նրան մեղադրանք է առաջադրվել,
- մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը՝ անձին անմեղ համարելու պարտականությունը կախված չէ կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորության վերաբերյալ քրեական վարույթ իրականացնող մարմնի կարծիքից կամ ներքին համոզմունքից,
- դատավորն իր պարտականությունները կատարելիս չպետք է ելնի այն համոզմունքից, որ մեղադրյալը կատարել է հանցագործություն,
- հանցագործության մեջ մեղադրվելու կասկածյալի անձի իրավունքների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակներին: Նման սահմանափակումները չեն կարող համարժեք լինել քրեական պատժին²:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 97 2017

¹ Տե՛ս “On Crimes and Punishments” (1764) C. Beccaria. Available at: <http://www.thefederalistpapers.org/wp-content/uploads/2013/01/Cesare-Beccaria-On-Crimes-and-Punishment.pdf>

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 254:

Ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի բնորոշման. «Անմեղության կանխավարկածի էությունն անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դատավարության արդյունքում և միայն դատական ակտով³»: Սակայն անձին մեղավոր ճանաչելու դատարանի իրավասությունը բացարձակ չէ այն հիմքով, որ առաջին ատյանի, այդ թվում նաև՝ բարձր ատյանի դատարանները չպետք է վաղաժամ կարծիք արտահայտեն անձի մեղավորության մասին, ինչն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի հետ: Ընդ որում՝ անձի մեղավորության մասին դատողություններն անթույլատրելի են ինչպես իրավական այնպես էլ բարոյական դիրքերից⁴:

Անմեղության կանխավարկածի սկզբունքի նկատմամբ հարգանքի պահանջն առաջին հերթին ուղղված է դատարանին՝ որպես գործն ըստ էության լուծող անկողմնակալ և անաչառ ատյանի: Դատարանը, այդ թվում նաև՝ հետաքննության և նախաքննության մարմինները, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը պետք է դրսևորեն զսպվածություն իրենց գործողություններով, այդ թվում նաև՝ որոշումներով չպետք է սուբյեկտիվ դիրքորոշում հայտնեն անձին ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածության մասին: Եթե դատական որոշումն արտահայտում է հստակ ձևակերպում անձի կողմից այն արարքի կատարման համար, որի կատարման մեջ նա **միայն** կաս-

կածվում է, ապա դա համարվում է անմեղության կանխավարկածի կոպիտ խախտում⁵: Բացի այդ՝ երբ դատավորը մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կարծիք է հայտնում անձի մեղավորության մասին, նա խախտում է Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք⁶: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում նույնպես անմեղության կանխավարկածի խախտում է համարել դատավորի կողմից արդար դատաքննության սկզբունքը խախտելու հիմքով⁷:

Հարկ է նշել, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը կարող է խախտվել ոչ միայն դատական իշխանության, այլ նաև՝ հանրային իշխանության մարմինների կողմից՝ անձի մեղավորության վերաբերյալ կանխավարկած արտահայտություններով⁸: Հանրային իշխանության մարմինների կողմից անձի մեղավորության մասին արված արտահայտությունների անթույլատրելիության մասին իր որոշումներում նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը⁹:

Ինչպես նշվեց՝ հանցագործության մեջ մեղադրվելու կապակցությամբ անձի իրավունքների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակներին, և նման սահմանափակումները չեն կարող համարժեք լինել քրեական պատժին, հակառակ

³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴՈ-871 որոշման 6-րդ կետը:
⁴ Տե՛ս Судостройство и правоохранительные органы в Российской Федерации. Под ред. В.И. Швецова. М., 1996, էջ 106:
⁵ Տե՛ս European Court of Human Rights(ECHR) decision of 10 January 2012 the case on Vulakh and others v. Russia, app. No. 33468/03, §§ 33-37
⁶ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2014 թվականի դեկտեմբերի 22-ի Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ գործով, թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 14-րդ կետը:
⁷ Տե՛ս European Court of Human Rights(ECHR) decision of 06 December 1998 the case on Barbera, Messegue and Jabardo v. Spain, app. No. 10590/83 §77, §91; decision of 25 March 1983 the case on Minelli v. Switzerland, App. No. 8660/79, §37; decision of 18 December 2008 the case on Nerattini v. Greece, App. No. 43529/07 § 23; decision of 14 April 2009 the case on Didu v. Romania, app. No. 24814/02, § 41; decision of 06 February 2007 the case on Garycki v. Poland, app. No. 14348/02, § 66; decision of 01 December 2008 the case on Ismoilov and Others v. Russia, App. No. 2947/06, § 166:
⁸ Տե՛ս European Court of Human Rights(ECHR) decision of 10 January 1995 the case on Allen de Ribemont v. France, app. No. 15175/89; decision of 17 January 2001 the case on Daktaras v. Lithuania, app. No. 42095/98, § 42; decision of 22 April 2010, the case on Fatullayev v. Azerbaijan, app. No. 40984/07, § 159;
⁹ Տե՛ս Guide on Article 6, Right to a fair trial (criminal limb), Council of Europe/European Court of Human Rights, 2014. Available at: www.echr.coe.int

դեպքում, կառաջանա անհամաչափություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների հետ: Այս համատեքստում հատկանշական է քննարկել անմեղության կանխավարկածի հնարավոր խախտումները կալանքի՝ որպես խափանման միջոցի անհարկի կիրառման դեպքում: Ըստ միջազգային և ներպետական կարգավորումների՝ կալանավորումը համարվում է հանցագործության մեջ մեղադրվող անձի նկատմամբ կիրառվող ամենախիստ խափանման միջոցը և կիրառվում միայն այն դեպքում, երբ մյուս միջոցները բավարար չեն ապահովելու անձի պատշաճ վարքագիծը կամ նպաստելու արդարադատության իրականացմանը: Կալանքի կիրառման նպատակը ոչ թե անձին նախապես պատժելն է, այլ՝ նրա հնարավոր ոչ իրավաչափ գործողությունների կանխումը՝ հասարակությունից մեկուսացնելու միջոցով: Անձի ազատության ժամանակավոր սահմանափակումը ելնում է գործի քննության շահերից: Այսինքն՝ կալանավորման նպատակն է ապահովել նախաքննության և դատաքննության բնականոն ընթացքը, ինչպես նաև դատավարական գործընթացին մեղադրյալի մասնակցությունը: Հակառակ դեպքում՝ առանց ազատության սահմանափակման անձի ոչ պատշաճ վարքագիծը կարող է ազդել քրեական գործի քննության ողջ ընթացքի վրա¹⁰:

Կալանքի կիրառման դեպքերի վերլուծությունը վկայում է, որ առավել հաճախ հանդիպող խախտումներից են կալանքի կիրառման մասին որոշում կայացնելիս ներկայացված հիմնավորումների ոչ վերաբերելի և ոչ բավարար լինելը, քրեական դատավարության սկզբունքների չպահպանումը, ինչպես նաև քննչական մարմինների և դատարանների կողմից անձի մեղավորության կանխավարկածի վրա հիմնվելը: Անմեղության կանխավարկածի և կալանքի միջև անմիջական կապն արտահայտվում է այն դեպքում, երբ կալանքի կիրառման հիմքերը պատճառաբանված չեն, ուղղված չեն հետապնդվող նպատակների իրականացմանը և կիրառվում են որպես նախնական պատիժ: Մինչդեռ՝ քրեական գործի մինչդատական վա-

րույթի փուլում վերահսկողական իր գործառույթն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատապարտող կամ նրա մեղավորությունը հաստատող ակտ է, այլ՝ արդյունավետ ու անաչառ արդարադատություն իրականացնելու միջոց: Այս մոտեցումն իր ամրագրումն է ստացել ինչպես միջազգային, այնպես էլ՝ ներպետական իրավունքում, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր: Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներն ընտրելիս նախաքննության մարմինները պետք է ընտրեն վերջինիս ազատությունը հնարավորինս քիչ սահմանափակող միջոց՝ ելնելով այն կանխավարկածից, որ մեղադրյալի կողմից ապագայում ենթադրվելիք գործողությունների կատարումը հնարավոր կլինի կանխել խափանման ավելի մեղմ միջոցներով:

Կալանքի՝ ըստ պահանջի կիրառման համատեքստում կարևոր նշանակություն ունի սահմանադրաիրավական «*Ultima Ratio*»-ի (նվազագույն միջամտություն) սկզբունքը, որը սերտորեն կապված է անմեղության կանխավարկածի սկզբունքի հետ: Այս սկզբունքը հայտնի է նաև «նվազագույն քրեականացման սկզբունք» եզրույթով: Դա թույլ է տալիս հասկանալ կալանքի կիրառման համաչափության կանոնը և սերտորեն կապված է *pro-libertate* հասկացության հետ: *Pro-libertate* սկզբունքից բխում է, որ ցանկացած իրավիճակում հնարավոր սահմանափակող միջոցներից պետք է ընտրվի նվազագույն միջամտություն առաջացնողը: Այս սկզբունքը քննարկելով կալանքի համատեքստում՝ պետք է նշել, որ կալանքը՝ որպես բացառիկ խափանման միջոց, պետք է կիրառվի միայն որպես հնարավոր միջոցներից վերջինը և ծայրահեղ անհրաժեշտը, երբ փախուստի դիմելու, հանրորեն այլ վտանգավոր արարք կատարելու կամ արդարադատության ընթացքին միջամտելու վտանգը չի կարող հաղթահարվել խափանման այլ միջոցներով: Կալանավորու-

¹⁰ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի Տիգրան Վահրադյանի գործով, թիվ ԼԴ/0197/06/08 որոշման, 39-րդ և 40-րդ կետերը:

մը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք և խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել հենց կալանքը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում նշված հանգամանքները: Ընդ որում՝ օրենսգրքի 135-րդ հոդվածը, ամրագրելով կալանավորման հիմքերը, ըստ էության՝ մատնանշում է ոչ պատշաճ վարքագծի այն հնարավոր դրսևորումները, որոնք կանխելու նպատակով որպես խափանման միջոց կիրառվում է կալանավորումը¹¹: Կալանավորման կիրառման հիմքերի կիրառելիության անհրաժեշտությունը պետք է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների միջոցով, որոնցով էլ որոշվում են կալանավորման հիմքերի կիրառման ողջամտությունը և հիմնավորվածությունը:

Կալանքի կիրառումը ողջամիտ է այն դեպքում, երբ մեղադրյալի կողմից խախտվում են այն պայմանները, որոնց հիմքով վերջինիս նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց: Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերոնշյալ դեպքերում կալանքի կիրառումը չպետք է բացարձականացվի և պետք է հիմնվի հանգամանքների խոր ուսումնասիրության և մոտիվացիայի վրա¹²: Կալանքի կիրառման համար նախատեսված հիմքերն ունեն առավել ենթադրական բնույթ, քանի որ կապված են ապագայում ենթադրվելիք գործողությունների կատարման հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կալանավորման հիմքերը վերջինիս կիրառման հիմնավորվածությունն ու օրինականությունն ապահովող երաշխիքներ են, սակայն, ինչպես արդեն նշվեց՝ միայն վերոնշյալ հիմքերը մեղադրյալի նկատմամբ կալանավորման կիրառման միջնորդությունը հաստատելու համար բավարար չեն: Վճռաբեկ դատարանը ստեղծել է մի ամբողջ նախադեպային ի-

րավունք՝ ստորադաս ատյանի դատարանների համար մեկնաբանելով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «հիմնավոր կասկած», «պատճառների վերաբերելիություն», «իրավական որոշակիություն», որոնք պարտադիր նշանակություն ունեն դատարանի կողմից կալանքի կիրառման հարցի լուծման համար: Միայն վերոնշյալ պայմանների առկայության դեպքում դատարանը կարող է պարզել, թե արդյոք կա՞ն բավարար հիմքեր ենթադրելու, որ անձը կատարել է իրեն մեղսագրվող արարքը: Միջնորդության մեջ քննիչի կողմից պետք է պատշաճ հիմնավորված և պատճառաբանված լինի խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորող գոնե մեկ պայման, որի հիմքով պետք է կիրառվի կալանք, ինչպես նաև ողջամիտ հիմնավորումներ այն մասին, որ, ավելի մեղմ այլընտրանքային խափանման միջոց կիրառելով՝ հնարավոր չի լինի ապահովել անձի պատշաճ վարքագիծը: Այս խնդրի լուծման նպատակով մշակվել է հայեցողության միջակայքի դոկտրինը (անգլ.՝ margin of appreciation), որով Կոնվենցիան պետություններին որոշակի հայեցողություն է ընձեռում որոշակի հանգամանքներում, որոշ իրավունքների նկատմամբ միջամտություն իրականացնելու նպատակով՝ սահմանելով, որ այդ միջամտությունը պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին: Նմանապես՝ խափանման միջոցի կիրառման համար պետության կողմից պայմանների սահմանումը կարող է դիտարկվել որպես հայեցողության դրսևորում, սակայն կիրառումն արդեն իսկ դառնում է պարտադիր, և դրանցից որևէ մեկի կիրառման հարցը պետք է լուծի բացառապես անձի մեղավորությանը վերաբերող հիմնավոր կասկածը հաստատելուց հետո: Այն դեպքում, երբ հնարավոր չէ հավաքել անձի ոչ պատշաճ վարքագծի հնարավոր դրսևորումները հիմնավորող ապացույցներ, դատարանը պետք է սկզբնական կալանքի համար նշանակի այնպիսի ժամկետ, որի ընթացքում հնարավոր կլինի վարույթ իրականացնող մարմնի կողմից ձեռք բերել կալանավորման անհրաժեշտու-

¹¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-827 որոշման 6-րդ կետը:
¹² Տե՛ս Council of Europe(COE), Committee of Ministers, Recommendation of the Use of Remand in Custody, the Conditions in Which It Takes Place and the Provision of Safeguards against Abuse(27 September 2006):

թյունը հիմնավորող ողջամիտ փաստեր¹³: Ընդ որում՝ անգամ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության դեպքում պետք է նշանակվի անձի իրավունքները հնարավորինս քիչ սահմանափակող խափանման միջոցը¹⁴: Հակառակ դեպքում՝ կալանավորման մասին որոշումներում տեղ գտած ոչ իրավական ձևակերպումները խախտում են միջազգային իրավունքով ամրագրված երաշխիքները: Այն դեպքում, երբ դատարանը պատշաճ կերպով չի քննում խափանման միջոցի կիրառման հարցը, հետագայում դատավճիռ կայացնելիս ստիպված է լինում կայացնել մեղադրական դատավճիռ, կալանավորման կիրառման նախնական նպատակին չհակասելու համար¹⁵:

Քրեական դատավարության վաղ փուլում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցը լուծելիս դատավորը, անձի մեղադրանքը հիմնավորված համարելով, խախտում է ոչ միայն մինչև վերջնական դատավճիռ օրինական ուժի մեջ մտնելն անձին անմեղ համարելու ելակետային սկզբունքը, այլև՝ խափանման միջոցին հաղորդում որոշակի պատժի տարրեր, ինչով խախտվում են անմեղության կանխավարկածի պահպանման երաշխիքները: Դատավորի նման վարքագիծը խոչընդոտ է մինչդատական վարույթում կալանավորման անհիմն կիրառման դեպքերի հնարավորինս բացառման տեսանկյունից¹⁶:

Ինչպես երևում է՝ կալանքի չարաշահմամբ կիրառումը, այն է՝ չափազանց հաճախ, անհիմն և, ամենակարևորն է՝ սխալ պատճառներով կիրառությունը, թերևս, լուրջ խնդիրներ է առաջացնում: Քաղաքացիական և քաղաքա-

կան իրավունքների մասին միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ Հայաստանի առաջին զեկույցում (1998թ.) առաջ քաշվեց մինչդատական կալանքի վրա չափազանց շատ հենվելու խնդիրը¹⁷: 1998 թ. մինչև 2010 թ., կարելի է ասել, որ այս խնդրի լուծմանն ուղղված որևէ քայլ չի կատարվել, հակառակը՝ աճել են կալանքի անհարկի և որպես պատժի միջոց կիրառման դեպքերը: Հեղինակավոր «Penal Reform International» (PRI) ՀԿ-ն իր 2012 թ. համապարփակ զեկույցում փաստարկել է, որ 2005-2010 թթ. ժամանակահատվածում Հայաստանում կալանքը կիրառվել է չափազանց շատ և անհարկորեն¹⁸:

2013 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու 3172 միջնորդություն, որոնցից 3011-ը բավարարվել է, իսկ 153-ը՝ մերժվել, 8-ը թողնվել է առանց քննության¹⁹: 2014 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու 2331 միջնորդություն, որոնցից 2203-ը բավարարվել է, 122-ը՝ մերժվել, իսկ 6-ը՝ առանց քննության²⁰: 2015 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու 2452 միջնորդություն, որոնցից 2263-ը բավարարվել է, 11-ը բավարարվել է մասնակի, 154-ը՝ մերժվել, իսկ 24-ը թողնվել է առանց քննության²¹: 2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու 3172 միջնորդություն, որոնցից 3011-ը բավարարվել է, իսկ 153-ը՝ մերժվել, 8-ը թողնվել է առանց քննության²¹: 2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու 2452 միջնորդություն, որոնցից 2263-ը բավարարվել է, 11-ը բավարարվել է մասնակի, 154-ը՝ մերժվել, իսկ 24-ը թողնվել է առանց քննության²¹: 2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու 2452 միջնորդություն, որոնցից 2263-ը բավարարվել է, 11-ը բավարարվել է մասնակի, 154-ը՝ մերժվել, իսկ 24-ը թողնվել է առանց քննության²¹:

¹³ Տե՛ս խափանման միջոցների կիրառման առանձնահատկությունները ըստ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (Պետություն և իրավունք, թիվ 1 (59), 2013), Դ. Մելքոնյան:

¹⁴ Տե՛ս Լատվիայի քրեական դատավարության օրենսգրք, հոդված 244:

¹⁵ Տե՛ս ՔՀԻ նախագահ, Ա. Կիրակոսյանի բաց նամակը ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյանին, Երևան, 21 հոկտեմբերի 2016 թ. Available at: www.hra.am Անկախություն և անձեռնմխելիություն | Մարդու իրավունքները փակ հաստատություններում:

¹⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 23 հուլիսի 2010 թվականի Ա. Առաքելյանի գործով թիվ ԵԿԴ/0580/06/09 որոշման, 22-26 կետերը:

¹⁷ Տե՛ս UNHRC, Concluding Observations of the Human rights Committee, Armenia, U.N. Doc. CCPR/C/79/Add.100 (1998), para. 11.

¹⁸ Տե՛ս Penal Reform International, Pre-Trial Detention and its alternative in Armenia, (2013). Available at: <http://www.penalreform.org/wp-content/uploads/2013/05/Armenia-Report-PTD-alternatives-ENG.pdf> (accessed 14 November, 2015):

¹⁹ Տե՛ս http://www.court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=3

²⁰ Տե՛ս http://www.court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

²¹ Տե՛ս <http://www.court.am/?l=lo&id=279>

ռելու 1290 միջնորդություն, որոնցից 1197-ը բավարարվել է, 4-ը բավարարվել է մասնակի, 82-ը՝ մերժվել, իսկ 7-ը թողնվել է առանց քննության²²:

Վերոհիշյալ վիճակագրական տվյալների բազկակողմանի ուսումնասիրությունից հետևում է, որ պահպանվել է կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման հաճախությունը: Հանրային ընկալումը հետևյալն է. կալանքը որպես խափանման միջոց ՀՀ-ում լայնատարած է, և դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դատարանները բավարարում են կալանքի մասին քննիչների գրեթե բոլոր միջնորդությունները²³: Մինչդեռ տական կալանքի կիրառման պրակտիկայում այս խնդրի առկայությունը նախ և առաջ պայմանավորված է կալանքի իրական այլընտրանքային խափանման միջոցների բացակայությամբ: Բանտային վիճակագրությունների միջազգային կենտրոնը պարբերաբար բանտային վիճակագրություն է հրապարակում պետությունների և տարածքների վերաբերյալ՝ «World Prison Brief Online» խորագրով: Այդ տվյալներով՝ կալանքի տակ պահվողների թիվը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ընդհանուր թվի մեջ կազմում է շուրջ 26,4%:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ կալանավորման՝ օրենքով չնախատեսված հիմքերով կիրառումը խախտում է ոչ միայն անմեղության կանխավարկածի սկզբունքը, այլև՝ բացասական հետևանքներ առաջացնում թե՛ կալանավորվածի և թե՛ ողջ հասարակության համար: Այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը կիրառվում է ոչ հիմնավոր, որպես արդյունք՝ նաև որպես պատժի միջոց, անձը, ժամանակի ընթացքում ընկնելով քրեական ենթամշակույթի ազդեցության

տակ, սկսում է դրսևորել այնպիսի վարքագիծ, որով նա փորձում է ապացուցել իր մեղավորությունը միայն այն պատճառով, որ ստեղծվի կարծեցյալ համաչափություն իր «մեղավորության» և բուն կալանքի միջև:

Կալանքը հիմնավորող չպատճառաբանված որոշումների նվազմանը նպաստող հանգամանքներից խոսելիս պետք է անդրադառնալ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի զարգացմանը, ինչպես նաև օրենսդրական համապատասխան փոփոխություններին: Մասնավորապես՝ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակելիս առաջնահերթ խնդիրներից է եղել կալանքի կիրառման հարցի լուծումը: Նախագծով նախ և առաջ ընդլայնվել է կալանքին այլընտրանք համարվող խափանման միջոցների ցանկը: Միաժամանակ՝ հնարավորինս հստակեցվել են խափանման միջոցի կիրառման պայմանները և ընթացակարգերը՝ անհիմն կալանավորման և կալանքը որպես պատժի միջոց կիրառելու դեպքերը բացառելու համար: Նախագծում նախատեսվել են միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառված և իրենց արդյունավետությունը ապացուցված խափանման միջոցները, մասնավորապես՝ տնային կալանքը և վարչական վերահսկողությունը: Հստակեցվել են նաև խափանման միջոցի կիրառման հիմքերը՝ նպատակ ունենալով դրանք ամբողջովին համապատասխանեցնել Կոնվենցիայի 5-րդ հոդվածին:

Եզրափակելով՝ հարկ է նշել, որ օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում կատարվող փոփոխությունները կարող են հնարավորինս նվազեցնել կալանքի անհիմն կիրառման դեպքերը:

²² Տե՛ս <http://www.court.am/?l=lo&id=349>

²³ Տե՛ս Հայաստանի դատական դեպարտամենտի տարեկան զեկույցի տվյալներով՝ 2014 թվականներին դատարանները ստացել են ՄԴԿ կիրառելու մասին 2331 միջնորդություն, որոնցից բավարարել են 2203-ը (94,5%) և մերժել են 122-ը (5,5%): Բավարարված միջնորդությունների թիվն էլ ավելի բարձր է եղել՝ նախկին տարիներին՝ հասնելով 99,5%-ի և 96%-ի:

ՆԱՐԵԿ ՄԻՆԱՅԱՆ

«Նստիկանության ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների բաժնի տեսուչ, «Գլաժոր» համալսարանի ասպիրանտ

«ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱԴՆԳՈՒՄ» ԵՎ «ՄԵՂԱԴՐԱՆՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քրեական հետապնդումն ամենաբազմեզր կատեգորիաներից է քրեական դատավարությունում¹: Դա քրեական դատավարության և գործառույթն է, որի իրականացումը վերապահված է դրա համար հատուկ լիազորված պաշտոնատար անձանց, և դատավարական գործողությունների համակարգը՝ ուղղված համապատասխան հանցագործությունները կատարելու մեջ մեղավոր անձանց բացահայտմանը: Սակայն այդ ամենով չի ավարտում նշյալ հասկացության բովանդակությունը, որն ավելին է, քան և քրեական դատավարության գործառույթը, և դատավարական գործողությունների համակարգը: Քրեական հետապնդում ասելով՝ պետք է հասկանալ նաև քրեական դատավարության ինստիտուտը:

Քրեական դատավարության ինստիտուտներին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- 1) քրեական դատավարության ինստիտուտները կազմող այլ ընթացակարգերից ունեցած հարաբերական տարանջատությունը,
- 2) միասնականությունը, որն ապահովվում է միասնական, օրենքով սահմանված նպատակով,
- 3) հատուկ սուբյեկտների առկայությունը, որոնց վերապահվում է համապատասխան դատավարական գործողություններ իրականացնելը,
- 4) համապատասխան դատավարական գործողություններ կազմակերպելու և կատարելու միասնական սկզբունքների առկայությունը,

5) նորմերի միասնականությունը, որոնք օրենսդրորեն ամրագրում են քրեական դատավարության համապատասխան ինստիտուտը կազմող դատավարական գործողությունները:

Վերոթվարկյալ բոլոր հատկանիշները, որոնք հատուկ են քրեական դատավարության ինստիտուտին, բնորոշ են նաև քրեական հետապնդմանը: Այսպես՝ միանգամայն ակնհայտ է քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողությունների որոշակի տարանջատությունն այն դատավարական գործողություններից, որոնք ուղղված են, օրինակ, մեղադրանքից պաշտպանվելուն: Բոլոր այդ դատավարական գործողությունների միասնությունը ապահովվում է այն հանգամանքով, որ դրանք պահպանում են որոշակի գործողությունների հաջորդականությունը՝ ուղղված համապատասխան հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձանց բացահայտմանը: Վերևում արդեն նշել ենք այն հատուկ սուբյեկտներին, ում քրեադատավարական օրենքը իրավունք է տալիս և պարտականություն սահմանում իրականացնելու քրեական հետապնդում: Նրանց թվում են, առաջին հերթին՝ դատախազը, քննիչը և հետաքննիչը: Կան նաև սկզբունքներ, որոնք միավորում են բոլոր դատավարական գործողությունները քրեական հետապնդման միասնական համակարգի մեջ: Դրանց թվում են օրինականությունը, արդարացիությունը և նպատակահարմարությունը: Քրեական հետապնդումը կազմող բոլոր դատավարական գործողությունները կարգավոր-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

¹ Синельников А.В. Термин “уголовное преследование” как законодательная категория и научное понятие // Вестник Волгоградского государственного университета. Научно-теоретический журнал.– Волгоград: Изд-во ВолГУ, 2003, Вып. 6.– էջ 118-123:

վում են քրեադատավարական օրենսդրության համապատասխան նորմերով, որոնք իրենց հերթին միավորված են միասնական համակարգում: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 4-րդ գլուխն անվանված է «Քրեական հետապնդումն ու դրա տեսակները» և միավորում է քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողությունները կարգավորող նորմերը:

Դրա հիման վրա քրեական հետապնդումը պետք է սահմանել որպես քրեական դատավարության ինստիտուտ²: Ըստ այդմ՝ քրեական հետապնդում ասելով՝ պետք է հասկանալ քրեադատավարական ինստիտուտը, որը միավորում է դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են հատուկ սուբյեկտները՝ դրա համար լիազորված պաշտոնատար անձինք՝ ուղղված համապատասխան հանցագործությունները կատարելու մեջ մեղավոր անձանց բացահայտմանը³: Ընդ որում՝ պետք է ուշադրություն դարձնել, որ նշյալ դատավարական գործողությունները կատարվում են միասնական, քրեական հետապնդմանը բնորոշ սկզբունքների համաձայն և կարգավորվում են քրեադատավարական օրենքի նորմերով, որոնք աչքի են ընկնում միասնականությամբ և անխզելի ամբողջականությամբ:

Սակայն նույնիսկ այդ, առաջին հայացքից սպառնիչ սահմանումը չի տալիս բազմաթիվ հարցերի պատասխաններ առ այն, թե ինչ է քրեական հետապնդումը: Բավականին հաճախ են դա նույնացնում մեղադրանքի հետ: Երբեմն, թեև տարբերում են այդ երկու հասկացությունը, սակայն չեն կարողանում տեսնել դրանց սահմանագծերը, որոնցով կարողանան դրանք տարբերակել: Եվ դա լիովին բացատրելի է: Չէ՞ որ պատմականորեն այդ հասկացությունները մոտ էին իրար: Ավելին՝ եղել են պատմական ժամանակաշրջաններ, երբ քրեական հետապնդումն ու մեղադրանքը համարվել են նույն բանը: Մասնավորապես՝

դա բնորոշ էր և՛ հայցային տիպի, և՛ ինկվիզիցիոն քրեական դատավարությանը:

Քրեական հետապնդման և մեղադրանքի նույնացումը բնորոշ էր նաև Ռուսաստանյան կայսրությանը: Այսպես՝ կիրառվում է «դատական հետապնդում» հասկացությունը որպես «մեղադրանք» հասկացության հոմանիշ: Խորհրդային իշխանության առաջին տարիներին քրեադատավարական օրենսդրությունում նախկինի պես կիրառվում էին և՛ «դատական հետապնդում», և՛ «մեղադրանք» հասկացությունները: Հետագայում՝ 1921թ. ՌՖՍՍՀՄ քր. դատ. օր-ում «դատական հետապնդում» հասկացություն այլևս չէր գործածվում: Միայն 2001 թ. ՌԴ քր. դատ. օր-ի ընդունմամբ «մեղադրանք» հասկացության հետ սկսեց գործածվել «քրեական հետապնդում» հասկացությունը: Նույնը բնորոշ էր նաև Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությանը: Դրան նախորդել էին նման հասկացության անհրաժեշտության վերաբերյալ տևական բանավեճերը⁴:

Այդ ամենը, բնականաբար, արտացոլվել է դրա՝ և՛ որպես քրեական հետապնդման, և՛ որպես մեղադրանքի ըմբռնման վրա: Առաջացել է երկու տեսակետ. մեկը դիտում է դրանք որպես նույնական հասկացություններ, մյուսը՝ որպես տարբեր, թեպետ և՛ մոտ: Այդ տեսակետների իրավացիության մասին հետևություն անել հնարավոր է միայն՝ այդ երկու հասկացության բովանդակությունները համադրելով: Ավելին՝ մեղադրանքը խորությամբ հասկանալն անհնար է՝ առանց համադրելու քրեական հետապնդման հետ: Միայն այդ դեպքում է հնարավոր ոչ միայն տեսնել այդ երկու հասկացության տարբերությունները, այլև ավելի խորությամբ հասկանալ մեղադրանքի էությունն ու բնույթը: Իսկ դա իր հերթին կարող է նպաստել քրեական դատավարությունն ավելի խորությամբ ընկալելուն, քանի որ մեղադրանքը, ըստ էության, դրա առանցքն է: Ինչպիսի են հարա-

² Кузнецов А.А. Институт уголовного преследования по действующему законодательству // Юридическое лицо как субъект гражданско-правовой и уголовной ответственности и обеспечение ГИБДД условий реализации отдельных видов ответственности: сборник статей.– Орел: ОрЮИ МВД России им. В.В. Лукьянова, 2013.– էջ 147-155:
³ Мазюк Р.В. Институт уголовного преследования в системе институтов российского уголовного судопроизводства // Сибирский юридический вестник.– Иркутск: Изд-во Иркут. Гос. ун-та, 2012, №2.– էջ 139-144:
⁴ Шуваткин А.В. Уголовное преследование в законодательстве и уголовно-процессуальной науке России: история и современность // Проблемы развития уголовно-процессуального законодательства на современном этапе. Сборник научных статей.– Самара: Изд-во «Самарский университет», 2002.– էջ 165-172:

բերակցվում քրեական հետապնդումն ու մեղադրանքը: Սա հարց է, որին ճիշտ պատասխանելը կերաշխավորի քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովումը քրեական դատավարությունում:

Միանգամայն ակնհայտ է, որ քրեական հետապնդումն ու մեղադրանքը հումանիզներ չեն, ոչ էլ նույնական հասկացություններ են, թեև դրանց հումանիզ լինելու վերաբերյալ տեսակետին էին հակված քրեական դատավարության տեսության մի շարք հայտնի մասնագետներ, ինչպես օրինակ՝ Ի. Յա. Ֆոյնիցկին⁵, Մ. Ս. Ստրոգովիչը⁶: Շատ հավանական է, որ հենց նրանց գաղափարների ազդեցությամբ Խորհրդային Միության քրեադատավարական օրենսդրությունը չէր կիրառում «քրեական հետապնդում» հասկացությունը: Եթե «քրեական հետապնդումը» նույն հասկացությունն է, ինչ «մեղադրանքը», ապա ինչ իմաստ ունի միաժամանակ կիրառել երկու հասկացությունն էլ, եթե կարելի է բավարարվել մեկով: Այդ ժամանակահատվածում քրեադատավարական օրենքն օգտագործում էր միայն «մեղադրանք» հասկացությունը:

Սրանից զատ՝ գոյություն ունեն և այլ տեսակետ, ըստ որի՝ «քրեական հետապնդումը» և «մեղադրանքը» ոչ միայն չհամընկնող հասկացություններ են, այլև դրանցից մեկն ավելի լայն բովանդակություն ունի⁷: Այսպես՝ քրեական հետապնդումը դիտվում էր որպես ավելի լայն հասկացություն, իսկ մեղադրանքը՝ լոկ որպես քրեական հետապնդման տեսակներից մեկը: Այս տեսակետի տրամաբանությունը միանգամայն հասկանալի է և հիմնված է ոչ միայն տեսական մտահանգումների, այլև քրեական գործերի նախնական քննության և դատական քննության պրակտիկայի ընդհանրացման վրա: Հենց պրակտիկայի տեսանկյունից ակներև է, որ իրավունքների խախտումը հաճախ սկսվում

է շատ ավելի վաղ, քան կոնկրետ անձին մեղադրյալ ճանաչելը: Դեռ նախքան քրեական գործ հարուցելը (ընդ որում՝ նույնիսկ այն դեպքում, եթե գործը հարուցված է հանցակազմի հատկանիշներով, այլ ոչ թե կոնկրետ անձի նկատմամբ) պաշտոնատար անձինք առաջնորդվում են ենթադրություններով, թե ո՞վ է մեղավոր հանցագործության մեջ և, համապատասխանաբար, գործողություններ են իրականացնում այդ անձի նկատմամբ՝ բացահայտելու նրա մեղավորությունը: Այսինքն՝ այստեղ առկա է քրեական հետապնդում, այն դեպքում, երբ մեղադրանք դեռ չի առաջադրվել:

Նշյալ տեսակետներից երկրորդն արտացոլված է նաև ներկայումս գործող քրեադատավարական օրենսդրությունում: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության գործող քր. դատ. օր-ում նշյալ հասկացությունը կիրառվում է: Ավելին՝ դրան է նվիրված ՀՀ քր. դատ. օր-ի ամբողջ 4-րդ գլուխը, ինչը թույլ է տալիս պնդել, որ քրեական հետապնդումը քրեական դատավարության ինստիտուտ է:

Չնայած քրեական հետապնդումը որպես քրեական դատավարության ինքնուրույն ինստիտուտ ճանաչելուն, նախկինի պես նշյալ հասկացությունն ամենաչմշակվածներից է, ուստի և ամենավիճելիներից: Այսպես՝ որոշակիորեն չի սահմանվել քրեական դատավարությանը դասվելիք դատավարական գործողությունների ցանկը⁸: Օրենսդրությունում չկա նորմ, որի վրա հենվելով՝ հնարավոր լինեն սահմանել այն չափորոշիչները, որոնցով տարբերվում են քրեական հետապնդումն ու մեղադրանքը: Սա հանգեցնում է խնդիրների առաջացմանն արդարադատության մարմինների գործունեության պրակտիկայում, որոնք արտացոլվում են քրեական դատավարության ոլորտում հայտնված քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխիքների վրա:

⁵ Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. 1 / Общ. ред., послесл., прим.: Смирнова А.В.– С.-Пб.: Альфа, 1996.– էջ 254-258:

⁶ Строгович М.С. Избранные труды: Проблемы общей теории права. В 3-х томах. Т. 1.– М.: Наука, 1990.– էջ 151-154:

⁷ Мазюк Р.В. О соотношении понятий “обвинение” и “уголовное преследование” в российском уголовном судопроизводстве // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе: Сборник материалов XIII международной научно-практической конференции (18-19 февраля 2010 г.): в 3 ч.– Красноярск: СибЮИ МВД России, 2010, Ч. 2.– էջ 111-115:

⁸ Лукожев Х.М. Понятие “обвинение” и “уголовное преследование” по УПК РФ // Проблемы теории и практики уголовного процесса: история и современность.– Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 2006.– էջ 426-430:

Նշյալ խնդիրները լուծելու համար հարկավոր է ոչ միայն բացահայտել նշյալ երկու հասկացության բովանդակությունը, այլև համադրել դրանք, վեր հանել դրանց նմանություններն ու տարբերությունները: Այսպես՝ քրեական հետապնդման ու մեղադրանքի անվիճելի նմանությունն այն է, որ երկուսն էլ ենթադրում են այնպիսի դատավարական գործողությունների իրականացումը, որոնք սահմանափակում են այն անձանց իրավունքներն ու ազատությունները, որոնց նկատմամբ կիրառվում են: Դրանք հետապնդում են մեկ նպատակ՝ բացահայտել հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձին: Իրականացվում են միայն քրեական դատավարության այն սուբյեկտների կողմից, ովքեր պաշտոնատար անձինք են և, ըստ այդմ՝ օժտված են որոշումներ ընդունելու միանգամայն հստակ լիազորություններով⁹: Բացի այդ՝ և քրեական հետապնդմանը, և մեղադրանքին բնորոշ է այն, որ դրանք ուղղված են ընդդեմ այն անձանց, ովքեր հիմնավոր կերպով ենթադրվում են որպես հանցագործություն կատարելու մեջ մեղավորներ: Այս ամենը վկայում է քրեական հետապնդման և մեղադրանքի բնույթների նմանության մասին:

Սակայն հետապնդումը և մեղադրանքն ունեն առանձնահատուկ գծեր, որոնցով դրանք տարբերվում են:

1) Մեղադրանքը ուժի մեջ է մտնում համապատասխան դատավարական փաստաթղթի՝ որպես մեղադրյալ ներգրավման որոշման ընդունման պահից (<< քր. դատ. օր-ի 202 հոդվածի 2-րդ մաս): Միևնույն ժամանակ՝ քրեադատավարական օրենսդրությունում քրեական հետապնդում իրականացնելու սկզբնաժամկետը սահմանված չէ: Բայց սկնհայտ է, որ մեկնարկում է ավելի վաղ, քան որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելը:

2) Այն անձանց շրջանակը, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, շատ ավելի լայն է, քան այն անձանց, ում նկատմամբ առաջադրվում է մեղադրանք: Այսպես՝ մեղադրանք առաջադրվում է միայն մեղադրյա-

լի նկատմամբ: Քրեական հետապնդում իրականացվում է ոչ միայն մեղադրյալի, այլև կասկածյալի և ամբաստանյալի նկատմամբ: Ավելին՝ դա կարող է իրականացվել նաև այն անձանց նկատմամբ, ում մասնակցությունը հանցագործությանը հետագայում չի հաստատվել, հետևաբար և՛ նրանց վերաբերյալ չի կայացվել որոշում՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

3) Իր ծավալով քրեական հետապնդումն ավելի լայն է, քան մեղադրանքը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մեղադրանքը ենթադրում է դատավարական գործողությունների իրականացում միայն մեղադրյալի նկատմամբ, իսկ քրեական հետապնդումը՝ անձանց ավելի լայն շրջանակի նկատմամբ, ինչի մասին վերևում խոսել ենք:

Մեղադրանքը՝ որպես կոնկրետ անձի մեղավորությանն առաջադրվող թեզ, այսինքն՝ դրա նյութական-իրավական ասպեկտ, հաճախ դիտվում է որպես քրեական հետապնդման արդյունք, որպես դատավարական գործողությունների համակարգ: Եվ դա լիովին արդարացված է, քանի որ կոնկրետ անձի մեղավորության վերաբերյալ հետևություն անելու, Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով, մասով, կետով նրա գործողությունները որակելու համար անհրաժեշտ է իրականացնել զգալի ծավալով աշխատանք այդ անձին մերկացնելու ուղղությամբ: Այսինքն՝ մեղադրանքը դառնում է այդ ամբողջ աշխատանքի յուրատեսակ արդյունքը, որը նյութականացվում է մեղադրյալին առաջադրված մեղադրանքով:

Սակայն դա ճիշտ է նաև մեղադրանքի՝ որպես դատավարական գործողությունների համակարգի առումով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մերկացումը՝ որպես միանգամայն որոշակի անձին մերկացնող ապացույցներ հավաքելուն ուղղված գործունեություն, անցնում է մի շարք փուլեր: Կարելի է խոսել մերկացնելուն ուղղված գործունեության զարգացման որոշակի դիալեկտիկայի մասին ամբողջ քրեական դատավարության ընթացքում¹⁰:

⁹ Неретин Н.Н. К вопросу о соотношении сущности понятий уголовного преследования и обвинения в уголовном судопроизводстве России // Уголовное судопроизводство. – М.: Юрист, 2008, №3. – էջ 23-24:

¹⁰ Пушкарева А.В. Становление подозрения и обвинения как этапов уголовного преследования в отечественном уголовном процессе // Закон и право. – М.: ЮНИТИ-ДАНА, 2013, №1. – էջ 84-86:

Այդ դիալեկտիկայի էությունն այն է, որ քրեական հետապնդման սուբյեկտը կոնկրետ անձի մեղավորությունը պարզելիս շարժվում է կատարված հանցագործությանն այդ անձի հանցակցության վերաբերյալ անվստահ ենթադրությունից դեպի նրա մեղավորության մեջ համոզվածություն: Ըստ այդմ՝ մեղադրանքը դատավարական առումով կարելի է բնութագրել որպես քրեական հետապնդման փուլ, երբ քննիչը, հենվելով իր տրամադրության տակ եղած ապացույցների վրա, արդեն որոշակի վստահությամբ արձանագրում է կոնկրետ անձի մեղավորությունը հանցագործություն կատարելու մեջ: Ընդ որում՝ հարկ է նշել, որ մեղադրանք առաջադրելու փուլում քննիչի համոզվածությունը կոնկրետ անձի մեղավորության մեջ այնքան ամուր չէ, որ նա կարիք չզգա լրացուցիչ ստուգումների ու գնահատականի:

Դրանով իսկ և՛ քրեական հետապնդումը, և՛ մեղադրանքը՝ որպես դատավարական գործողությունների համակարգ, անմիջականորեն կապված են ապացուցման գործընթացի հետ: Այս տեսանկյունից՝ մեղադրանքն ու քրեական հետապնդումն ունեն և՛ նմանություններ, և՛ տարբերություններ:

Նմանությունն այն է, որ քրեական հետապնդման և մեղադրանքի յուրահատկություններից մեկը որոնողական գործունեությունն է՝ ուղղված կոնկրետ անձին մերկացնող ապացույցներ հայտնաբերելուն և քրեական գործին կցելուն: Ընդ որում՝ այդ գործունեության մեջ կարևոր պահ է հավաքված ապացույցներից համակարգ կառուցելը, ինչը թույլ է տալիս ոչ միայն վերականգնել կատարված հանցագործության հանգամանքները, այլև համոզել, որ այդ հանգամանքերին, ինչպես նաև ամբողջ հանցագործությանը մասնակից է համապատասխան մեղավոր անձը:

Այսինքն՝ քրեական հետապնդումը, ինչպես և մեղադրանքը, դատավարական գործունեություն է, որն ուղղված է քրեական դատավարության մյուս մասնակիցներին, առաջին

հերթին՝ դատարանին կոնկրետ անձի մեղավոր լինելու մեջ համոզելուն¹¹: Իսկ դրան հասնել հնարավոր է ոչ միայն համապատասխան ապացույցներ ձեռք բերելով, այլև դրանցից այնպիսի համակարգ ձևավորելով, որը կարողանա համոզել դատարանին կոնկրետ անձի դեմ առաջադրված մեղադրանքների հիմնավորված լինելու մեջ:

Ապացուցման գործընթացի տեսանկյունից ևս քրեական հետապնդման և մեղադրանքի միջև առկա են ոչ միայն նմանություններ, այլև տարբերություններ: Դրանցից հիմնականն այն է, որ քրեական հետապնդումն ընդգրկում է ոչ միայն դատավարական գործողությունները, այլև օպերատիվ-որոնողական միջոցառումները, որոնց իրականացման արդյունքների հիման վրա ընդունվում են որոշումներ, որոնք այսպես թե այնպես սահմանափակում են այն անձանց իրավունքներն ու ազատությունները, ում նկատմամբ կիրառվում են: Ինչ վերաբերում է մեղադրանքին՝ դա հիմնվում է միայն ապացույցների վրա, ուստի և ներառում է միայն դատավարական գործողությունները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մեղադրանքը հանգեցնում է հիմնավոր կերպով մեղավոր լինելու մեջ կասկածվող համապատասխան անձի իրավունքների ավելի մեծ չափով խախտմանը:

Վերոշարադրյալից կարող ենք եզրակացնել, որ քրեական հետապնդումը և մեղադրանքը ապացուցման գործընթացի շրջանակներում հարաբերվում են իրար հետ որպես գործունեության տեսակներ՝ ուղղված կոնկրետ անձի մեղավորությունը հիմնավորելուն և դրանում դատարանին՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի համոզելուն¹²: Դրանով իսկ մեղադրող կողմը ձգտում է, որ դատարանն ընդունի իր մեղադրական թեզը՝ դնելով վերջինս համապատասխան մեղադրական դատավճռի հիմքում:

Հանդես գալով որպես պաշտպանական կողմին ընդդիմացող քրեական դատավարու-

¹¹ Мазюк Р.В. О понятии “изобличение” как критерии уголовного преследования // Международные юридические чтения. Материалы ежегодной международной научно-практической конференции (14 апреля 2005 г.). – Омск: Изд-во Омск. юрид. ин-та, 2005, Ч. 5.– էջ 26-30:

¹² Шестакова С.Д. К вопросу о правовом регулировании уголовно-процессуального доказывания как способа осуществления уголовного преследования // Криминалистический вестник.– С.-Пб.: Изд-во С.-Петербург. юрид. ин-та Генеральной прокуратуры РФ, 2003, Вып. 3.– էջ 19-24:

թյան գործառույթ՝ քրեական հետապնդումը բնութագրվում է որպես շարժիչ ուժերից մեկը, որի միջոցով իրականացվում է մրցակցության սկզբունքը քրեական դատավարությունում: Առանց լիարժեք քրեական հետապնդման չի կարելի խոսել մրցակցության մասին քրեական դատավարությունում, հետևաբար և՛ դատարանի կայացրած որոշումներում արդարության հասնելու հնարավորության մասին: Նույնը կարելի է ասել և մեղադրանքի վերաբերյալ: Եվ դրանում քրեական հետապնդումը մեղադրանքի հետ անվիճելի նմանություն ունի: Դրանք մարմնավորում են քրեական դատավարության այն մեխանիզմները, այն ընթացակարգերը, որոնք ապահովում են արդարադատության գործունեությունը՝ որպես հատուկ տիպի գործունեություն, որն ուղղված է արդար դատական որոշումներ կայացնելուն:

Ընդ որում՝ քրեական դատավարությունը ևս, ինչպես մեղադրանքը, հետապնդում է ոչ միայն ճշմարտությունը պարզելու նպատակ, որի միջոցով կարող է բացահայտվել հանցագործությունը կատարելու մեջ մեղավոր համապատասխան անձը, այլև պաշտպանելու այն անձանց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, ովքեր տուժել են տվյալ հանցագործությունից: Հենց այդ պատճառով էլ և՛ քրեական հետապնդումը, և՛ մեղադրանքը ենթադրում են դատավարական գործողությունների իրականացում, որոնք կանխում են համապատասխան անձի հետագա հանցավոր գործունեությունը, ինչպես նաև նրա ոչ իրավաչափ ներգործությունը քրեական դատավարության այլ մասնակիցների՝ ներառյալ տուժողի վրա: Այսինքն՝ և՛ քրեական հետապնդումը, և՛ մեղադրանքն օժտված են համապատասխան անձի հետագա հանցավոր գործունեությունը և նրա կողմից տուժողի նկատմամբ անօրինական ներգործության հնարավորությունը կանխելու հատկությամբ: Այլ կերպ ասած՝ քրեական հետապնդումը և մեղադրանքը նաև կատարված հանցագործությունից տուժած անձանց իրավունքների ու օրինական շահերի

պաշտպանությանն ուղղված միջոցների համալիր են:

Բացի այդ՝ ինչպես մեղադրանքը, քրեական հետապնդումը ևս նաև նոր հանցագործությունների կանխազգուշացման միջոց է: Սահմանափակելով կատարված հանցագործության մեջ ենթադրաբար մեղավոր անձանց իրավունքներն ու ազատությունները՝ դատավարական գործողությունները հնարավորություն չեն տալիս այդ անձանց շարունակելու իրենց հանցավոր գործունեությունը¹³: Հանցավոր գործունեությունը կանխելը լինում է ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն: Ուղղակի է այն դեպքում, երբ ենթադրաբար մեղավոր համապատասխան անձի իրավունքներն ու ազատություններն այնքան խիստ են սահմանափակվում, որ դրա պատճառով նա այլևս չի կարողանում շարունակել իր հանցավոր գործունեությունը: Օրինակ՝ երբ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվում կալանավորումը: Միևնույն ժամանակ՝ հնարավոր է նաև քրեական հետապնդման ու մեղադրանքի անուղղակի ներգործությունը նշյալ անձի վրա: Դա դրսևորվելիս նշյալ անձը, հասկանալով, որ հանցավոր գործունեությունը շարունակելը կբացահայտի իր՝ հանցագործություն կատարած լինելը, դադարեցնում է այդ հանցավոր գործունեությունը:

Ասվածը վկայում է առաջին հերթին «քրեական հետապնդում» և «մեղադրանք» հասկացությունների սահմանակից լինելու մասին: Ըստ այդմ՝ կարելի է եզրակացնել, որ դրանք միանգամայն որոշակիորեն հարաբերակցվում են իրար հետ: Ընդ որում՝ հարաբերակցվում են ինչպես ընդհանուրը մասնավորի հետ: Որպես ընդհանուր հանդես է գալիս քրեական հետապնդումը, իսկ որպես մասնավոր՝ մեղադրանքը: Դա կապված է նախ և առաջ այն իրողության հետ, որ մեղադրանքի ներառած դատավարական գործողությունների ծավալն զգալիորեն նեղ է, քան այն, որ ներառում է քրեական հետապնդումը:

«Քրեական հետապնդում» և «մեղադրանք»

¹³ Поликарпов Б.А. Сравнительная характеристика уголовно-процессуальных мер, способствующих предупреждению и преодолению противодействия уголовному преследованию в Российской Федерации и Китайской Народной Республике // Сравнительное правоведение в странах Азиатско-Тихоокеанского региона-IV: материалы международной научной конференции молодых ученых, аспирантов и студентов (г. Улан-Удэ, 13 апреля 2012 г.). – Улан-Удэ: Изд-во Бурят. ун-та, 2012. – էջ 261-264:

հասկացությունների հետագա համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ մեղադրանքը քրեական հետապնդման տեսակներից է: Ըստ այդմ՝ մեղադրանքի ներառած բոլոր դատավարական գործողությունները ևս կազմում են քրեական հետապնդումը: Միևնույն ժամանակ՝ քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողությունների մի ամբողջ խումբ չի կարող դիտվել որպես մեղադրանքի տարր: Իհարկե, դա նշյալ խումբը բնորոշելու խնդիր է առաջացնում, սակայն ներկա հետազոտության համար նշյալ փաստը կարևոր է միայն որպես փաստարկ, որը հաստատում է, որ մեղադրանքը քրեական հետապնդման տեսակներից մեկն է:

Ի հաստատումն ասվածի՝ նշենք, որ այն պահը, որից սկսվում է քրեական հետապնդումը, և պահը, որից սկսվում է մեղադրանքը, տարբեր են¹⁴: Քրեական հետապնդման մեկնարկի պահը թեև համարվում է քրեական գործ հարուցելը, սակայն առկա են բոլոր հիմքերը՝ համարելու դա առաջին դատավարական գործողություններն իրականացնելու պահը, որով սահմանափակվում են համապատասխան հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի իրավունքներն ու ազատությունները: Այսպես, օրինակ՝ հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում անձին բերման և անձնական խուզարկության ենթարկելը (<< քր. դատ. օր-ի հոդված 180, մաս 2-րդ), որի վերաբերյալ << Վճռաբեկ դատարանը Գագիկ Միքաելյանի վերաբերյալ գործով. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա գտնում է, որ բերվածի իրավական վիճակը համապատասխանում է «քրեական մեղադրանքի» ներկայացման Կոնվենցիոն պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմամբ: Ուստի, բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով.

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է << Սահմանադրության

16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից),

բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է << Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից),

գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է << Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից),

դ) լռելու (բխում է << Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից):

Համապատասխանաբար, քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ապահովել բերվածի իրավունքների իրականացումը՝ բերվածի իրավունքները գրավոր պարզաբանելու, նրան առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռելու, բերվածի փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով:

Այնքանով, որքանով վերաբերելի են (*mutatis mutandis*), սույն կետում ամրագրված նվազագույն իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, ովքեր կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է, կամ իրենք ազատությունից զրկված են, և, միաժամանակ՝ որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ»:

Ակնհայտ է, որ այդ պահը ժամկետների առումով զգալիորեն առաջ է մեղադրանքի առաջադրման պահից: Ինչ վերաբերում է մեղադրանքի սկզբնավորմանը՝ այդ պահը բավականին հստակորեն սահմանված է քրեադատավարական օրենքում և կապված է որպես մեղադրյալ ներգրավելու որոշում ընդունելու հետ (<< քր. դատ. օր-ի 202 հոդվածի 2-րդ մաս):

Քրեական հետապնդման մեկնարկը և մեղադրանքի մեկնարկը որոշելու հարցում տարբեր մոտեցումները պայմանավորված են այն հանգամանքով, որ մեղադրանք առաջադրելը կապված է կատարված հանցագործության մեջ կասկածվող անձի՝ մեղադրյալի կարգավիճակ

¹⁴ Бравилова Е.А. Момент начала осуществления уголовного преследования // Правоохранительные органы: теория и практика.– Екатеринбург: Изд-во Урал. юрид. ин-та МВД России, 2013, №1.– էջ 67-69.

և, համապատասխանաբար, իրավունքներ ձեռք բերելու հետ, որոնցով օժտվում է քրեական դատավարության նշյալ սուբյեկտը¹⁵: Քրեադատավարական գործող օրենսդրությամբ քրեական հետապնդման մեկնարկի պահը չի առաջացնում համապատասխան հանցագործությունը կատարելու մեջ մեղավոր անձի համար նշանակալի իրավական որևէ հետևանք: Նախագծով այդ մեկնարկն ավելի հստակեցված է, քանի որ «անձին որպես մեղադրյալ ներգրավել» և «քրեական հետապնդում հարուցել» հասկացությունները նույնացված են, չնայած դրանց ընդհանրացմանը՝ Նախագծում ձերբակալված անձն ժտված է մեղադրյալի բոլոր իրավունքներով:

Դրա հետ մեկտեղ՝ քրեական հետապնդման և մեղադրանքի ավարտվելու պահը նույնն է. դրանք ավարտվում են դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից: Ընդ որում՝ կապ չունի, թե ինչ դատավճիռ է դա՝ մեղադրական, թե արդարացման¹⁶: Տվյալ դեպքում գործում է այն սկզբունքը, որ եթե գոյություն ունի մեղադրանք, ապա առկա է նաև քրեական հետապնդում. հենց որ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվում է մեղադրանքը, կամ հակառակը՝ մերժվում է օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճռով, հետապնդումը դադարեցնում է գոյությունը: Դա հանգեցնում է անձի, ում նկատմամբ նախկինում մեղադրանք էր առաջադրվել, դատավարական կարգավիճակի փոփոխությանը: Նա ձեռք է բերում կան դատապարտյալի, կան արդարացվածի կարգավիճակ՝ դատարանի դատավճռից կախված:

Ընդ որում՝ հարկավոր է ասել, որ նշյալ մոտեցումը քրեական հետապնդման և մեղա-

դրանքի ըմբռնմանը բնորոշ է ԱՊՀ բոլոր երկրներին: Պետք է ընդունել, որ դա լիովին համապատասխանում է այդ երկրներում վերջին տարիներին իրականացվող ժողովրդավարական վերափոխումների նպատակներին: Ավելին՝ դա լիովին համապատասխանում է նաև միջազգային չափանիշներին, քանի որ, մի կողմից՝ ապահովում է մրցակցության սկզբունքի գործողությունը, մյուս կողմից՝ իրենց նկատմամբ կատարված հանցագործություններից տուժած անձանց իրավունքներն ու ազատությունները:

Վերոշարադրյալը թույլ է տալիս հետևություններ անել քրեական հետապնդման ինստիտուտի հետագա նպատակաուղղված զարգացման անհրաժեշտության մասին՝ որոշարկելով այն գործողությունների շրջանակը, որոնք ընկած են դրա հիմքում: Ընդ որում՝ դա անհրաժեշտ է զարգացնել՝ մեղադրանքը կազմող դատավարական ընթացակարգերից չտարանջատելով: Այդ անել հարկավոր է՝ քրեական դատավարության ոլորտում ներգրավված քաղաքացիների իրավունքների ու ազատությունների երաշխիքներ ստեղծելով: Այսինքն՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն կողմերից մեկի իրավունքներին ու ազատություններին, այլև դատավարությունում մրցակցող երկու կողմին էլ: Այս առումով՝ քրեական հետապնդումն ու մեղադրանքը պետք է դիտարկվեն որպես առանձնահատուկ ընթացակարգեր, որոնք ոչ միայն բացահայտում են հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձին, այլև թույլ են տալիս կողմերին պաշտպանել իրենց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը:



¹⁵ Генералова А.С. Проблемы определения момента начала уголовного преследования // Актуальные проблемы права и государства в XXI веке: материалы V Международной научно-практической конференции, г. Уфа, 25-26 апреля 2013 года: в VI ч. Ч. V.– Уфа: УЮИ МВД РФ, 2013.– էջ 108-111.

¹⁶ Волынская О.В. Начало и окончание уголовного преследования // Российский следователь.– М.: Юрист, 2006, №2.– էջ 9-13.

ՀՐԱՅՐ ԹՈՎԱՍԱՅԱՆ

«ՍԺ աշխատակազմի ղեկավար - գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
«Վետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

**ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԻՍԱՆԱՍԽԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ֆինլանդիայի կառավարման ձևը, որի հիմքերը դրվել էին 1919թ. Սահմանադրությամբ (որը ներառում էր մի քանի ակտ. «Ֆինլանդիայի կառավարման ձև»՝ 1919թ., «Էդուսկունտայի ակտ»՝ 1928թ., «Պետական դատարանի ակտ»՝ 1922թ.), գործնականորեն անփոփոխ էր մնում 60 տարիների ընթացքում: Իշխանության ճյուղերի փոխհարաբերությունները կախված էին կուսակցական կոնֆիգուրացիայից, պատմական իրավիճակից և նախագահի անձից, գործադիր իշխանության դուրս բնույթը պահպանվում էր երկար տարիներ:

1919թ. Սահմանադրությունը կառուցեց իշխանության հետևյալ կմախքը: Օրենսդիր իշխանությունը պատկանում էր պառլամենտին և նախագահին, իսկ գործադիրը՝ նախագահին և կառավարությանը: Գործադիր իշխանության ղեկավար էր նախագահը, ով նախագահում էր կառավարության նիստերին: Նախագահը նշանակում էր վարչապետին և նրա հետ համատեղ որոշում Պետական խորհրդի կազմը և կառավարության հրաժարականի հարցը: Բնորոշ է, որ կաբինետի կազմը «կարված էր» նախագահական ընտրություններից: Պետության ղեկավարի ընտրություններից հետո Պետական խորհուրդը հրաժարական էր տալիս, և նախագահը նոր կառավարություն էր կազմավորում: Կառավարությունը կրում էր քաղաքական պատասխանատվություն Էդուսկունտայի առաջ, որն իրավունք ուներ անվստահություն արտահայտել ողջ Պետական խորհրդին և առանձին նախարարին: Այս դեպքում նախագահը պաշտոնազրկում է կառավարությանը կամ կաբինետի խորհրդով արտահերթ արձակում պառլամենտը: Եթե Էդուսկունտան արձակվում էր, ապա պետության ղեկավարը կարող էր

նշանակել ծառայողական կամ քաղաքական որոշումներ կայացնելու իրավունքից զրկված կաբինետ: Հանրապետության ղեկավարը ընտրվում էր անուղղակի (մինչ 1991թ.), պառլամենտը՝ ուղիղ ընտրությունների արդյունքով:

Այսպիսով՝ 1919թ. Սահմանադրությամբ որոշված կառավարման ձևը համապատասխանում էր կիսանախագահական համակարգերի չափանիշներին: Նախագահն ընտրվում էր ժողովրդի կողմից, ուներ լայնաձավալ լիազորություններ և կազմավորում էր կառավարությունը: Հեղինակավոր ֆին հեղինակի՝ Յա. Նուուսիայնենի կարծիքով՝ Ֆինլանդիան պառլամենտարիզմի և նախագահական իշխանության հավասարակշռված կոմբինացիա էր¹:

Ֆիննական կիսանախագահական համակարգի գործունեությունը ֆրանսիական անալոգի հետ համեմատ ուներ յուրահատկություններ: Նախ՝ Ֆինլանդիայի քաղաքական պատմությանը հայտնի չէ այնպիսի ֆենոմեն, որն է համակեցությունը: Այնտեղ ժողովրդի ընտրական հավակնությունների «փոշիացումը» 7-8 կուսակցության միջև հանգեցնում էր այն արդյունքին, որ պառլամենտի մեծամասնությունը երբեք չէր պատկանում մի կուսակցությանը, ուստի ձևավորել միակուսակցական կառավարման մեծամասնություն չէր հաջողվում: 1917-2000թթ. 70 կառավարությունից 53-ը կոալիցիոն էին, մյուսները՝ փոքրամասնության կուսակցությունների կամ ժամանակավոր կառավարությունների: Ֆինլանդիայի նախագահը երբեք հանդես չէր գալիս պառլամենտական մեծամասնության առաջնորդի դերում, քանի որ դա միշտ եղել է բազմերանգ և թույլ զոդված: Բացի այդ՝ Ֆինլանդիայում կար սահմանադրական սովորույթ, որը պահանջում էր նախագահից

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

¹ Sñu Nousiainen J. Semi-Presidentialism in Finland in Comparative Perspective: Paper presented at the XVI World Congress of the International Political Science Association, Berlin, 21-24 August 1994, էջ 2:

գործել որպես կուսակցական քաղաքականության վերևում գտնվող չեզոք իշխանություն: Նախագահը դադարեցնում էր իր անդամակցությունը քաղաքական կուսակցությունում, հեռանում էր քաղաքական գործընթացների կազմակերպումից²: Նրա դերն էպիզոդիկ էր: Եթե քաղաքական համակարգը, որտեղ վարչապետն ու կաբինետն էին վարում ընթացիկ քաղաքականությունը, բնականոն էր գործում, ապա նախագահական լիազորությունները գտնվում էին պահեստում: Ֆինլանդիայի նախագահի չեզոքությանը նպաստում էր նաև այդ երկրի քաղաքական մշակույթը, որը շեշտը դնում էր փոքրամասնության իրավունքների պաշտպանման, բազմակարծության և փոխզիջումների վրա:

Ֆինլանդիայի կիսանախագահական համակարգի երկրորդ առանձնահատկությունն այն էր, որ նախագահն այստեղ այնքան հզոր չէր, ինչպես Ֆրանսիայում: Դյուվերժեն դասում է Ֆրանսիան «հզոր նախագահով ռեժիմին», իսկ Ֆինլանդիան՝ «հավասարակշռված նախագահով և կառավարությունով ռեժիմին»³: 1919թ. Ֆինլանդիայի Սահմանադրությունը նախագահին համարեց քաղաքական կյանքի կենտրոն: Մի կողմից՝ նա հանդես էր գալիս դատավորի և քաղաքական գործընթացը կարգավորողի, իսկ մյուս կողմից՝ հիմնական որոշումներ կայացնող և քաղաքական ուղին որոշող ֆորմալ ազենտի դերում: Նախագահն ուներ էական լիազորություններ, որոնցից կարևորագույններն էին կառավարության ձևավորումը, պառլամենտի արձակումը, պետական ծառայողների նշանակումը: Գրականության մեջ երբեմն Ֆինլանդիայի նախագահի դիրքը համեմատում էին միապետի դիրքի հետ, ով իր լիազորություններն իրականացնում էր պառլամենտի և նախարարների հետ համատեղ⁴:

Ֆինլանդիայի նախագահի իրական լիազորությունը մեծ չէր: Ինչպես գրում է Յա. Նոուսիայնենը. «Սահմանադրական, կուսակցական և մշակութային կոնֆիգուրացիան, նախագահին մանևրի տարածություն էր տալիս՝ միևնույն ժամանակ իշխանության ընդլայնման էական սահմանափակումներ սահմանելով»⁵:

Հենց Սահմանադրությունը բացառեց մի շարք հարցեր նախագահի ազդեցության բնագավառից:

Կուսակցական համակարգը հեռացնում էր նախագահին ամենօրյա առաջնորդությունից և մեկուսացնում նրան քաղաքական ուղու պատրաստման և ընդունման գործընթացից: Ազգային առաջնորդին որպես հայր և հեղինակային դատավոր դիտարկող քաղաքական մշակույթն ստիպում էր նախագահին հեռու մնալ քաղաքական խաղից և հեռանալ իրական քաղաքականությունից՝ գալով պետական գործչի միսիոներական պաշտոնին⁶: Շուգարտն ու Քերին նշում են, որ Ֆինլանդիայի նախագահներն ավելի շուտ կատարում էին դատավորի դերը, քան ղեկավարում, վարչապետի միջոցով, կաբինետով կառավարության կուսակցական կազմից անկախ⁷:

Նախագահի «ուժն» առաջնորդի անձի և քաղաքական իրավիճակի մեջ էր: Ֆինլանդիայի կիսանախագահական համակարգը, ըստ Դ. Անկարի փոխաբերական համեմատման, նախագահների համար «ճաշարանի սեղան» էր, որտեղ դրված էին սահմանադրական լիազորությունները, որոնք նրանք ընտրում էին ըստ ճաշակի և «համտեսում»⁸: Ֆինլանդիայի պատմության մեջ կային չափավոր նախագահներ, ովքեր պառլամենտին էին հատկացնում գործունեության մեծ տարածք⁹: Ֆինլանդիայում երկու այսպիսի առաջնորդ է եղել: Հակառակը՝ նախագահների մեծամասնությունն ակտիվ-

² Տե՛ս նույն տեղում, էջ 7:

³ Տե՛ս Arter D. Government in Finland: A 'Semi-Presidential System'? // Parliamentary Affairs.– 1985.–Vol. 38.–№ 4, էջ 476:

⁴ Տե՛ս Исаяев М.А. Чеканский А.Н., Шишкин В.Н. Политическая система стран Скандинавии и Финляндии.– М.: РОССПЭН; МГИМО (У) МИД РФ, 2001, էջ 260:

⁵ Տե՛ս Nousiainen J. From Semi-Presidentialism to Parliamentary Government: Political and Constitutional Developments in Finland // Scandinavian Political Studies.– 2001.– Vol. 24.– №2, էջ 98:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջեր 97-98:

⁷ Տե՛ս Shugart M.S., Carey J.M. Presidents and Assemblies: Constitutional Design and Electoral Dynamics. Cambridge University Press, 1992, էջ 61:

⁸ Տե՛ս Paloheimo H. The Rising Power of the Prime Minister in Finland // Scandinavian Political Studies.– 2003.– Vol. 26.– №3, էջ 222:

⁹ Տե՛ս Nousiainen J. Semi-Presidentialism in Finland in Comparative Perspective. ..., էջ 14-15:

րեն օգտվում էր իրեն տրամադրված լիազորություններից, իսկ ոմանք, ըստ Դյուվերթեի տերմինաբանության՝ ամենակարողն էին: Վերջինների շարքին են դասվում Ու. Կեկոնենը (1956-1981թթ.), ում Անկարը անվանեց «անկուշտ»¹⁰: Նա ընտրում էր վարչապետներին, կոալիցիաների ստեղծման նպատակով ճնշում կուսակցություններին, ստիպում էր կառավարություններին հրաժարական տալ, նշանակում էր անկուսակցական կաբինետներ և արձակում պառլամենտը¹¹:

Ֆինլանդիայի նախագահը «չեզոք իշխանություն էր (pouvoir neutre) և դատավոր (pouvoir modérateur)», ով գտնվում էր ընթացիկ քաղաքականության կուլիսներում: Պետության ղեկավարն ակտիվ էր արտաքին քաղաքականության և կոալիցիաների ձևավորման հարցում: Եթե կիսանախագահական ռեժիմին բնորոշ է Ռուզվելտի արտահայտումը, որ «վարչապետը խմբավորում է նվազախումբը, իսկ նախագահը՝ գրում երաժշտությունը», ապա Ֆինլանդիայում նախագահը գրում էր միայն արտաքին քաղաքականության «երաժշտությունը»¹², իսկ առաջին ջութակի դերը պետական նվազախումբում կատարում են վարչապետն ու կաբինետը:

Գրականության մեջ ընդգծում են Ֆինլանդիայի նախագահի և կառավարության փոխհարաբերությունների մի քանի շրջան.

1. Առաջին հանրապետություն՝ 1917-1939թթ.:
2. Պատերազմական ժամանակ՝ 1939-1944թթ.:
3. Երկրորդ հանրապետություն՝ 1944-1982թթ.:
4. Պառլամենտարիզացման ժամանակաշրջան կամ Երրորդ հանրապետություն՝ 1982-2000թթ.¹³:
5. Չորրորդ հանրապետություն՝ 2000թ.¹⁴: Ոչ մի քաղաքական կուսակցության չէր

հաջողվում պառլամենտում ունենալ տեղերի բացարձակ մեծամասնությունը: Կուսակցությունների կոալիցիաների ստեղծման հնարավորությունը շատ փոքր էր, ինչը հանգեցնում էր անկայուն և թույլ կառավարությունների ձևավորման: Այս պայմաններում, Ֆինլանդիայի առաջին նախագահ Կ. Յա. Ստոլբերգն ստիպված էր մասնակցել կաբինետի ձևավորման հարցում և վարել սեփական քաղաքականություն: Հենց այդ շրջանում Ֆինլանդիայում հիմնադրվեց կիսանախագահական ձևի մոդելը, որտեղ նախագահը քաղաքական ակտիվ առաջնորդ էր, հասարակության կարծիքն արտահայտող, պետության խորհրդանիշ և քաղաքական կոնֆլիկտների դատավոր¹⁵:

Երկրորդը Համաշխարհային պատերազմի ժամանակ իշխանությունը ծայրահեղ կենտրոնացված լինելն էր: Նախագահը, վարչապետը, մի քանի նախարար և մարշալ Կ.Գ. Մաններհեյմը համատեղ որոշումներ էին կայացնում պատերազմական կաբինետի շրջանակներում:

Գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների երրորդ փուլն սկսվեց Երկրորդ աշխարհամարտից հետո և տարբերվում էր այնքանով, որ արտաքին քաղաքականությունը լիովին անցավ նախագահներին: Իսկ նախագահ Կեկոնենը կամաց-կամաց սկսեց տիրանալ նաև ներքին քաղաքականությանը: Մասնագետների գնահատմամբ՝ ֆիննական կիսանախագահական համակարգն ավելի ու ավելի էր վերածվում ուժեղ նախագահով համակարգի¹⁶, որը ոմանք նույնիսկ անվանում էին «հանրապետական միապետ» կամ «լուսավորված բռնակալ»¹⁷:

Հատուկ հետաքրքրություն է առաջացնում 1982թ.՝ նախագահ Կոյվիստոյի գալուց հետո, սկսված պառլամենտարիզացման շրջանը: Պառլամենտարիզացման գործընթացը ընթանում

¹⁰ Sñu Paloheimo H., նշվ. աշխ. էջ 223:

¹¹ Sñu նույն տեղում:

¹² Sñu Rose R. The Capacity of the President: A Comparative Analysis.– Glasgow: Centre for the Study of Public Policy, University of Strathclyde, 1984, էջ 10:

¹³ Sñu Paloheimo H. Divided Executive in Finland: From Semi-Presidential to Parliamentary Democracy: Paper presented at ECPR Joint Sessions of Workshops, Copenhagen, 14-19 April 2000, էջ 17:

¹⁴ Sñu Могунова М.А. Финляндия. Вступительная статья // Конституции государств Европы / под общ. ред. Л.А. Окунькова. Т. 3, էջեր 363-364:

¹⁵ Sñu Paloheimo H. Divided Executive in Finland. ..., էջ 17:

¹⁶ Sñu նույն տեղում:

¹⁷ Sñu Arter D., նշվ. աշխ., էջ 476:

էր երկու հարթությունում՝ իրավական բնագավառում և պրակտիկայում: Սահմանադրական իրավական պառլամենտարիզացումը կայանում էր օրենսդրության փոփոխման մեջ, ինչը կանոնավորում էր նախագահ-կառավարություն-պառլամենտ հարաբերությունները: 1980-1990թթ. Ֆինլանդիայի սահմանադրական ակտերում ձեռնարկվեցին մի շարք ուղղումներ, որոնց համաձայն՝ նախագահի արտոնություններն աստիճանաբար կրճատվում էին, արտաքին և ներքին քաղաքականության գլխավոր դերն անցնում էր պառլամենտի աջակցությունն ստացած կառավարությանը: Ուղղումները վերաբերում էին կառավարության կազմի որոշման պրոցեդուրային, վստահության քվեին, նախագահի վետոյին, պառլամենտի արձակմանը, նախագահի և կառավարության դերին արտաքին քաղաքականության մեջ, հատկապես՝ Եվրախորհրդի հետ հարաբերությունների հարցում:

Ֆինլանդական քաղաքական համակարգի պառլամենտարիզացմանը նպաստում էին մի քանի գործոն: Դրանցից մեկն էր ԽՍՀՄ փլուզումը, որի հետևանքով վերացավ ուժեղ նախագահի ղեկավարման անհրաժեշտությունը: Կեկոնենի նախագահումից հետո հասարակության մեջ ավելացան քննադատումները պետության ղեկավարի ավելորդ լիազորությունների առկայության առիթով: Ֆինլանդիայի՝ Եվրախորհրդի մտնելը խթանեց պառլամենտական բազայի ընդլայնումն արտաքին քաղաքական որոշումների կայացման հարցում: Ի վերջո՝ երկրի քաղաքական կուսակցությունները հնարավորություն ունեցան ստեղծելու կենսունակ կառավարական կոալիցիաներ, ինչը չկար նախկինում¹⁸:

Դեպի «ուղղափառ»¹⁹ պառլամենտական համակարգ Ֆինլանդիայի շարժման տրամաբանական ավարտ հանդիսացավ նոր ռեժիմի իրավական ձևակերպումը՝ Ֆինլանդիայի Հիմնական օրենքի ընդունումը 1999թ.²⁰: Սահմանադրական բարեփոխությունների փորձ կիրառվեց, բայց չհաջողվեց 1970թ. կեսերին: Նորամուծությունների բարենպաստ պայմաններ

ստեղծվեցին 1990թ վերջերին: Ըստ պառլամենտի հայտարարության՝ այս բարեփոխության նպատակն էր ապահովել լիազորությունների հաշվեկշիռ պառլամենտի, հանրապետության ղեկավարի և Պետական խորհրդի միջև և այդպիսով ամրապնդել պառլամենտի դիրքը²¹: Պառլամենտարիզացման ռեժիմի աջակցությունն ավելի մեծ էր, քան վկայում են Սահմանադրության նախագծով Էդուսկունտայում քվեարկության արդյունքները՝ 175 ձայն կողմ և միայն 2՝ դեմ:

Սահմանադրական բարեփոխումների հիմնական տարրերը հետևյալն են.

1. Կառավարության ձևավորման գործընթացը լիովին դարձավ պառլամենտական: Այսօր Էդուսկունտան վարչապետ է ընտրում տարբեր պառլամենտական խմբերի կոնսուլտացիայից հետո, իսկ նախագահն ընդամենը ձևական նշանակում է կաբինետի ղեկավարին: Մյուս նախարարները նշանակվում են նախագահի կողմից ըստ կառավարության ղեկավարի առաջարկի: Նախագահը ոչ մի կերպ չի կարող ազդել կառավարության կամ նախարարի հրաժարականի վրա, քանի որ Սահմանադրությունն ազդարարում է, որ նախագահը պետք է ազատի առանձին նախարարին կամ Պետական խորհուրդը, եթե նրանք կորցրել են Էդուսկունտայի վստահությունը: Նախագահը, վարչապետի նախաձեռնությամբ, պաշտոնազրկում է նաև նախարարին: Վարչապետի նախաձեռնությամբ նախագահն արձակում է պառլամենտը և հայտարարում Էդուսկունտայի նոր ընտրություններ: Եթե առաջ նախագահի նոր ընտրությունները պահանջում էին կաբինետի հրաժարական, ապա այսօր Սահմանադրությամբ դա նախատեսված չէ: Պետական խորհրդի հրաժարականն այսօր կախված է Էդուսկունտայի, այլ ոչ նախագահի ընտրություններից²²:

2. Նախագահն իրականացնում է արտաքին քաղաքականության կառավարումը՝ սերտ համագործակցելով Պետական խորհրդի հետ: Եվրոպական հարցերը հիմնականում վերաբերում են վարչապետին և կաբինետի իրավա-

¹⁸ Sten Paloheimo H. The Rising Power of the Prime Minister in Finland. ..., էջ 240, Paloheimo H. Divided Executive in Finland. ... էջ 3, 27:

¹⁹ Sten Arter D., նշվ. աշխ., էջ 476:

²⁰ Sten Могунова М.А., նշվ. աշխ.:

²¹ Հղումն ըստ՝ Nousiainen J. From Semi-Presidentialism to Parliamentary Government. ..., էջ 105:

²² Sten Могунова М.А. Государственное право Финляндии.– М.: Издат. дом. “Городец”, 2005, էջ 261-262:

սություններին: Ֆինլանդիայի Հիմնական օրենքն ազդարարում է. «Ֆինլանդիայի արտաքին քաղաքականությունն իրականացվում է հանրապետության ղեկավարի Պետական խորհրդի կողմից, որն ընդունվում է Եվրախորհրդում»²³: Նախագահի գերիշխող դիրքն արտաքին քաղաքականության մեջ թուլացված է մինչև «արարողակարգային» դերը: Իհարկե, պետության ղեկավարը գերծ չի մնում արտաքին քաղաքական որոշումներ կայացնելուց, ինչի մասին վկայում է Ֆինլանդիայի գործող նախագահ Տ. Հալոնենի գործունեությունը, ով գրավում է որոշիչ դիրք մարդու իրավունքների հարցերում²⁴:

3. Նախագահի նորմամշակութային լիազորությունները մեծ մասամբ փոխանցված են Պետական խորհրդին: Կառավարությունը, այլ ոչ նախագահն է կազմում պառլամենտ ներկայացնելու օրենքի նախագծերը, և նախագահի հնարավորությունը փոխել դրանք հիմնականում վերացված է: Սահմանափակ է նախագահի վետոն պառլամենտի կայացրած օրենքների շուրջ: Եթե 1919թ. Սահմանադրության համաձայն՝ նախագահը կարող էր մի կողմ դնել օրենքը մինչ պառլամենտի հաջորդ գումարումը, ապա այժմ պառլամենտը պետք է անհապաղ հաղթահարի նախագահի վետոն:

4. Այսօր նախագահը նշանակում է պետական բարձրաստիճան ծառայողների փոքր թվին:

5. Նախագահը, որպես կանոն, իր որոշումներն է կայացնում Պետական խորհրդում կարինետի առաջարկով (§58): Նախագահն ավելի շատ, քան առաջ, կախված է կառավարության կարծիքից (27 հավելվածի աղյուսակ)²⁵:

Այսպիսով՝ պառլամենտարիզացման և Սահմանադրության բարեփոխումների հետևանքով՝ նախագահի իշխանությունն էապես սահմանափակվեց, իսկ կառավարությանը՝ ընդարձակվեց:

Վարչապետը դարձավ գործադիր իշխանության իսկական ղեկավար²⁶, ինչը բնորոշ է պառ-

լամենտական համակարգին: Հետաքրքիր դիտարկում է կատարում Խ. Պալոհեյմոն. «Կիսանախագահական համակարգում առավել հարգված պետական գործիչն ընտրվում է նախագահի կողմից: Ժամանակակից Ֆինլանդիայում առավել հարգված պետական գործիչը պայքարում և ստանձնում է վարչապետի պաշտոնը»²⁷:

Նոր Սահմանադրությունն ամրապնդեց պառլամենտի և կառավարության կապերը, և ողջ պետական մեխանիզմն սկսեց պտտվել Էդուսկունտայի շուրջ: Նախագահը լիովին հեռացված է արտադրության և ռազմավարական ուղու որոշման գործընթացից²⁸:

Դրա հետ մեկտեղ՝ նախագահը պահպանել է որոշակի արտոնությունները²⁹: Սակայն Սահմանադրությունն էապես սահմանափակել է նրա իրավունքները, չնայած միևնույն է՝ նա մնում է գործադիր իշխանության ղեկավար:

Ինչպես արդարացիորեն նշում է Նոուսիայենը՝ Ֆինլանդիայի նոր կառավարման ձևը չի կարելի համարել «մաքուր» կիսանախագահական համակարգ: Մյուս կողմից՝ երկիրը լիովին չի անցել «մաքուր» պառլամենտական համակարգի, ուստի Պալոհեյմոն դա անվանում է «համարյա պառլամենտական»³⁰: Նախագահի համընդհանուր ընտրությունները և նրա հարաբերական ինքնուրույն արտոնությունները տարբերում են Ֆինլանդիան դասական պառլամենտական համակարգերից: Մեր կարծիքով՝ նախագահի ուղիղ ընտրություններն ստեղծում են լրիվ այլ լեգիտիմություն, քան պառլամենտի կամ հատուկ կոլեգիայի կողմից ընտրությունները: Նախագահին ամրացրած մի շարք լիազորությունները խոչընդոտում են նրա՝ արարողակարգային մարմնի վերաժվելը, ինչպիսին սովորաբար պառլամենտական համակարգի նախագահն է: Սա նշանակում է որ Ֆինլանդիան հեռացել է «մաքուր» կիսանախագահական ձևից, բայց լիովին չի լքել այդ ձևը:

²³ Տե՛ս նույն տեղում:

²⁴ Տե՛ս Frankland E.G. Global Studies: Europe. 2003, էջ 102:

²⁵ Տե՛ս Nousiainen J. From Semi-Presidentialism to Parliamentary Government. ..., էջ 106:

²⁶ Տե՛ս Paloheimo H. The Rising Power of the Prime Minister in Finland. ..., էջ 240:

²⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁸ Հղումն ըստ՝ Raunio T., Wiberg M. Parliamentarizing Foreign Policy Decision-Making. Finland in the European Union. Cooperation and conflict 36:1, 2001, էջ 71:

²⁹ Տե՛ս Могучова М.А. Государственное право Финляндии.– М.: Издат. дом. “Городец”, 2005, էջ 257:

³⁰ Տե՛ս Paloheimo H. The Rising Power of the Prime Minister in Finland. ..., էջ 240:

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ,
 ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն
 և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության
 առաջին կարգի մասնագետ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՆՈՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015Թ. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)**

ՀՀ 2015թ. սահմանադրական փոփոխությունների հետևանքով՝ ՀՀ-ում անցում կատարվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի, որը ենթադրում է պետական իշխանության ճյուղերի գործառույթների վերաբաշխում, ինչպես նաև իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման նոր մեխանիզմների ամրագրում: ՀՀ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության (այսուհետև՝ 2015թ. Սահմանադրություն) 4-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա»: Նշված նորմից բխում է, որ ՀՀ-ում պետական իշխանությունն իրականացնող ճյուղերից մեկն օրենսդիր իշխանությունն է, որն իրականացվում է Ազգային ժողովի կողմից:

Կատարված սահմանադրական փոփոխությունների համատեքստում անհրաժեշտ է դիտարկել Ազգային ժողովին բնութագրող հիմնական հատկանիշները, ինչպես նաև զսպումների ու հավասարակշռման այն մեխանիզմները, որոնցով Ազգային ժողովը փոխկապակցված է պետական իշխանության մարմինների հետ: Ազգային ժողովի սահմանադրական կարգավիճակը բնութագրող հիմնական հատկանիշներն անհրաժեշտ ենք համարում դիտարկել հետևյալ հարցերի համատեքստում.

1. *Օրենսդրական ոլորտում իշխանության ճյուղերի միջև գործում են զսպումների*

և հավասարակշռման բավարար մեխանիզմներ:

2. *Ազգային ժողովն ինչպիսի գործառույթներ է իրականացնում կառավարության ձևավորման, անվտանգություն հայտնելու ոլորտում և առկա են արդյոք կառավարության գործունեության կայունության ապահովման բավարար երաշխիքներ:*
3. *Առկա են բավարար մեխանիզմներ գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար, այս հարցում ինչ դերակատարություն ունի պառլամենտական ընդդիմությունը:*

Պետական իշխանության մարմինների հավակարգում Ազգային ժողովի գործառութային դերակատարության ամբողջական ընկալման տեսանկյունից առանցքային է համարվում Ազգային ժողովը բնութագրող հատկանիշների դիտարկումը: ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ Ազգային ժողովը բնութագրվել է երեք հիմնական հատկանիշներով. *ա) Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, բ) Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանություն, գ) Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ:* ՀՀ Ազգային ժողովը բնութագրող վերոնշյալ հատկանիշներն ամբողջական կերպով արտահայտում են գործունեության այն ուղղությունները, որոնցով Ազգային ժողովն իրականացնում է իր գործառութները: Այս առումով՝ ՀՀ 2015թ. Սահմանադրությունը,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

խորհրդարանական մոդելի մի շարք պետությունների Սահմանադրությունների հետ համեմատած, բավականին առաջադիմական է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ պետությունների Սահմանադրություններ պառլամենտը համարում են միայն *օրենսդիր և ներկայացուցչական* մարմին (Մակեդոնիա Սահմ. 61-րդ հոդված), որոշ պետությունների Սահմանադրություններ պառլամենտը համարում են միայն *օրենսդիր և վերահսկող* մարմին (Բուլղարիա Սահմ. 62-րդ հոդված), իսկ որոշ դեպքերում պառլամենտը համարվում է միայն *օրենսդիր մարմին* (Չեխիա Սահմ. 15-րդ հոդված): Կարծում են՝ յուրաքանչյուր պետությունում պառլամենտը կարող է արդյունավետ գործել միայն այն պարագայում, եթե օժտված է վերը նշված երեք հատկանիշով:

Իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության ապահովման տեսանկյունից կարևոր է օրենսդիր իշխանության գործառույթային դերի վերլուծությունը: Տեսական գրականության մեջ քննարկման առարկա է այն հարցը, թե օրենսդիր իշխանությունն ունի արդյոք գործառույթային գերակայություն իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ: Ակրն-հայտ է, որ իշխանության ճյուղերի կողմից իրականացվող գործառույթները հավասարազոր բնույթ չունեն և միմյանցից տարբերվում են իրավաբանական ուժով ու բովանդակությամբ: Մասնավորապես՝ օրենսդիր իշխանության գործունեությունն ունի օրենսդրական բնույթ, իսկ դատական և գործադիր իշխանություններինը՝ ենթաօրենսդրական (ՀՀ Սահմ. 153-րդ հոդված համաձայն՝ կառավարությունն իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր): Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ համակարծիք ենք Վ. Լուզինի և Ա. Բեզրուկովի տեսակետների հետ, ըստ որոնց՝ օրենսդիր իշխանությունը իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ ունի «գործառույթային գերակայություն»¹: ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ Ազգային ժողովի գործառույթային գերակայությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. օրենսդիր իշխանությունն իշխանության միակ ճյուղն է, որն ուղղակիորեն ընտրվում է ժողովրդի կողմից, օժտված է անմիջական լեգիտիմությամբ և համարվում է ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմինը,
2. օրենսդիր իշխանությունն ընդունում է օրենքներ, որոնց հիման վրա գործում են պետական իշխանության մարմինները, այդ թվում՝ գործադիր և դատական իշխանության ճյուղերը,
3. օրենսդիր իշխանությունը ձևավորում է կառավարությունը, կարող է անվստահություն հայտնել կառավարությանը, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ և մասնակցում է դատական իշխանության ձևավորմանը:

Մեր կաճիքով՝ իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ օրենսդիր իշխանության գործառույթային գերակայությունը չի խախտում իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքը, քանի որ նշված սկզբունքի հիմնական նպատակը ոչ թե իշխանության ճյուղերին հավասարազոր գործառույթներ վերապահելն է, այլ՝ իշխանության յուրաքանչյուր ճյուղի գործառույթային անկախության ապահովումը: Հետևաբար՝ ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ կիրառման համար նախ և առաջ անհրաժեշտ են այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն իշխանության յուրաքանչյուր ճյուղի գործառույթային անկախությունը:

Իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ օրենսդիր իշխանության գործառույթային գերակայությունը պայմանավորող գործոններից մեկն Ազգային ժողովի կողմից օրենքների ընդունման գործառույթն է: Օրենսդրական ոլորտում առանցքային է համարվում այն հանգամանքը, որ իշխանության գործադիր և դատական ճյուղերը պետք է ունենան բավարար զսպող և հավասարակշռող լիազորություններ օրենսդրական ոլորտում Ազգային ժողովին հավասարակշռելու համար: ՀՀ 2015թ Սահմա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

¹ Стн Лузин В.В. Принцип разделения властей как основа конституционализма, Новгород, 1997. ст. 6, Стн նաև А. В. Безруков, Единство государственной власти и законодательная власть в системе разделения властей проблемы права, №6 (37), 2012 с. 3.

նադրության նորմերի վերլուծությամբ կարող ենք առանձնացնել օրենսդրական ոլորտում իշխանության ճյուղերի միջև գործող զսպումների և հավասարակշռման հետևյալ ձևերը.

ա. օրենսդրական նախաձեռնության իրավունք վերապահվել է ինչպես օրենսդիր իշխանությանը (Ազգային ժողովի պատգամավոր, խմբակցություն), այնպես էլ գործադիր իշխանությանը (կառավարություն), ինչպես նաև՝ օրենքների նախագծեր առաջարկելու իրավունք է վերապահվել ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացիների².

բ. Հանրապետության նախագահը կարող է վերո կիրառել Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների նկատմամբ և դիմել Սահմանադրական դատարան՝ օրենքի սահմանադրականության ստուգման նպատակով.

գ. դատական իշխանությունը (Սահմանադրական դատարանը) վերահսկողություն է իրականացնում Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների օրինականության նկատմամբ և կարող է դրանք ճանաչել Սահմանադրությանը հակասող:

Ինչպես տեսնում ենք՝ չնայած օրենքների ընդունման գործառույթը վերապահված է Ազգային ժողովին՝ այնուամենայնիվ, այս ոլորտում պետական իշխանության բոլոր ճյուղերը զսպումների և հավասարակշռման որոշակի մեխանիզմներով փոխկապակցված են, ինչի շնորհիվ՝ Ազգային ժողովը կողմից կամայական գործելու հնարավորությունը նվազում է:

Որոշակի պայմաններում օրենսդրական ոլորտում բավականին լայն դերակատարություն է ձեռք բերում կառավարությունը, ինչն առավել ընդգծվում է այն պետություններում, որտեղ նախատեսված է օրենսդրական դելեգավորման ինստիտուտը: Օրենսդրական դելեգավորման դեպքում կառավարությունը լիազորություն է ձեռք բերում ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ: Չնայած այն հանգամանքին, որ տեսական գրականությունում մի շարք հեղինակներ քննադատում են օրենսդրական դելեգավորման ինստիտուտը³, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ խորհրդարանական մոդելի մի շարք պետություններում դա կիրառվում է. Իտալիայում օրենսդիր իշխանության իրականացումը կարող է պատվիրակվել կառավարությանը (Սահմ. 71-րդ հոդված), Թուրքիայում Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությանը՝ ընդունելու օրենքի ուժ ունեցող որոշումներ (Սահմ. 91-րդ հոդված), Մոլդովայում կառավարությունն իր ծրագրի շրջանակներում կարող է ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ (Սահմ. 106-րդ հոդված):

Հաշվի առնելով օրենսդրական դելեգավորման ինստիտուտից բխող վտանգները՝ ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ դա չի նախատեսվել, ուստի ՀՀ-ում օրենքներ ընդունելու «մենաշնորհը» պատկանում է Ազգային ժողովին: Սակայն, անկախ այն հանգամանքից, որ կառավարությունը չունի «օրենքներ ընդունել» լիազորություն, այնուամենայնիվ, օրենսդրական ոլորտում ՀՀ կառավարությունը ունի մի շարք լծակներ այդ գործընթացի վրա ազդելու համար: Մասնավորապես՝ վերջին տասնամյակում ՀՀ-ում օրենքների մշակման և օրենսդրական նախաձեռնությունների պրակտիկայի ուսումնասիրության շնորհիվ՝ պարզ է դառնում, որ օրենսդրական նախաձեռնությունների ճնշող մեծամասնությունը պատկանում է կառավարությանը, ինչն անուղղակիորեն հանգեցնում է այն արդյունքին, որ օրենսդրական ոլորտում կառավարությունն Ազգային ժողովի նկատմամբ մեծ ազդեցություն է ձեռք բերում:

² ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ՝ քաղաքացիների՝ օրենքի նախագիծ ներկայացնելու իրավունքի իրացման ընթացակարգը բավականին բարդացված է, մասնավորապես՝ Սահմանադրությամբ նախատեսվել է, որ օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք ունի քաղաքացիների՝ հիսուն հազար հոգուց բաղկացած խումբը, ինչը, կարծում ենք, բավականին բարձր է՝ խորհրդարանական մյուս պետությունների հետ համեմատած: Մասնավորապես՝ Իտալիայում ընտրական իրավունք ունի քաղաքացիների՝ հիսուն հազար հոգուց բաղկացած խումբը. նշենք, որ Իտալիան ունի 62 միլիոն բնակչություն: Մակեդոնիայում (ուսի երկու միլիոն բնակչություն) օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն ընտրական իրավունք ունեցող տասը հազար քաղաքացիներ, Աբսանիայում (ուսի երեք և կես միլիոն բնակչություն) օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն քսան հազար քաղաքացիներ:

³ Դ. Մեյերսոնը նշում է, որ երբ տեղի է ունենում օրենսդիր իշխանության փոխանցում գործադիր իշխանությանը, մեծ ռիսկի տակ է դրվում իրավունքի գերակայության սկզբունքը, ինչի պատճառով կառավարությունը դառնում է անվերահսկելի: Տես Denise Meyerson, «Rethinking the Constitutionality of Delegated Legislation» (2003) 11 Australian Journal of Administrative Law 45, p. 52.

ՀՀ-ում, իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի անցման հետևանքով օրենսդրական ոլորտում օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի դերակատարությունը պետք է վերագնահատվի: Ազգային ժողովի քաղաքական դերակատարության բարձրացման համատեքստում անհրաժեշտ է, որ Ազգային ժողովն առավել ակտիվ դերակատարություն ստանձնի օրենքների մշակման և օրենսդրական նախաձեռնությունների ոլորտում: Այս կերպ Ազգային ժողովը, լինելով ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմինը, պետք է նախանշի քաղաքական այն ուղղությունները, որոնց միջոցով կառավարությունը պետք է իրականացնի պետական կառավարման իր գործառնությունները:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելում օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի հարաբերություններում առանցքային հարցերից մեկը կառավարության ձևավորման խնդիրն է: Իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելում կառավարությունը ձևավորվում է Ազգային ժողովի կողմից⁴, ընդ որում՝ կառավարությունը ոչ միայն ձևավորվում է Ազգային ժողովի կողմից, այլ նաև քաղաքական պատասխանատվություն է կրում Ազգային ժողովի առջև: Այսպիսի իրավակարգավորման պայմաններում խորհրդարանական մոդելի պետություններում կառավարությունն աշխատում է այնքան ժամանակ, քանի դեռ վայելում է խորհրդարանական մեծամասնության վստահությունը: Այս պայմաններում խորհրդարանական մոդելի պետություններում առանցքային հարցերից մեկը դառնում է կառավարության գործունեության կայունության ապահովման խնդիրը: Խորհրդարանական մոդելի պետություններում, այդ թվում նաև՝ ՀՀ-ում, կառավարության գործունեության կայունության հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից՝ ա) *կառավա-*

րությունը ձևավորվում է կոալիցիայի միջոցով, բ) կառավարությունը ձևավորվում է մեկ կուսակցության կողմից:

Կառավարության գործունեության կայունության ապահովման խնդիրն առավել իրատապ է դառնում այն դեպքում, երբ կառավարությունը ձևավորվում է քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով: Միջազգային փորձի վերլուծությունից բխում է, որ մի շարք պետություններում կոալիցիոն կառավարություններ առավել հաճախ են ձևավորվում (Շվեդիա, Ռումինիա, Նորվեգիա, Նիդերլանդներ): Դանիայում (1982-2015թթ.) և Ֆինլանդիայում (1977-2016թ.) բոլոր կառավարությունները եղել են կոալիցիոն: Կոալիցիոն կառավարության դեպքում մեծ վտանգ կա, որ քաղաքական կոալիցիան կարող է փլուզվել, ինչը կհանգեցնի կառավարության արձակման: Դա է վկայում այն, որ մի շարք պետություններում, որտեղ առավել հաճախ են ձևավորվում կոալիցիոն կառավարությունները, դրանք բավականին անկայուն են: Հունգարիայում 1989-2013թթ. ձևավորվել է ինը կառավարություն, որոնցից չորսին պառլամենտը անվստահություն է հայտնել, Լեհաստանում 1992-2013թթ. ձևավորվել է տասներկու կառավարություն, որոնցից վեցին պառլամենտը անվստահություն է հայտնել, Սլովենիայում ձևավորված վերջին տասնչորս կառավարությունից ութին պառլամենտը անվստահություն է հայտնել: Մյուս կողմից՝ կառավարություններն առավել կայուն են դառնում միակուսակցական կառավարության ձևավորման դեպքում, երբ կառավարությունը ձևավորվում է առանց քաղաքական կոալիցիա կազմելու պառլամենտում հաղթած քաղաքական կուսակցության կողմից (առավել հատուկ է՝ Լիտվիա, Լատվիա, Բուլղարիա):

ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ՝ կառավարության գործունեության կայունության ապահովման հարցը նույնպես կարևորություն է ձեռք բերել: Սահմանադրությամբ՝ կառավարության գործունեության կայունության ապա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

⁴ ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ՝ Հանրապետության նախագահին Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին, այնուհետև վարչապետը հնգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին առաջարկում է փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին: Կառավարության ձևավորումից հետո Ազգային ժողովը պետք է հաստատի կառավարության ծրագիրը, որպեսզի կառավարությունը կարողանա իրականացնել իր գործառնությունները (ՀՀ Սահմ. 149-րդ և 150-րդ հոդվածներ):

հովման նպատակով ամրագրվել են հետևյալ մեխանիզմները.

ա. *Վարչապետին անվտանգություն հայտնելու կոնստրուկտիվ անվտանգության քվեի նախադրեսում*, որի դեպքում վարչապետին անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու համար միաժամանակ անհրաժեշտ է առաջադրել վարչապետի նոր թեկնածու, կոնստրուկտիվ անվտանգության քվեի հատուկ է նաև մի շարք խորհրդարանական մոդելի պետությունների՝ Սլովակիա, Հունգարիա, Գերմանիա, Իսպանիա, Սլովենիա, Լեհաստան:

բ. *Վարչապետին անվտանգություն հայտնելու նախաձեռնության համար ժամանակային սահմանափակում նախադրեսելը, որի համաձայն՝* վարչապետին անվտանգություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վարչապետին անվտանգություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո: Նշված նորմը, կարծում ենք, կառավարության գործունեության կայունության ապահովման տեսանկյունից կարող է առաջադիմական դիտարկվել, սակայն կոալիցիոն կառավարության ձևավորման դեպքում վարչապետին անվտանգություն հայտնելու ժամկետային սահմանափակման նախատեսումը կարող է խնդրահարույց լինել. խնդիրն այն է, որ վարչապետի նշանակումից հետո բնավ չի բացառվում, որ ձևավորված քաղաքական կոալիցիան կարող է փլուզվել, և այդ պատճառով վարչապետն այլևս չի ունենա պառլամենտական մեծամասնության վստահությունը, այսպիսի պայմաններում, կարծում ենք, ձևավորված կառավարությունն առանց պառլամենտական մեծամասնության աջակցության չի կարող արդյունավետ աշխատել, հետևաբար՝ վարչապետին անվտանգություն հայտնելու համար ժամկետային սահմանափակում նախատեսելը, կարծում ենք, արդյունավետ չէ:

գ. *Կառավարության առանձին անդամին անվտանգություն հայտնելու ինստիտուտի նախադրեսում*, Ազգային ժողովում հարցապնդում-

ների պատասխանները քննարկելու հետևանքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը կարող են նախաձեռնել ինչպես վարչապետին անվտանգություն հայտնելու հարցը, այնպես էլ կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը: Կառավարության առանձին անդամին անվտանգություն հայտնելու ինստիտուտը գործում է նաև Լեհաստանում (Սահմ. 158-րդ հոդված), Էստոնիայում (Սահմ. 97-րդ հոդված), Լատվիայում (Սահմ. 59-րդ հոդված):

ՀՀ-ում կառավարության գործունեության կայունության ապահովման նպատակով անհրաժեշտ է նախատեսել նաև այլ մեխանիզմներ: Որպես այդպիսին՝ առաջարկում ենք դիտարկել նաև հետևյալ մեխանիզմը. այն դեպքում, երբ Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ անվտանգություն հայտնի կառավարությանը, դա պետք է հանգեցնի Ազգային ժողովի արձակման, այսպիսի մեխանիզմի նախատեսումը, կարծում ենք, որոշ չափով կնպաստի կառավարության գործունեության կայունության ամրապնդմանը:

Խորհրդարանական մոդելի պետություններում առանցքային խնդիրներից մեկն օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացումն է: Խորհրդարանական մոդելի պետություններում գործադիր իշխանությունը տիրապետում է հսկայական վարչական և նյութական ռեսուրսների, ինչի շնորհիվ բավականին հզոր է⁵: Այս համատեքստում առանցքային խնդիրներից մեկը դառնում է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացումը: Իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական, նախագահական և կիսանախագահական մոդելներից յուրաքանչյուրի դեպքում էլ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացման գործառույթը վերապահված է օրենսդիր իշխանությանը: Սակայն օրենսդիր իշխանությանը գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթների իրավական առումով ամրագրումը դեռևս բավարար չի արդյունավետ վերահսկու-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

⁵ Առավել մանրամասն տե՛ս. Керимов А.Д. Исполнительная власть в системе разделения властей, Гражданин и право. 2001. р. 9.

կողություն իրականացնելու համար: Ազգային ժողովի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ են վերահսկողական գործուն մեխանիզմներ⁶:

Այս առումով անհրաժեշտ է վերլուծել ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ նախատեսված այն մեխանիզմները, որոնցով Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, և գնահատել՝ արդյոք այդ մեխանիզմները բավարար են արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:

Գործադիր իշխանության նկատմամբ Ազգային ժողովի կողմից վերահսկողության իրականացումն անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից՝ իրավական և քաղաքական: Իրավականը ենթադրում է, թե սահմանադրաիրավական մակարդակով պետք է առկա լինի բավարար գործիքակազմ՝ վերահսկողություն իրականացնելու համար: Այս առումով՝ ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ, կարծում ենք, նախատեսվել է վերահսկողության բավարար գործիքակազմ, որը դրսևորվում է հետևյալ մեխանիզմների ձևով՝ ա) *Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ ֆինանսական վերահսկողության իրականացում, բ) կառավարության անդամներին հարցերով և հարցապնդումներով դիմելու ինստիտուտի նախատեսում, գ) Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրերի վավերացում, կասեցում կամ չեղյալ հայտարարում, դ) հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու նպատակով քննիչ հանձնաժողովների ստեղծում*⁷:

Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացման համար իրավական գործիքակազմի առկայությունը դեռևս բավարար չէ, անհրաժեշտ է նաև համապատասխան քաղաքական կամքի դրսևորում: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ **խորհրդարանական մո-**

դելի պետություններում պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերը քաղաքական առումով անմիջականորեն փոխկապակցված են, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերում գերիշխում է նույն քաղաքական ուժ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարությունը ձևավորվում է Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն ստացած ուժի կողմից, որպես արդյունք՝ կառավարությունում և Ազգային ժողովում մեծ ազդեցություն է ձեռք բերում Ազգային ժողովում հաղթած քաղաքական ուժը⁸:

Այդ պայմաններում հարց է առաջանում, թե Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն ունեցող ուժը կդրսևորի բավարար քաղաքական կամք իր ձևավորած կառավարության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացնելու համար: Կարծում ենք՝ Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն կազմող ուժը չի կարող արդյունավետ վերահսկողություն իրականացնել գործադիր իշխանության նկատմամբ, քանի որ, քաղաքական տեսանկյունից, որոշակի կաշկանդվածություն ունի:

Ազգային ժողովի քաղաքական առումով կաշկանդվածությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարության ղեկավարը՝ վարչապետը, որպես կանոն, համարվում է նաև խորհրդարանական մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի ղեկավարը: Այս պարագայում ակնհայտ է, որ պառլամենտական մեծամասնության գործունեությունը քաղաքական առումով անմիջականորեն կապված է նաև կուսակցության ղեկավարի դիրքորոշումներից: Այս պայմաններում, ինչպես իրավագիտորեն նշում է Դուվերթեն, իշխանությունը կենտրոնանում է վարչապետի ձեռքում, և կուսակցական կարգը ու վարչապետի հսկողական լծակ-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

⁶ Տե՛ս. Лорд Филипп Хортон, Парламентские учреждения, основные концепции, Ашхабад, 2011 г. с. 18.
⁷ ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ նախատեսվել են պառլամենտական վերահսկողություն նոր մեխանիզմներ, ինչը դրսևորվում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերող փաստերը պարզելու նպատակով քննիչ հանձնաժողովների ստեղծմամբ: Գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության այս ձևը լայնորեն կիրառվում է խորհրդարանական մոդելի մի շարք պետություններում (Սլովենիայում՝ Սահմ. 93-րդ հոդված, Չեխիայում՝ Սահմ. 30-րդ հոդված, Իտալիայում՝ Սահմ. 82-րդ հոդվածի, Գերմանիայում՝ Սահմ. 44-րդ հոդված):
⁸ Տե՛ս Կутафин О. Е. Российский конституционализм, М., 2008. с. 211., տե՛ս նաև Ozbudun, Ergun «Contemporary turkish politics, challenges to democratic consolidation», London, Lynne reinner publishers 2000 p. 86.

ները հանգեցնում են գործադիր իշխանության գերիշխանության⁹:

Հաշվի առնելով վերը նշված խնդիրները՝ ակնհայտ է դառնում, որ խորհրդարանական մոդելի պետություններում իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման ապահովման նպատակով անհրաժեշտ են նոր, առավել արդյունավետ լուծումներ: Այս առումով, կարծում ենք, իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելում Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ **վերահսկողության իրականացման գործում առանցքային դերակատարություն պետք է ստանձնի պառլամենտական ընդդիմությունը:**

Նշված խնդիրն անդրադարձել է նաև **Վենետիկի** հանձնաժողովը՝ նշելով, որ խորհրդարանական մոդելի պետություններում օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի հարաբերություններում իրական «*հակառակորդները*» ոչ թե պառլամենտն ու կառավարությունն են, այլ՝ պառլամենտում քաղաքական մեծամասնությունն ու պառլամենտական ընդդիմությունը¹⁰: **Վենետիկի** հանձնաժողովի վերը նշված դիտարկումից բխում է, որ պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև գործող զսպումների և հավասարակշռման մեխանիզմներն անհրաժեշտ է դիտարկել նաև պառլամենտական մեծամասնության և պառլամենտական փոքրամասնության հարաբերությունների տեսանկյունից:

ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի անցման հետևանքով՝ Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու և օրենսդիր ու գործադիր իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման մեխանիզմների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ստեղծել բավարար իրավական և քաղաքական երաշխիքներ պառլամենտական ընդդիմության գոր-

ծունեության համար: Այս առումով ակնհայտ է, որ ՀՀ 2015թ. Սահմանադրությունը բավականին առաջադիմական է պառլամենտական ընդդիմության դերակատարության ընդլայնման տեսանկյունից, քանի որ մի շարք ոլորտներում պառլամենտական ընդդիմությունը որոշակի դերակատարություն է ստացել:

ա) Հանրապետության նախագահի ընտրության ոլորտ. Հանրապետության նախագահի ընտրության առաջին և երկրորդ փուլերի համար նախատեսվել են պատգամավորների ընդհանուր թվի ձայների *առնվազն երեք քառորդը* և *առնվազն երեք հինգերորդը*, սակայն, եթե առաջին և երկրորդ փուլերից հետո Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որի դեպքում Հանրապետության նախագահն ընտրվում է ձայների մեծամասնություն ստացած թեկնածուն: Վերը նշվածից բխում է, որ Հանրապետության նախագահի ընտրության առաջին և երկրորդ փուլերում պառլամենտական ընդդիմությունը որոշակի դերակատարություն ունի, սակայն, եթե առաջին և երկրորդ փուլերի ընթացքում Հանրապետության նախագահ չի ընտրվում ապա Հանրապետության նախագահի ընտրության երրորդ փուլի ընթացքում Հանրապետության նախագահը կարող է ընտրվել առանց պառլամենտական ընդդիմության աջակցության:

բ) Օրենսդրական ոլորտ. պառլամենտական ընդդիմությունը կարևոր դերակատարություն է ձեռք բերել սահմանադրական օրենքների ընդունման ոլորտում, քանի որ սահմանադրական օրենքները պետք է ընդունվեն պատգամավորների ընդհանուր թվի ձայների *առնվազն երեք հինգերորդով*: **Օրենսդրական ոլորտում պառլամենտական ընդդիմության դերակատարության բարձրացման տեսանկյունից՝ կարևոր նշանակություն կարող է ունենալ սահմանադրական օրենքների շրջանակի ընդլայնումը, հետևաբար՝ առաջարկում են դիտարկել սահմանադրական օրենքների շրջանակի ընդլայնման հարցը:**

⁹ Տե՛ս M. Duverger, Political parties, their organization and activity in the modern state, New York, 1963, p. 393.
¹⁰ Տե՛ս European commission for democracy through law, «On the role of the opposition in a democratic parliament», CDL-DEM (2010)001, Strasbourg, October 2010, հասանելի էր՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-DEM\(2010\)001-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-DEM(2010)001-e)

գ) Ազգային ժողովի աշխատանքի կազմակերպման մասնակցություն. այս առումով կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ Ազգային ժողովի նախագահի երեք տեղակալից մեկը պետք է լինի պառլամենտական ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչ:

դ) **Գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության ոլորտ**. պառլամենտական ընդդիմությանը լիազորություն է վերապահվել՝ ստեղծել քննիչ հանձնաժողովներ, որոնք ստեղծվում են Սահմանադրությամբ սահմանված կարգով՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ ընդլայնվել է պառլամենտական ընդդիմության դերակատարությունը, այնուամենայնիվ, Սահմանադրությամբ պառլամենտական ընդդիմությանը վերապահված լիազորությունները դեռևս բավարար չեն իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման ապահովման համար: Հետևաբար՝ անհրաժեշտ է նախատեսել նոր կառուցակարգային մեխանիզմներ, որոնց շնորհիվ կմեծանա պառլամենտական ընդդիմության քաղաքական դերակատարությունը:

ՀՀ-ում պառլամենտական ընդդիմության դերակատարության ընդլայնման տեսանկյունից՝ առաջարկում ենք մշակել և ընդունել «Պառլամենտական ընդդիմության մասին» ՀՀ օրենք, որով առավել հստակ և համակարգված կերպով պետք է կարգավորվեն պառլամենտական ընդդիմության հիմնական գործառույթների և լիազորությունների հետ կապված հարցերը (այդպիսի օրենքներ գործում են Ուկրաինայում, Պորտուգալիայում, Մակեդոնիայում, Նորվեգիայում և այլուր): «Պառլամենտական ընդդիմության մասին» ՀՀ **օրենքով անհրաժեշտ է նախատեսել պառլամենտական ընդդիմության դերակատարության բարձրացման նոր կառուցակարգեր**: Այս առումով ա-

ռաջադեմ միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ գոյություն ունեն պառլամենտական ընդդիմության քաղաքական դերակատարության մեծացման տարատեսակ մեխանիզմներ, որպես օրինակ՝ կարող ենք նշել, որ մի շարք պառլամենտական ընդդիմություններ ունեն օրինագծերի ընդունման ժամկետի հետաձգման լիազորություն (Դանիայում, Պորտուգալիայում պատգամավորների 2/5-րդը կարող են պահանջել, որպեսզի օրենքի նախագծի ընդունումը հետաձգվի տասներկու օրով):

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ օրենսդիր իշխանությունը համարվում է ժողովրդի անմիջական լեգիտիմությամբ օժտված ներկայացուցչական մարմինը, որն ընդունում է օրենքներ և վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: Ազգային ժողովը պետական իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ օժտված է գործառույթային գերակայությամբ, ինչը պայմանավորված է Ազգային ժողովի կողմից իրականացվող գործառույթների բնույթով:

ՀՀ-ում խորհրդարանական կառավարման մոդելի անցման հետևանքով՝ առաջացել է իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի կետրոնացման իրական վտանգ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարությունը ձևավորվում է պառլամենտում հաղթած քաղաքական ուժի կողմից, ուստի իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերում գերիշխելու է մեկ քաղաքական ուժ, որի պարագայում իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման մեխանիզմները չեն կարող արդյունավետ գործել: Այդ դեպքում, իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության ապահովման տեսանկյունից՝ անհրաժեշտ է նոր երաշխիքներ նախատեսել պառլամենտական ընդդիմության համար:

ՀԱՄԼԵՏ ԱՏԵՓԱՆՅԱԼ

«Հ փաստաբանների պալատի փաստաբան»

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԲԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՉԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ

Փաստաբանությունը պետականորեն կամ արհեստականորեն ստեղծված ինստիտուտ չէ, երբևէ չի հանդիսացել պետական համակարգի բաղադրամաս: Փաստաբանության ստեղծումն առավելապես պայմանավորված էր հասարակությունում հետզհետե ձևավորվող պահանջմունքով:

Փաստաբանությունն ունի դարերից եկող արմատներ: «Փաստաբան» եզրույթը լատինական ծագում ունի (advocates), որը նշանակում է «օգնության կանչված»¹: Փաստաբանն այն իրավաբանն է, որը մանագիտական իրավական օգնություն է ցուցաբերում դրա կարիքն ունեցողներին: Փաստաբանությունը, որպես պաշտպանության ձև, ծագել է շատ վաղ անցյալում: Ի սկզբանե մարդն ինքնուրույն է պաշտպանվել արտաքին ազդակներից ու վտանգավոր երևույթներից և միայն հետո, իր զարգացմանը զուգընթաց, սովորել է հարաբերություններ հաստատել այլոց հետ՝ հաղորդակցվել, առևտուր անել և այլն: Այսպիսի վարքագիծը, ինքնին, ինքնապաշտպանության դրսևորում էր, որը հարազատների, ցեղակիցների պաշտպանության հետ դարձավ կենսաբանորեն պայմանավորված զբաղմունք:

Փաստաբանության առաջնային դրսևորման՝ մասնագիտական պաշտպանությունը, իր հերթին, առաջացել է վաղ քաղաքակրթության ձևավորման հետ մեկտեղ, երբ թույլը խնդրում էր ուժեղին՝ օգնել իրեն, և վերջինս բավարարում էր խնդրանքը, ընդ որում՝ ոչ միայն իրեն դիմած անձի, այլև՝ բոլոր ցանկացողների համար: Հետաքրքրական է, որ ի սկզբանե դա արվում էր հաճույքի համար, իսկ հետո՝ վճարովի հիմունքներով: Հենց այդ սոցիալական աղբյուրներից էլ սկիզբ է առնում փաստաբանությունը:

Փաստաբանությունն իրեն բնորոշ այժմեական գծերը ձեռք բերեց պետության կողմից պաշտոնապես ճանաչում ստանալուց հետո: Ստացվում է, որ փաստաբանությունը ծնունդ առավ հասարակական կյանքում, իսկ ձևավորվեց որպես այդպիսին՝ պետության կողմից: Մեզ համար ընդունելի չէ այն հայեցակետը, թե փաստաբանության առաջացումը պայմանավորված է դատարանների ձևավորմամբ: Իսնդիրն այն է, որ դատարանները, որպես վեճեր քննող պետական մարմիններ, պատմականորեն առաջացել են ոչ վաղ անցյալում, իսկ վաղ անցյալում ծնունդ առած պաշտպանությունը մշտապես փնտրել է իր աշխատանքի օբյեկտը, որը հստակեցվեց, երբ սոցիալական ասպարեզում հայտնվեցին դատարանները: Իրավապահների (նաև՝ փաստաբանների) հատուկ դասն առաջացավ միայն այն ժամանակ, երբ սովորույթային իրավունքն իր տեղը զիջեց օրենքին, պետությունն իր զարգացմամբ հասավ առավել բարձր մակարակի, և օրենքի իմացությունը ոչ բոլորի համար եղավ մատչելի: Այսպիսի իրավիճակը հանգեց աստիճանաբար ձևավորվող օբյեկտիվ պահանջմունքի՝ փաստաբանության առաջացմանը և իրավական ամրագրմանը:

Պատմականորեն՝ տարբեր երկրներում փաստաբանության ձևավորումը բազմապատկեր է: Օրինակ՝ Հունաստանում փաստաբանների խավ, որպես այդպիսին, չի եղել: Հունական «փաստաբանությունն» առավելապես կապված էր հռետորական արվեստի հետ: Իրավական ներկայացուցչությունը Հունաստանում չհասցրեց ձևավորվել: Դատարանում քաղաքացին ինքն էր անձանք ելույթ ունենում, կամ ելույթ էին ունենում նրա բարեկամները:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

¹ Баранов Д. П., Смоленский М. Б. Адвокатское право: Учебник. – М.: Издательско-торговая корпорация “Дашков и К”, Ростов н/Д: Наука-Пресс, 2006. С. 7.

Հին Հռոմում փաստաբանության հիմքը դրեց այսպես կոչված «պատրոնատը» («պատրոն» և «փաստաբան (ադվոկատ)» բառերը նույն իմաստն ունեն), որը հանդես էր գալիս որպես հռոմեական իրավունքի առանձին ինստիտուտ: Ընդ որում՝ փաստաբանությամբ կարող էին զբաղվել միայն Հռոմի լիարժեք քաղաքացիները՝ պատրիկները: Եթե հանրապետական Հռոմում փաստաբանությունը բացարձակապես ազատ մասնագիտություն էր, չունեի մեկուսախմբային կազմակերպվածություն, ապա, մ. թ. 4-րդ դարից սկսած՝ Հռոմեական կայսրության ժամանակներում, փաստաբանությունը վերածվեց պետական ծառայության: Այդպիսի ծառայությունների համար սկսեցին ստեղծվել կառավարությանը ենթակա պաշտոններ: Հետադարձ «հաստիքային» փաստաբանները, ի տարբերություն «ոչ հաստիքայինների», մի շարք արտոնություններ ստացան:

Փաստաբանության կազմակերպման այդ ուղղությունների գոյությունը Հռոմում հետագայում անդրադարձավ տարբեր պետություններում փաստաբանության ինստիտուտի զարգացման վրա²:

Պատմականորեն, մինչիրավական և իրավական պետականության զարգացմանը զուգընթաց, փաստաբանությունն ունեցել է տարբեր կարգավիճակ՝ գտնվել է պետությունից կախյալ կամ հարաբերականորեն անկախ վիճակում: Օրինակ՝ պրուսական թագավոր Ֆրիդրիխ 2-ը 1780 թ. ամբողջությամբ վերացրեց փաստաբանությունն իր երկրում և փոխարինեց վարձատրվող դատարանի պաշտոնյա-ընթերականերով:

Սակայն պետական փաստաբանությունը շուտով ծնեց ընդհատակյա փաստաբանների, քանի որ «դատավորի օգնականները» չէին արդարացնում բնակչության վստահությունը: Այս առիթով մինչհեղափախման ժամանակների հայտնի իրավաբան Ի. Ֆոյնիցկին գրում է. «Դառնալով պաշտոնատար անձինք՝ փաստաբանները կորցնում են իրենց վստահված շահերի պաշտպանության համար անհրաժեշտ անկախությունը և ինքնուրույնությունը: Փաս-

տաբանների՝ դատարանի կազմում հայտնվելը վնասում է վերջիններիս անկախությանը. պետք է ենթադրել, թե դատավարություններում բաց պայքարը կլրացվի դատարանի ազդեցիկ դատավորների հետ անդրկուլիսային համաձայնություններով»³:

Այս առումով՝ Յու. Ստեցովսկին տեղին է նշում, որ «լիարժեք իրավական օգնության համար անհրաժեշտ է անկախ և ինքնակառավարվող փաստաբանություն, դրա մասին խոսք լինել չի կարող, եթե փաստաբանների ընդունելության և կարգապահական պատասխանատվության գործառույթը պատկանում է պետական մարմիններին, այլ ոչ թե փաստաբանությանը: Հաստիքային փաստաբանությունն այլ նպատակ էր հետապնդում. փաստաբանին դնել կախյալ, ենթակայական վիճակում, դարձնել նրան վարչակազմի կամքի խոնարհ կատարող»⁴:

Բուլղարիայի Ռուսաստանի մի կարճ ժամանակահատվածում պաշտպանը համարվում էր պետական հիմնարկի պաշտոնատար անձ: Պաշտպաններին ընտրում էին Խորհուրդների գործկոմիները և ընդգրկում պաշտպանների, մեղադրողների և քաղաքացիական գործով կողմերի ներկայացուցիչների կոլեգիայի կազմի մեջ՝ դատավորի աշխատավարձին հավասար աշխատավարձով: Դատավարություններում մասնակցության համար գումարի չափը որոշում էր դատավորը: Այդ գումարներն անցնում էին պետությանը: Կոլեգիաների հիմնական խնդիրն էր՝ գործի բոլոր հանգամանքներն առավել լրիվ պարզելու համար ամեն կերպ օժանդակել դատարանին:

Շուտով աչքի զարնվեցին կազմավորված նոր փաստաբանական կառույցի անկենսունակությունն ու անարդյունավետությունը, և առաջ քաշվեց փաստաբանության որոշակի ինքնուրույնության, ինքնավարության հիմնահարցը: Որպես արդյունք՝ 1922 թ. օրենսդրորեն Խորհրդային Ռուսաստանի դատապաշտպանների ինստիտուտին (կոլեգիաներին) տրվեց հատուկ կարգով գործող ոչ պետական կազմակերպության կարգավիճակ, սակայն կոլեգիաները, ու-

² Ազարյան Ե. Փաստաբանության հիմունքները/Ուսումնագործական ձեռնարկ.- Եր., Գաասպրինտ, 2006, էջ 17:

³ Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. 1. СПб., 1912. С. 483-484.

⁴ Стецовский Ю.И. Адвокатура и государство.- М.: Юристы, 2007. С. 76.

նենալով իրենց հատուկ կառուցվածքը և ինքնուրույն գործառույթները, շարունակում էին մնալ պետական մարմինների վերահսկողության ներքո. ինչպես ցույց տվեց խորհրդային իրականությունը՝ կոմունիստներին անկախ փաստաբանություն պետք չէր: Տեղերում բնակչության իրավական օգնության, մեղադրանքի և պաշտպանության կազմակերպման պարտականությունը դրվեց համապատասխան պետական մարմինների (Արդժողկոմատների)՝ արդարադատության բաժինների վրա: Պաշտպանի մասնակցության հարցը տնօրինական նիստով լուծում էր դատարանը՝ դատաքնության փուլից:⁵

Սակայն դրական զարգացումն այն էր, որ լուծում ստացավ փաստաբանության համար այն կարևորագույն հարցը, որ փաստաբանը չի կարող նշանակվել և լինել պետական ծառայող, այլ՝ կազմակերպությունն ինքն է փաստաբանին ընդունում իր շարքերը՝ առանց պետության միջամտության:

Ինչպես ցույց է տալիս փորձը՝ փաստաբանները միայն այն դեպքում կարող են իրականացնել իրենց մասնագիտական պարտքը, եթե միավորված են ինքնուրույն հասարակական կազմակերպության մեջ: Պարզ է, որ երբ պաշտպանը և մեղադրողը պետության ներկայացուցիչներ են, իրենց տրամադրության տակ ունեն միևնույն ապացույցները, հավանաբար, գործով նրանց հետևությունները կլինեն միանման: Նման իրավիճակում պաշտպանն անխուսափելիորեն դառնում է դատախազի օգնականը, իսկ դատավճիռը՝ մեղադրական:

Իրավաբանական գրականությունում նշվում է, որ փաստաբանությունը «դատական - օժանդակ կազմավորում է»: Իրականում դատարանների և փաստաբանության իրավական բնույթը տարբեր է: Թեև փաստաբանի աշխատանքը առավելապես կապված է դատարանների հետ, սակայն, ունենալով այլ գործառույթներ ու նպատակներ՝ չի վերածվում «դատական օժանդակ կազմավորման»: Ճիշտ էր Մ. Շալամովը,

երբ փաստաբանությունը համարում էր ոչ թե այդպիսին, այլ՝ «հասարակական և ինքնակառավարվող կազմակերպություն»⁶:

Անառարկելի է, որ փաստաբանական գործառնությունը պետական նշանակություն ունի, սակայն դա չի նշանակում, թե փաստաբանը պետության ներկայացուցիչն է. դատավարությունների ժամանակ գործով ճշմարտության բացահայտման աջակցությունը չի փոխում փաստաբանության իրավական բնույթը: Փաստաբանությունը մնում է որպես հասարակական կազմակերպություն և չի դառնում «դատավորի օգնական»:

1977 թ. ընդունվեց ԽՍՀՄ երրորդ Սահմանադրությունը, որում առաջին անգամ խոսք եղավ փաստաբանության մասին, որը հռչակվեց որպես հանրային ինստիտուտ (հոդ. 161): Ընդամին, իրավական բնույթից ելնելով՝ փաստաբանությունը դիտարկվում էր որպես հասարակական կազմակերպություն, որը փաստաբանությանը հաղորդում էր ոչ պետական բնույթ: Դա է պատճառը, որ խոսքն այն մասին էր, որ «փաստաբանների կոլեգիաները ոչ պետական, մասնագիտական, կամավոր միավորումներ են»⁷:

Ինչպես այլ հասարակական կազմակերպություններ՝ փաստաբանների կոլեգիաները պետք է կազմավորվեին ինքնակառավարման սկզբունքով, ինչը բնութագրվում է անդամության կամավորությամբ, ընտրովի մարմիններում մասնակցությամբ և դրանց գործունեության նկատմամբ հսկողությամբ, կոլեգիայի նյութական միջոցների ձևավորմանը փաստաբանների մասնակցությամբ և այլն:

Փաստաբանական կազմավորումները զույատևում էին սեփական միջոցների հաշվին: Դրանց ստեղծման համար փաստաբանները հոնարարի մի մասը փոխանցում էին կոլեգիաներին:

Հասարակական կազմակերպությունների գործունեության մեթոդներն են համոզումը և դաստիարակությունը: Այս մեթոդներն անհրաժեշտ են նաև պետական մարմիններին: Սա-

⁵ Ղազինյան Գ. Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալսարանի հրատ., 2001թ., էջ 77:

⁶ Шаламов М.П. Слово адвокату. Советская юстиция. 1982. №6. С. 32.

⁷ Осетров Н.Ю. Юридическая помощь адвокатов гражданам и организациям. Социалистическая законность. 1982. №5. С. 24.

կայն, ի տարբերություն դրանց՝ հասարակական կազմակերպություններն օժտված չեն պետական իշխանությանը բնորոշ հարկադրական լիազորություններով: Փաստաբանական կոլեգիաների պարագայում եթե հարկադրանքը թույլատրելի է, ապա միայն իրենց ադամների նկատմամբ:

Սակայն ստացվեց այնպես, որ շարադրված դրույթների մեծ մասը կյանքի չկոչվեց, այլ մնաց որպես բարի ցանկություն և նպատակ: Գիտական մտքի համար ընդունելի է այն, որ հասարակական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության բաղկացուցիչ մասն են, հատկանիշն ու անհամապարփակության հիմքը: Սակայն խորհրդային փաստաբանությունը եղել է և մնաց կուսակցական-պետական մեքենայի մասը և նրա շահերը սպասարկող գործիքներից մեկը: Բոլորին պետական ծառայող դարձնելը կոմունիստական անսահման իշխանության ամոթալի գծերից մեկն էր: Փաստաբանությունը չի կարող լինել հանրային իշխանության կազմում: Վերջինս պատկանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին: Հասարակական կազմավորումն օժտված է կորպորատիվ իշխանությամբ, տարածվում է տվյալ կազմավորման անդամների վրա, ունի հանրային բնույթ և, իհարկե, զգալիորեն սահմանափակ է:

Ըստ կազմակերպական-իրավական ձևի, ինչպես արդեն նշել ենք՝ փաստաբանությունը հասարակական կազմակերպություն է: Բայց փաստաբանությունն էականորեն տարբերվում է այլ իրավապաշտպան կազմակերպություններից: Տարբերությունն այն է, որ փաստաբանական հանրությունն իր անդամներին պետք է առաջադրի սովորականից ավելի բարձր մասնագիտական և որակական պահանջներ, իսկ նրա մարմինները վերահսկեն փաստաբանների գործունեությունը:

Փաստաբանները, չվերաձվելով պետական պաշտոնյաների, մնում են որպես «ազատ մասնագիտության» մարդիկ: Հատկապես այդպիսի կարգավիճակով է հնարավոր արդյունավետ բանավիճել պետական մարմինների ներկայացուցիչների հետ, ընդ որում՝ ոչ միայն քաղաքացիական և քրեական գործերով:

Ողջամիտ վստահորդին անհրաժեշտ չէ փաստաբան՝ դատավորի կամ այլ իշխանա-

կան մարմնի օգնական: Դա անհամատեղելի է մարդու հիմնարար իրավունքներից մեկի՝ որակյալ իրավական օգնություն ստանալու հետ:

Շատ կարևոր է, որ փաստաբանական գործունեությունը ոչ առևտրային բնույթ ունի: Անկասկած՝ փաստաբանի աշխատանքը պետք է ըստ արժանվույն վարձատրվի: Դրա հետ մեկտեղ՝ փաստաբանական գործունեության նպատակը սկզբունքորեն այլ է: Այս ամենը փաստաբանին դարձնում է որակյալ համակողմանի իրավական օգնություն ցուցաբերող սուբյեկտ:

Իրավական պետությունը և կայացած քաղաքացիական հասարակությունը, իր ինստիտուտներով հանդերձ, փոխկապված են, լրացնում են միմյանց՝ մեկի գոյությունը պայմանավորված է մյուսի առկայությամբ: Իրավական պետությունը հանրային-քաղաքական իշխանության կազմակերպման, անհատի, պետության և հասարակության միջև փոխհարաբերությունների այնպիսի ձև է, որում գործում է իրավունքի գերակայության սկզբունքը, և մարդու բնական իրավունքները իրավաբանորեն ամրագրված են ու պահպանված: Իրավունքի պաշտպանության գործառույթն իրականացնում է պետությունը՝ իր ստեղծած վերահսկող մարմինների միջոցով: Սակայն պետությունը չի կարող արդյունավետ կերպով վերահսկել ինքն իրեն, ինչը լրացնում է քաղաքացիական հասարակությունը՝ համապատասխան ինստիտուտների, այդ թվում՝ փաստաբանության միջոցով: Որպես արդյունք՝ փաստաբանական գուծունեությունը ձեռք է բերում պետական-հասարակական նշանակություն:

Այսպիսով՝ **փաստաբանությունը, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, իրավական պետության կայացմանը նպաստող գործոն, համարվում է ոչ պետական և ոչ առևտրային՝ փաստաբանական գործունեությամբ զբաղվող անձանց մասնագիտական (իրավապաշտպան) կամավոր միավորում, որի նպատակն իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, ծառայելով հասարակությանը և ունենալով պետական նշանակություն՝ հավասարակշռություն է ապահովում հասարակության, առանձին քաղաքացիների և պետության շահերի**

միջև, ապահովում է արդարադատության մարչելիությունը:

Հայրենական փաստաբանության առաջացման, ձևավորման, զարգացման սկիզբը դրվեց (հայտնի պատճառներով՝ դարեր շարունակ պետականության կորուստ, դրա վերականգնումը միայն 20-րդ դարի սկզբներին) Հայաստանի 1-ին Հանրապետության ժամանակաշրջանում, և Հայաստանի՝ ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկվելու պարագայում ամբողջությամբ ընթացավ վերը շարադրված դրույթներին, օրինաչափություններին ու կանոններին համահունչ:

« 1995 թ. Սահմանադրության 40, 93 և 16 հոդվածների լույսի ներքո՝ 1995-2005 թվականներին իրականացված բարեփոխումները նշանավորում են Հայաստանում փաստաբանության ձևավորման նոր փուլ՝ անկախ պետականության պայմաններում:

Անցած դարի 90-ականներին մեր երկրում իրականացված տնտեսական ազատականացումը, հողային ռեֆորմը, լիամասշտաբ ազատականացումը, սեփականության հարաբերությունների արմատական փոփոխությունները, բարձրորակ իրավական օգնության պահանջարկը, փաստաբանների թվաքանակի զգալի աճը սրություն հաղորդեցին քաղաքացիների իրավունքներն արդյունավետ պաշտպանելու (հատկապես՝ ձեռնարկատիրության ոլորտում) ունակ փաստաբանություն ստեղծելու հիմնախնդրին:

Երկրում իրականացվող դատաիրավական բարեփոխումներին զուգահեռ մշակվեց և 1998թ. հունիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը վավերացվեց ՀՀ Նախագահի կողմից հուլիսի 18-ին⁸: Օրենսդրորեն փաստաբանների կոլեգիայի իրավահաջորդ ճանաչվեց ՀՀ փաստաբանների միությունը, որը, փաստորեն, պետք է հիմնադրվեր առաջինը: Օրենքը թույլատրում էր միությունների բազմակիությունը:

Օրենքով լուծվեց փաստաբանության կարգավիճակին բնորոշ՝ օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից օգտվող, անկախ, ինքնակառավարվող միավորում լինելու հիմնա-

հարցը: Որպես այդպիսին՝ նորաստեղծ Փաստաբանների միությունը պետք է գրանցվեր վճարել դատարանում: Իրավաբանական կոնսուլտացիաների փոխարեն՝ թույլատրելի էր օրենքով նախատեսված աշխատանքի կազմակերպական-իրավական ցանկացած ձև:

Օրենքով առաջին անգամ ներմուծվում էր փաստաբանների արտոնագրման գաղափարը: Փաստաբան էր համարվում փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստացած փաստաբանը, ում համար անհրաժեշտ էր բավարարել երկու պահանջի՝ ունենալ բարձրագույն իրավաբանական կրթություն, հանձնել որակավորման քննություն՝ ստանալ համապատասխան վկայական և դիմում ներկայացնել ՀՀ փաստաբանների միություն՝ արտոնագիր ստանալու համար:

Արտոնագրումն ուներ մի լուրջ բացթողում: Ինդիքն այն է, որ արտոնագրվողին որոշակի փորձ ունենալու պահանջ չէր ներկայացնում: Որպես արդյունք՝ Փաստաբանների միությունն համալրվեց անփորձ, ԲՈՒՀ-ն ավարտած երիտասարդ փաստաբաններով, ովքեր կարիք ունեին մասնագիտական պատրաստման:

1999 թ. մարտի 7-ին տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների միության հիմնադիր ժողովը, և նախկին փաստաբանների կոլեգիայի փոխարեն՝ ստեղծվեց ՀՀ փաստաբանների միությունը: Կազմավորվեցին միության մարմինները: Նախկին կառուցվածքը համալրվեց նոր մարմնով՝ կարգապահական հանձնաժողովով, որը պետք է հետամուտ լիներ փաստաբանների կողմից օրենքով սահմանված կարգապահական դրույթների պահպանության վերահսկողության իրականացմանը:

Փաստաբանական գործունեության վճարովիությունն օրենսդրական ամրագրում ստացավ: Հոնորարի չափն ու վճարման կարգը որոշվում էին փաստաբանի և վստահորդի միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով: Պահպանվեց անվճար իրավաբանական օգնության ինստիտուտը. անհրաժեշտության դեպքում դա ապահովում էր պետությունը՝ ՀՀ փաստաբանների միության միջոցով՝ պետության ֆինանսավորմամբ: Կարելի է ասել, թե՛ 1998թ. օրենքը որոշակիորեն լուծեց ևս մեկ հիմնախն-

⁸ «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 1998/15 48, 27.07.1998թ.

դիր՝ մրցակցությունը փաստաբանության համակարգում: Արդեն 2005 թ. արտոնագրված փաստաբանների թիվը 483 էր⁹: Աստիճանաբար աճում էր որակյալ փաստաբանական ծառայությունների առաջարկը: Սակայն փաստաբանները, ցրված լինելով առանձին-առանձին միություններում, նմանվում էին պատերազմի դաշտում մենակ պայքարող զինվորների:

Փաստաբանության առջև ծառայում ևս մեկ հիմնախնդիր՝ փաստաբանների իրավունքներն իրավապահ և դատական մարմինների հետ փոխհարաբերություններում առավել արդյունավետ պաշտպանելու համար համախմբել նրանց մեկ ընդհանուր կառույցում: Ավելին՝ վարքագծի կանոնները պահպանվում էին միակողմանի՝ փաստաբանների կողմից, ընդհանուր իրավաբանական էթիկայի կանոնների բացակայությունը փաստաբանների աշխատանքում լուրջ խոչընդոտներ էր ստեղծում: ՀՀ Ազգային ժողովը 2004 թ. դեկտեմբերի 14-ին ընդունեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը՝ նոր խմբագրությամբ, որը ՀՀ Նախագահը ստորագրեց 2005թ. հունվարի 13-ին¹⁰, և սկսվեց փաստաբանության զարգացման արդի փուլը: Նախ՝ վերացվեցին փաստաբանների միությունները, և ստեղծվեց մեկ միասնական կառույց՝ ՀՀ փաստաբանների պալատը: Օրենքը նպատակ է հետապնդում հզորացնել այդ կառույցը, բարձրացնել փաստաբանության հեղինակությունը, լիակատար ազատություն է շնորհում փաստաբանությանը՝ թույլատրում է նրան ազատորեն իրականացնել ինքնակառավարման իրավունքը:

Օրենքը, ՀՀ փաստաբանների պալատը որակելով որպես փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, նախատեսում է, որ պալատն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից: Այսինքն՝ փաստաբանների պալատը գրանցվում է ոչ թե Վճռաբեկ դատարանում, ինչպես մինչ այդ էր, այլ՝ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրում:

Փաստաբանների պալատի խնդիրները

միտված են իր անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, փաստաբանության հեղինակության բարձրացմանը, անվճար իրավաբանական օգնություն ստանալու ապահովմանը, հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը: Դրանց անշեղ իրականացումը լուրջ նախադրյալներ է ստեղծում փաստաբանական գործունեության արդյունավետության և որակի բարձրացման համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17 հոդ. 1-ին մասի համաձայն՝ փաստաբան է այն անձը, ով ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար: Նման կարգավորմամբ վերջ է դրվել մասնավոր և պետական ԲՈՒՀ-երի դիպլոմների միջև խտրական մոտեցումներին:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, թույլատրում են փաստաբանին՝ փաստաբանությանը զուգահեռ զբաղվել ցանկացած այլ գործունեությամբ: Միակ սահմանափակումը Կանոնագրքի 2.5 կետով նախատեսված՝ պետական կամ համայնքային ծառայության մեջ գտնվելիս փաստաբանական գործունեություն իրականացնելու արգելքն է: Ստացվում է, որ փաստաբանը միաժամանակ կարող է զբաղվել նաև, օրինակ, բիզնեսով, արհեստով և այլն: Հայտնի է, որ որակյալ իրավապաշտպան գործունեությունը փաստաբանից պահանջում է մտավոր ներուժի, մասնագիտական գիտելիքների, կենսափորձի, ժամանակի, էներգիայի անմնացորդ ներդրում՝ առաջադրված նպատակներին հասնելու համար: Որոշ փաստաբաններ հավելյալ շահույթ ունենալու համար գործունեություն են ծավալում այլ ոլորտներում: Կարծում ենք՝ մշտական հիմունքներով մի քանի այս կամ այն գործունեությամբ զբաղվող փաստաբանն ի զորու չէ ապահովելու փաստաբանության պատշաճ որակ: Խնդիրը լուծելու համար նպատակահարմար է օրենքի ուժով արգելել փաստաբանին՝ զբաղվել

⁹ ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի ԱՂ/59, 26.01.2015թ. գրություն:

¹⁰ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-29-Ն, ՀՀՊՏ 2005/6/378, 21.01.2005, հոդ. 120:

այլ գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք (բիզնես, արհեստ և այլն)՝ բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական աշխատանքից:

Օրենսդրությամբ սահմանված փաստաբանության կարգավորման կառուցակարգերը, ընդհանուր առմամբ, համապատասխանում են միջազգային նորմերին: Դրանց համահունչ, իր առջև դրված խնդիրները լուծելու համար, օրենքով նախատեսված կարգով Պալատը կազմավորել է մարմիններ (ընդհանուր ժողով, Պալատի խորհուրդ, որակավորման և կարգապահական հանձնաժողովներ), որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ գործառույթներ և իրավասություններ: Պալատի նախագահը փաստաբանների պալատի գործադիր մարմնի բարձրագույն պաշտոնատար անձն է: Նախագահն ընտրվում է առնվազն տասը տարվա փաստաբանական ստաժ ունեցող անդամների կազմից փակ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու ամսամյա անընդմեջ: Կարծում ենք՝ Պալատի նախագահի պաշտոնավարման ժամկետի այսպիսի սահմանափակումը, նախագահի՝ ավտորիտար կառավարիչ դառնալու երկյուղով պայմանավորված, չի բխում փաստաբանության զարգացման հեռանկարային շահերից: Թեպետ և երկյուղը փարատվում է մի շարք օրենսդրական երաշխիքներով՝ ընտրության կարգը, հետևանքի հնարավորությունը և այլն: Սակայն, մեր կարծիքով՝ բացառիկ դեպքերում, եթե նախագահը, անմնացորդ նվիրված լինելով փաստաբանության զարգացմանը, իրականացնում է լայնածավալ բարեփոխումներ, որոնք շարունակական են և, որ կարևոր է՝ վայելում է փաստաբանների գերակշիռ մասի վստահությունը, ապա նրան պետք է ընձեռել հետագա ընտրություններին մասնակցելու հնարավորություն:

Փաստաբանության արդի փուլի վերջին մի քանի տարիները բնութագրվում են աննախադեպ առաջընթացով. ՀՀ կառավարության 2012 թ. մայիսի 10-ի թիվ 601-Ա որոշմամբ՝ Փաստաբանների պալատին անհատույց օգ-

տագործման իրավունքով տրամադրվել է Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեի, նյութատեխնիկական առումով հագեցած, պետական, իրավապահ մարմիններին պատկանող կառույցներին ոչնչով չզիջող, 1560,1 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շենքը (փաստաբաններին տեղերում շենքերով ապահովելը մնում է խնդրահարույց, և այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերականգնել խորհրդային ժամանակների փորձը. ՀՀ տարածքի վարչական միավորներում անհատույց օգտագործման հիմունքներով առանձնացնել մեկուսի տարածքներ, որտեղ, փաստաբանների պալատի որոշմամբ՝ կարող են գործունեություն ծավալել սկսնակ և դրա կարիքը ունեցող փաստաբանները), հիմնադրվել և հաջողությամբ գործում են Փաստաբանական դպրոցը (ուսումնառության համար նախատեսված են նաև անվճար տեղեր), երիտասարդների խորհուրդը և փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը, առաջադեմ երկրների մասնագետների ներգրավմամբ ստեղծվել է փաստաբանների մասնագիտական վերապատրաստման գործուն կառուցակարգ: Պալատն անդամակցել է Փաստաբանների միջազգային միությանը, համագործակցություն է հաստատել Վրաստանի, Բելառուսի և այլ երկրների ու քաղաքների (Փարիզի և Լիոնի) փաստաբանական պալատների հետ¹¹, ինչը, նոր որակ ու երանգ հաղորդելով հայրենական փաստաբանությանը, դառնում է երկրում քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստող որոշիչ գործոն:

Երկրում իրականացվող դատաիրավական բարեփոխումների համատեքստում արմատական փոփոխություններ է կրել փաստաբանության համակարգը, բարձրացել է նրա դերն ու նշանակությունը քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության ամրապնդման գործում, ուստի փաստաբանությունը ձեռք է բերել պետության կարևորագույն իրավական ինստիտուտի որակ, իրավական բնույթով ու գործառույթներով հենասյունային նշանակություն ունի իրավական պետության և

¹¹ Տե՛ս մանրամասն. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հաշվետվությունը ռազմավարական (այդ թվում՝ նախընտրական) ծրագրի կատարման վերաբերյալ (2013 թ. հոկտեմբեր – 2014թ. դեկտեմբեր): Երևան, 23 դեկտեմբերի 2014թ.:

քաղաքակիրթ հասարակության կառուցման համար: 2016թ. նոյեմբերի 01-ի դրությամբ՝ հանրապետությունում արտոնագրված փաստաբանների քանակը 1978 է, որից 247-ը կասեցրել են իրենց արտոնագրի գործողությունը, ուստի գործող փաստաբանների թիվը կազմում է 1731 անձ: Հանրային պաշտպանների հաստիքների ընդհանուր թիվը 66 է, որոնցից 38-ը գործել են մարզերում, իսկ 28-ը՝ Երևանում: 2016թ. հանրային պաշտպանների վարույթում եղել է 3985 քաղաքացիական և 4410 քրեական գործ:¹²

«Սահմանադրությունն¹³ ամրագրել է այս ինստիտուտի համար մի շարք առանցքային նշանակություն ունեցող դրույթներ. իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննության, իրավական օգնություն ստանալու, ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք (61, 63, 64 հոդ.), որոնք սկզբունքային նշանակություն ունեն փաստաբանության ձևավորման և զարգացման համար: Սակայն, մեր կարծիքով, փաստաբանությունը՝ որպես փաստաբանի կարգավիճակ ստացած անձանց կողմից մասնագիտական հիմունքներով ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող որակյալ իրավական օգնություն և արդարադատության մատչելիությունն ապահովող գործունեություն, ինչպես պետության կառուցվածքային տարրերը, օրինակ՝ դատախազությունը, պետք է բարձրացվի սահմանադրական մակարդակի: Փաստաբանություն հասկացությունը պետք է սահմանադրական ամրագրում ստանա, և այդ պա-

րագայում հավուր պատշաճի կրնկալվեն փաստաբանության դերը և նշանակությունը հասարակության կողմից, փաստաբանը կզգա իրեն սահմանադրորեն պաշտպանված:

Շարադրվածից ելնելով՝ արդարացված ենք համարում «Սահմանադրության 64 հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

1. «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը, որի կազմակերպման համար ստեղծվող Փաստաբանների պալատը ղեկավարում է առնվազն տասը տարվա փաստաբանական սրածունեցող անդամների կազմից փակ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ ընտրված նախագահը: Բացառիկ դեպքերում երկու անգամ անընդմեջ ընտրված նախագահը կարող է մասնակցել հաջորդ ընտրություններին: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18 հոդ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով. «9) չզբաղվել այլ գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք (բիզնես, արհեստ և այլն)՝ բացի գիտական, մանկավարժական և սրտեղծագործական աշխատանքից»:



¹² ՀՀ փաստաբանների ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի նո.01105,1/1123-16, 07.11.2016թ. գրություն:

¹³ <http://www.president.am/hy/constitution-2015/>

ՎԱՐՍԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ,
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, Հայդելբերգի համալսարանի հրեագիտության ինստիտուտի մագիստրանտ (Հայդելբերգ, Գերմանիա)

ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ. ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իսրայելում, առավելապես պատմական իրողությամբ թելադրված¹ ճանաչվում է առանձին կրոնական համայնքների իրավասությունը²: Դրանց իրավասության ճանաչմանը զուգահեռ՝ պետության կողմից նաև մեծ ֆինանսական օժանդակություն է տրամադրվում այդ համայնքներին, որն իրականացվում է ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ հարկերից ազատման միջոցով³: Նշվածը որոշակիորեն հարում է, այսպես կոչված, պետության և կրոնի «փափուկ» տարանջատման հայեցակարգին, որը ենթադրում է կրոնական ծառայությունների ոլորտում պետության ներգրավ-

վածություն՝ հավատացյալների շահերի պաշտպանության, ինչպես նաև համապատասխան ինստիտուտների գործունեությանն օժանդակելու նպատակով⁴:

Այս կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ լայնորեն քննարկվում են հետևյալ հարցերը, թե՛ առաջին՝ կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածությունն արդյոք կարելի է դիտարկել որպես միջամտություն դրանց գործունեությանը, և երկրորդ՝ նման ներգրավվածությունը նպաստում, թե՛ վնասում է կրոնական ազատության իրացմանը⁵: Այս առումով պետք է

¹ Իսրայել պետությունում ճանաչվում է առանձին կրոնական համայնքների իրավասությունն անձնական կարգավիճակի հետ կապված հարցերում, ինչն ունի խոր պատմական արմատներ՝ սկիզբ առնելով դեռևս Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում գործող միլլեթական համակարգից: Նշվածը, ինչպես նշում է իսրայելցի խոշոր սահմանադրագետ պրոֆ. Սյուզի Նավոտը, Իսրայելի իրավական համակարգի վրա օսմանյան իրավունքի ամենաէական, եթե ո՛չ միակ, ազդեցությունն է (Navot S. Israeli constitutional law. The Netherlands. Kluwer Law International, 2007, էջ 20):

² Ներկայումս, հրեական համայնքից բացի՝ Իսրայելում կան տասներեք այլ ճանաչված կրոնական համայնքներ: Դրանք են՝ մուսուլմանական, արևելյան (ուղղափառ), լատինական (կաթոլիկ), հայկական գրիգորյան, հայկական կաթոլիկ, սիրիական կաթոլիկ, իթա քաղղեական, հունական կաթոլիկ-մելկիթական, մարոնական, սիրիական ուղղափառ, դրուզների կրոնական համայնքը (ճանաչվել է 1962թ.), եպիսկոպոսական-ավետարանչական (ճանաչվել է 1970թ.) և բահայի (ճանաչվել է 1971թ.) կրոնական համայնքները: Մինչդեռ որոշ քրիստոնեական համայնքներ, ինչպիսիք են, օրինակ՝ ղպտական համայնքը և եթովպիական ուղղափառ եկեղեցին, ինչպես նաև որոշ կրոնական ուղղություններ հենց հրեական համայնքի ներսում, որպես այդպիսին պաշտոնապես ճանաչված չեն:

³ Stén Medina B. Enhancing freedom of religion through public provision of religious services: The Israeli experiences // Israel Law Review, Vol. 39 N 2, 2006, էջ 127-129:

⁴ Stén Medina B. նույն տեղը:

⁵ Այսպես՝ պրոֆ. Մեդինան, «Կրոնի ազատության խթանումը կրոնական ծառայությունների պետական սպասարկման միջոցով. իսրայելյան փորձը» աշխատության մեջ վիճարկում է այն կանխադրույթը, թե պետության և կրոնի տարանջատումն անհրաժեշտ նախապայման է կրոնի ազատության ապահովման համար: Ըստ պրոֆ. Մեդինայի, պետության և կրոնի միջև խիստ տարանջատման նախատեսումն ի սկզբանե նախատեսվել է՝ որպես կրոնի վնասաբեր ազդեցությունից պաշտպանվելու միջոց՝ պայմանավորված վերջինիս անհանդուրժողական և հակաժողովրդավարական բնույթով: Մինչդեռ պետական ներգրավվածությունն իրականում միայն նպատակ ունի խթանել կրոնական ազատությունը՝ կրոնական ծառայությունների ողջամիտ մատչելիությունն ապահովելու միջոցով: Միաժամանակ, ըստ հեղինակի՝ նշված հարցերում պետական ներգրավվածությունն ինքնին չի արդարացնում պետության կողմից կրոնի հետ կապված հարցերի ավելի մեծ ծավալով իրավակարգավորումը: Նշված հարցադրումների

նկատի ունենալ, որ մասնագիտական գրականության մեջ արդեն վաղուց գերիշխում է այն տեսակետը, որ պետության կողմից կրոնական ինստիտուտներին օժանդակությունն իրականում նպաստում է կրոնական ազատության իրացմանը: Այսպես՝ պրոֆ. Դուրհամի տեսության համաձայն՝ կրոնական ինստիտուտներին պետական օժանդակության չափավոր մակարդակն իրականում կարող է համատեղելի լինել կրոնական ազատության բավարար մակարդակի ապահովման հետ: Եվ, ընդհակառակն՝ նշվում է, որ կրոնից պետության խիստ տարանջատվածության պարագայում լարվածությունը կարող է կրոնական ազատության հետ անհամատեղելի մակարդակի հասնել: Այսինքն, ըստ պրոֆ. Դուրհամի՝ գոյություն ունի կրոնական հարցերին պետության օժանդակության և պաշտպանության ընդունելի՝ կրոնական ազատության իրացման հետ համատեղելի մակարդակ⁶: Սույն հոդվածի շրջանակներում կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության հարցերը քննարկելիս մենք ևս ելնում ենք նշված հիմնադրույթից:

Այսպես, ինչպես արդեն նշվել է՝ Իսրայել պետությունում կրոնական համայնքները լայնորեն օգտվում են պետական ֆինանսական աջակցությունից՝ թե՛ ուղղակի ֆինանսավորման և թե՛ հարկերից ազատման ձևով: Ֆինանսական օգնության երկու դեպքում էլ Իսրայել պետության քաղաքականությունը տարբեր կրոնական համայնքների հետ հարաբերություններում միատեսակ չէ, բացի այդ՝ առկա չէ տրամադրվող ֆինանսական օգնության հավասարությունը երաշխավորող որևէ չափանիշ կամ իրավակարգավորում: Այսպես՝ քրիստոնեական եկեղեցիների դեպքում ուղղակի ֆինանսական օգնությունն ավելի քիչ է, մինչդեռ այլ կրոնական համայնքերի, այդ թվում՝ մուսուլմանական և հրեական համայնքների հետ

համեմատությամբ վերջիններս օգտվում են ավելի մեծ հարկային արտոնություններից:

Անդրադառնալով ուղղակի պետական ֆինանսավորմանը՝ պետք է նշել, որ Իսրայելում հրեական, մուսուլմանական և դրուզների կրոնական դատարանները, որ ստեղծվել և գործում են Իսրայելի աշխարհիկ օրենքների հիման վրա և, որպես այդպիսին՝ պետական-հանրային մարմիններ են, ամբողջությամբ ֆինանսավորվում են պետության կողմից՝ ինչպես մյուս դատարանները: Կրոնական դատարաններում դատավորներն այսպես կոչված աշխարհիկ դատարաններում աշխատող դատավորների հետ համահավասար՝ ստանում են նույն չափով աշխատավարձ:

Հրեական կրոնական կարիքների սպասարկումն իրականացվում է «Հրեական կրոնական ծառայությունների մասին» 1971թ. օրենքով, որի համաձայն՝ կրոնական խորհուրդների ֆինանսավորումն ամբողջ ծավալով իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման բյուջեների հաշվին: Պետության միջոցների հաշվին են վճարվում նաև գերագույն ռաբբիության և տեղական ռաբբիների աշխատավարձերը: Կրոնի հարցերի նախարարության կողմից հատուկ ֆինանսավորում է նախատեսված կրոնական կյանքի տարբեր ոլորտներում առաջացող պահանջարկների բավարարման համար՝ սինագոգերի, գերեզմանոցների, կրոնական բաղնիքների կառուցում և վերանորոգում, աղոթագրքերի տպագրություն և այլն: Կրոնի հարցերի նախարարության կազմում գործում են առանձին ստորաբաժանումներ, որոնք զբաղվում են քրիստոնյաների, մուսուլմանների, կարաիթների, դրուզների և սամարացիների կրոնական համայնքների հարցերով:

Պետք է նկատի ունենալ, որ հասկապես մուսուլմանների և դրուզների կրոնական ինստիտուտներն օգտվում են մեծածավալ ֆինան-

հետ կապված՝ հեղինակը երկու հիմնական նկատառումներ է անում: Առաջին՝ պետական ներգրավվածությունը որոշ դեպքերում ենթադրում է միջամտություն կրոնական ծառայություններին՝ այդ ծառայությունների ողջամիտ մատչելիությունն ապահովելու նպատակներին հասնելու համար: Եվ երկրորդ՝ ավելի մեծ ծավալով կարգավորումը կարող է արդարացվել պետական իշխանության ներգրավվածության հետևանքով օրենքով պաշտպանվող այլ շահերին պատճառվող ավելի մեծ վնասի դեպքում: Հեղինակի կարծիքով՝ սա է վկայում Իսրայել պետության՝ կրոնական ծառայությունների պետական կարգավորման ոլորտում ավելի քան վաթսու տարիների ակտիվ ներգրավվածության քաղաքականությունը (Medina B., նշված աշխատությունը, էջ 127-157):

⁶ Ավելի մանրամասն տես, օրինակ՝ Kathleen M. Sullivan, Religion and Liberal Democracy, 59 U. Chi L. Rev. 195, 1992:

սական օգնությունից, որը դրսևորվում է ոչ միայն կրոնական դատարանների կազմակերպման և ֆինանսավորման, աշխատավարձերի վճարման, այլև կրոնական շինությունների վերանորոգման և այլ ձևերով: Ի տարբերություն վերը հիշատակված կրոնական համայնքների ինստիտուտների⁷ քրիստոնեական ինստիտուտները պետական-հանրային ինստիտուտներ չեն և, ինչպես նշվել է՝ դրանց տրամադրվող ուղղակի ֆինանսական օգնությունը մեծ չէ, սակայն առավել մեծ են հարկային արտոնությունների ծավալը, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կատարվող վերանորոգման աշխատանքները⁸:

Այդուհանդերձ՝ անժխտելի է, որ հրեական կրոնական ինստիտուտներն օգտվում են ավելի մեծ չափով ֆինանսավորումից, և այդ ֆինանսավորման մեծ մասն ուղղված է ուղղափառ հուդայականության կրոնական ինստիտուտներին⁹: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Իսրայել պետության քաղաքական համակարգում առավելապես ներկայացված են հուդայականության ուղղափառ և ուլտրաուղղափառ ուղղությունները, և վերջիններս հիմնականում Իսրայելի կոալիցիոն կառավարության մաս են կազմում: Հենց այդ քաղաքական կուսակցություններն են, որ իրենց կրոնական ուղղությունների ինստիտուտների համար ապահովում են ֆինանսական հատկացումների տրամադրում՝ ի վնաս հուդայականության մյուս ուղղությունների և ուղղափառ հուդայականության դիրքերից որոշ «անընդունելի» հատվածների:

Այժմ անդրադառնալով Սուրբ վայրերում կրոնական վարքագծի կարգավորմանը՝ պետք

է նշել, որ ներկայիս Իսրայել պետության տարածքում գտնվող Սուրբ վայրերը մշտապես հանդիսացել են հակամարտությունների պատճառ: Առանց պատմական անցքերի մեջ խորանալու՝ նշենք միայն, որ հակամարտություններն առավել թեժացան 19-րդ դարում, երբ եվրոպական որոշ երկրներ իրենց պաշտպանության տակ առան Պաղեստինի առանձին քրիստոնեական համայնքներ՝ պաշտպանությունը տարածելով նաև վերջիններիս համար սուրբ համարվող վայրերի վրա: Սուրբ վայրերում առանձին եկեղեցիների կարգավիճակը կարգավորելու նպատակով օսմանյան իշխանությունների կողմից տարբեր ժամանակներում տարբեր հրովարտակներ են ընդունվել, որոնցից ամենակարևորը, թերևս, 1852թ. հրովարտակն էր¹⁰: Հրովարտակը կարգավորում էր առանձին Սուրբ վայրերի հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով նշված վայրերում առանձին կրոնական ուղղությունների իրավասությունը: Այս կարգավորումը հայտնի է «Պատմական ստատուսքվո» անվանմամբ:

Այնուհետև՝ Ազգերի լիգայի խորհրդի կողմից հաստատված 1922թ. Պաղեստինի նկատմամբ բրիտանական մանդատի դաշնագրի կանոններով, ի թիվս այլնի, կարգավորում էր նախատեսված նաև Սուրբ վայրերի համար: Այսպես՝ նախատեսվում էր, որ մանդատային իշխանությունները պետք է պահպանեին նշված վայրերում գոյություն ունեցող իրավունքները և երաշխավորեին նշված վայրերի մատչելիությունը և պաշտամունքի ազատությունը՝ հասարակական կարգի և բարոյականության պահանջներին համապատասխան¹¹:

⁷ Իսուքը հրեաների, մուսուլմանների և դրուզների կրոնական ինստիտուտների մասին է:

⁸ Այս կապակցությամբ, օրինակ, հաճախ է հիշատակվում Վիա Դոլորոսայի՝ Երուսաղեմի հին քաղաքում Հիսուս Քրիստոսի անցած ճանապարհը՝ դատապարտումից մինչև կախաղան, երկու միլիոն դոլար արժողությամբ վերանորոգումը և մի շարք այլ վերանորոգման աշխատանքների կատարումը, ինչպես, օրինակ, Գադիդեա լճի մոտ՝ Հորդանանի ջրերում մկրտություն իրականացնելու համար կառուցված շինությունը և այլն:

⁹ Նման անհավասար մոտեցումը պայմանավորված է պատմական, ազգային և քաղաքական մի շարք գործոններով: Մասնավորապես՝ դա ուղղված է Իսրայել պետության ստեղծման հիմնական առաքելություններից մեկի կյանքի կոչմանը՝ հրեական մշակույթի և ժառանգության պաշտպանությանն ու խթանմանը, որոնք ընդգծված կրոնական նշանակություն ունեն: Մասնավորապես՝ Եվրոպայում Հոլոքոստի տարիներին ավերված ուսումնական կենտրոնների փոխարեն՝ Իսրայել պետությունն իր առջև խնդիր է դրել նպաստելու Յեշիվոտների՝ կրոնական դպրոցների գործունեությանը: Իսրայելի Գերագույն դատարանի կողմից թեպետ սահմանվել է, որ նման հատկացումներ պետք է նախատեսվեն նաև այլ կրոնական համայնքների ուսումնական հաստատություններին:

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս Lapidot, R. Freedom of Religion and Conscience in Israel // Religious Pluralism and Constitutional Law, 47 Cath. U. L. Rev. 441 (1998), էջ 1371-1373:

¹¹ Դաշնագրի ամբողջական տեքստի համար տե՛ս http://avalon.law.yale.edu/20th_century/palmanda.asp:

1936թ. քրեական իրավունքի հրամանագիրը, որով կողիֆիկացման ենթարկվեց Պաղեստինի քրեական իրավունքը, Սուրբ վայրերի պաշտպանության հետ կապված որոշ նորմեր էր պարունակում՝ սրբապղծությունից դրանք զերծ պահելուն ուղղված¹²: Այս նորմերը ներկայումս Իսրայելի քրեական օրենսգրքի մաս են կազմում¹³: Բոլոր կրոնների Սուրբ վայրերի պահպանությունը երաշխավորված էր նաև Իսրայել պետության Անկախության հռչակագրով¹⁴:

Մինչև 1967թ. «Վեցօրյա պատերազմը» Սուրբ վայրերի մեծ մասը գտնվում էր Հորդանանի թագավորության տիրապետության տակ: 1967թ. Վեցօրյա պատերազմից հետո Սուրբ վայրերն անցան Իսրայելի իրավագործության ներքո: Պատերազմի ավարտից անմիջապես հետո վարչապետ Լևի Էշկոլը տարբեր կրոնական համայնքների հոգևոր առաջնորդների հետ հանդիպման ժամանակ վերահաստատեց բոլոր Սուրբ վայրերը պաշտպանելու և ազատ պաշտամունքը թույլատրելու՝ Իսրայելի պատրաստակամությունը¹⁵: Նույն՝ 1967 թվականին Քնեսետն ընդունեց «Սուրբ վայրերի պաշտպանության մասին» օրենքը, որը երաշխավորում է սրբապղծությունից բոլոր Սուրբ վայրերի պաշտպանությունը և դրանց ազատ մատչելիությունը: Այս սկզբունքները վերահաստատվեցին նաև «Երուսաղեմի՝ որպես Իսրայելի մայրաքաղաքի մասին» Հիմնական օրենքով (1980թ.)՝ Երուսաղեմի տարածքում գտնվող Սուրբ վայրերի առնչությամբ¹⁶:

Ընդհանուր գծերով ներկայացնելով խնդրի ողջ կարևորությունը՝ ստորև կանդրադառնանք կրոնական ազատության երաշխավորման նպատակով պետության կողմից Սուրբ վայրերում կրոնական վարքագծի կարգավորմանը: Այս-

պես՝ գաղտնիք չէ, որ մարդիկ ակնկալում են, որ իրենց համար սուրբ համարվող վայրերում վարքագիծը կարգավորվի իրենց կրոնական նորմերին համապատասխան, իսկ այդ նորմերին չհամապատասխանող վարքագիծը կարող է ընկալվել որպես սրբապղծություն՝ էական վնաս հասցնելով հավատացյալների կրոնական զգացմունքներին: Ինչևէ՝ նշվածը կարող է հակասության մեջ մտնել մյուսների կրոնական ազատության հետ, ովքեր նույն սուրբ վայրում ցանկանում են պաշտամունքի մեկ այլ ձև իրականացնել: Այս համատեքստում, որոշ հեղինակների գնահատմամբ, կրոնական ազատության, այդ թվում՝ պաշտամունքի ազատության ապահովումը կարող է արդարացնել կամ նույնիսկ պարտավորեցնել Սուրբ վայրերում կրոնական գործողությունների պետական կարգավորումը¹⁷:

Այս նպատակով կուսումնասիրենք Երուսաղեմում գտնվող երկու առանձին Սուրբ վայրերի իրավակարգավորման առանձնահատկությունները: Առաջինը հրեաների համար սրբավայր հանդիսացող Լացի պատն է՝ Արևմտյան պատին հարող տարածքը, որը մ.թ. 70թ. հռոմայեցիների կողմից ավերված՝ հինավուրց Հրեական տաճարից պահպանված միակ կառույցն է: Երկրորդը Սուրբ Հարության տաճարն է (Տիրոջ գերեզմանը), որը սրբավայր է քրիստոնեական մի շարք դավանաբանությունների, այդ թվում՝ կաթոլիկության համար: Ինչպես արդեն նշել ենք վերևում՝ Սուրբ Հարության տաճարն ինքնակառավարվող կառույց է¹⁸, իսկ, ահա, Լացի պատը կառավարվում է պետական գրասենյակի կողմից՝ Արևմտյան պատի համար պատասխանատու ռաբբիի ղեկավարությամբ: Այս սրբատեղիներից յուրաքանչյուրում կրոնական տարբեր խմբեր ունեն կրոնական ծիսակատարու-

¹² Lapidoth R., նույն տեղը:

¹³ Տե՛ս Закон об уголовном праве Израиля, Законодательство зарубежных стран, Санкт-Петербург, Издательство Р. Асланова, Юридический центр Пресс, 2005:

¹⁴ Տե՛ս Անկախության հռչակագիրը. <http://www.mfa.gov.il/MFA/Peace%20Process/Guide%20to%20the%20Peace%20Process/Declaration%20of%20Establishment%20of%20State%20of%20Israel>):

¹⁵ Վեցօրյա պատերազմի հետ կապված պատմական անցքերի մանրամասնությունների համար տե՛ս, օրինակ՝ Штереншис М., նշված աշխատությունը, էջ 307-338:

¹⁶ Հիմնական օրենքի ամբողջական տեքստի համար տե՛ս https://www.knesset.gov.il/laws/special/eng/basic10_eng.htm:

¹⁷ Տե՛ս, օրինակ՝ Medina B., նշված աշխատությունը, էջ 132-133:

¹⁸ Տե՛ս, օրինակ՝ Zander W. On the Settlement of Disputes about the Christian Holy Places // 8 Israel Law Review. 1973:

թյունների հակասական պահանջմունքներ: Սուրբ Հարության եկեղեցու դեպքում հակասություններ են առաջանում տարբեր կրոնական դավանաբանությունների միջև: Իսկ, ահա, Լացի պատի դեպքում հակասությունն առաջացավ այն ժամանակ, երբ հավատացյալ կանանց մի խումբ՝ հայտնի «Պատի կանայք» անվանմամբ, փորձ արեց նշված վայրում աղոթել, ուղղափառ հրեաների պատկերացմամբ՝ միայն տղամարդկանց համար ընդունելի եղանակով¹⁹: Նմանատիպ իրավիճակ առաջացավ նաև, մի կողմից՝ ուղղափառ հրեաների և, մյուս կողմից՝ ռեֆորմիստական և պահպանողական հրեաների միջև, երբ առաջինները փորձ արեցին Լացի պատի մոտ աղոթել տղամարդկանցից և կանանցից կազմված խառը խմբերով, ինչը հակասում էր ուղղափառ հրեաների՝ աղոթքի համար ընդունված պրակտիկային:

Նշված դեպքերից յուրաքանչյուրում, նշված խմբերից յուրաքանչյուրը, որ զրկված էր իր համար ցանկալի և ընդունելի եղանակով պաշտամունքի իրականացման հնարավորությունից, դիմեց Իսրայելի Գերագույն դատարան՝ որպես արդարադատության բարձր դատարանի (եբրայեն հապավումը՝ ԲԱԳԱՅ)²⁰: Սուրբ

Հարության եկեղեցու դեպքում Գերագույն դատարանը մերժեց վեճի կարգավորմանը միջամտելու կամ կառավարությանը միջամտելուն պարտավորեցնելու վերաբերյալ բողոքաբերների պահանջը²¹: Դատարանն իր այս դիրքորոշումը հիմնավորեց այն փաստարկով, որ սրբատեղիում վարքագծի կանոնների վերաբերյալ տարբեր կրոնական խմբերի միջև հակասությունը դատական քննության առարկա չէ²²:

Նույն հիմնավորմամբ՝ Լացի պատի գործով պատասխանող կողմը պնդում էր, որ այնքանով, որքանով Պատի համար պատասխանատու ռաբբի որոշումը՝ «Պատի կանանց» աղոթքի ձևն արգելելու վերաբերյալ, հիմնված է կրոնական նորմերի վրա, հետևաբար՝ նույնպես դատական քննության առարկա չի կարող հանդիսանալ: Ինչևհետև՝ ԲԱԳԱՅ-ը չընդունեց այս հիմնավորումը՝ սահմանելով, որ Պատի համար պատասխանատու ռաբբին իրավասու չէ պարտադրել հրեական իրավունքի իր գնահատմամբ «պատշաճ» համարվող աղոթքի ձևը: Ըստ դատարանի դիրքորոշման՝ սրբատեղիում վարքագծի կանոնները սահմանելիս շահագրգիռ բոլոր կողմերի շահերի հաշվառման վրա հիմնված անկողմնակալ մոտեցում է պետք ցու-

¹⁹ Այս խմբի անդամները կրում են ծիսակատարային աղոթաշալեր, բարձրաձայն կարդում են Թորայի գալարից և խմբով բարձրաձայն աղոթում: Նկարագրված պրակտիկան ավանդորեն վարում էին միայն տղամարդիկ (այս մասին տես Women of the Wall: Claiming Sacred Ground at Judaism's Holy Site / Phyllis Chesler & Rivka Haut ed., 2003):

²⁰ Ընդունված է համարել, որ Իսրայելի Գերագույն դատարանի դերը, որպես հանրային քաղաքականություն մշակողի, բավականին մեծ է: Վերջինս իր գործունեությունն իրականացնում է «Դատական իշխանության մասին» Հիմնական օրենքի հիման վրա: Առանց մանրամասնությունների մեջ խորանալով՝ սույնի շրջանակներում կցանկանայիք նշել, որ Իսրայելի Գերագույն դատարանը, ինչպես ընդունված է համարել, երկու հիմնական գործառույթ ունի: Առաջինը՝ որպես ընդհանուր իրավասության դատարան՝ վերաքննության կարգով լսում է իր իրավասությանը վերապահված բոլոր գործերը: Երկրորդ՝ որպես առաջին աստիճանի ի թիվս այլնի լսում է օրենքին հանրային իշխանության մարմինների գործունեության համապատասխանության հարցերով գործերը: Երկրորդ խումբ գործերը քննելիս Գերագույն դատարանը հանդես է գալիս որպես «Արդարադատության բարձր դատարան» (եբրայերեն հապավումը՝ ԲԱԳԱՅ):

²¹ HCJ 633/05 The Armenian-Patriarchy of Jerusalem v. The Government of Israel [21.4.05]: Դատարանը, մասնավորապես, սահմանեց, որ Կառավարությունը պետք է բանակցի կողմերի հետ, բայց մերժեց կոնկրետ լուծում տալուն Կառավարությանը պարտավորեցնելու վերաբերյալ բողոք բերած կողմի պահանջը: Գերագույն դատարանի կողմից նմանատիպ որոշումներ են կայացվել նաև Սուրբ Հարության տաճարին վերաբերող այլ վեճերով (այս մասին ավելի մանրամասն տես Medina B., նշված աշխատությունը, էջ 133-134):

²² Այս կարգավորումը նախատեսված է Պաղեստինի նկատմամբ բրիտանական մանդատի ժամանակաշրջանում ընդունված և մինչ օրս գործող օրենքով: Այսպես՝ 1924թ. Պաղեստինի (Սրբավայրեր) մասին օրդերի 2-րդ մասի համաձայն՝ նման հարցերը հստակ սահմանված էին՝ որպես դատական քննության ոչ ենթակա: Մասնավորապես՝ նախատեսվում էր. «Սուրբ վայրերի կամ կրոնական կառույցների կամ վայրերի, կամ Պաղեստինի տարածքում գտնվող տարբեր կրոնական կառույցների կամ շինությունների կամ վայրերի հետ կապված որևէ իրավունք կամ պահանջ քննարկման կամ լուծման ենթակա չէ Պաղեստինի տարածքում գործող դատարանի կողմից»: Այս դրույթը նույնությամբ ամրագրվեց նաև «Սուրբ վայրերի պաշտպանության մասին» 1967թ. օրենքի 1-ին մասում:

ցաբերել²³: Դատարանը որոշեց նաև, որ «Պատի կանանց» աղոթքի համար առանձին տեղ պետք է հատկացվի, իսկ եթե այս լուծումն իրատեսական չէ, ապա Պատի համար պատասխանատու ռաբբին պետք է աղոթքի համար ժամանակացույց սահմանի: Գերագույն դատարանը որևէ կերպ չբացատրեց քննարկվող երկու դեպքի միջև տարբերակված մոտեցում դրսևորելու հիմքը:

Ինչպես արդեն նշել ենք՝ նշված երկու սրբատեղիների կառավարումն իրականացվում է տարբեր կարգով. այսպես՝ Սուրբ Հարության տաճարի կառավարումն իրականացվում է մասնավոր կարգով, մինչդեռ Լացի պատի կառավարումը՝ հանրային: Իսրայելի կառավարության ենթաօրենսդրական ակտերով²⁴ սահմանված են Լացի պատի մոտ վարքագծի մանրամասն կանոններ, միաժամանակ նշանակվել է այդ գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին՝ ի դեմս պատի համար պատասխանատու ռաբբիի: Ինչևէ, ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆ. Մեդինան՝ սրբատեղիների կառավարման հարցում տարբերությունը միայն մասամբ է բացատրում սրբատեղիներից յուրաքանչյուրում կրոնական պաշտամունքի թույլատրելի ձևեր սահմանելու կա-

ռավարական և դատական ներգրավվածության տարբերությունը²⁵:

Սուրբ Հարության տաճարի դեպքում, թերևս, իրավիճակը կարելի է բացատրել այն փաստով, որ հրեական պետությունը որդեգրել է ոչ հրեական կրոնական կառույցների գործունեությանը չմիջամտելու քաղաքականությունը: Ինչդիպումն այլ է հրեական կրոնական կառույցների դեպքում. Իսրայելը որպես հրեական պետություն նպատակ ունի ապահովելու հրեա բնակչության կրոնական ազատությունը: Ինչպես ընդունված է համարել՝ հուդայականությունն Իսրայել պետությունում ճանաչված չէ որպես պետական կրոն, ըստ այդմ, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ՝ հրեաների կոլեկտիվ իրավունքներն իրացվում են կառավարության կողմից: Հետևաբար՝ կրոնական ինստիտուտների գործունեությանը պետության միջամտությունը տվյալ դեպքում ուղղված է կրոնի ազատության իրացմանը՝ մի կողմից բացառելով «սրբապղծություն» համարվող գործողությունները և, մյուս կողմից՝ ապահովելով բոլոր հավատացյալների համար սրբավայրերի մատչելիությունն ու պաշտամունքի ազատությունը²⁶:



²³ Տեն, օրինակ՝ H CJ 257/89 Hoffman v. The Rabbi in-Charge of the Western Wall [1994] IsrSC 48 (2) 265; H CJ 3358/95 Hoffman v. The General Manager of the Prime Minister's Office [2000] IsrSC 54 (2) 345; FHCJ 4128/00 The General Manager of the Prime-Minister's Office v. Hoffman [2003] IsrSC 57 (3) 289: Բողոքը քննության առնելու իր դիրքորոշման հիմքում դատարանը դրեց Լացի պատին ազատ մատչելիության իրավունքը, որ կարգավորման է ենթակա «Սուրբ վայրերի պաշտպանության մասին» 1967թ. օրենքի 1-ին մասով, և ոչ թե Պաղեստինի («Սուրբ վայրեր») 1924թ. օրդերի 2-րդ մասով (այս մասին տես Medina B., նշված աշխատությունը, էջ 134-135, Lapidoth R., նշված աշխատությունը, էջ 1369-1376):

²⁴ Հրեական սրբավայրերի պաշտպանության մասին 1981թ. ենթաօրենսդրական ակտը:

²⁵ Medina B., նշված աշխատությունը, էջ 134:

²⁶ Իհարկե, նշվածի կապակցությամբ առաջանում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ հաշվեկշիռ գտնելու խնդիրը, սակայն, ինչպես հաճախ է ասվում Իսրայել պետության վերաբերյալ. «Իսրայելում ամեն ինչ փոխզիջման մասին է»: Նշվածն առավել քան ճիշտ է Իսրայել պետության՝ կրոնի հետ փոխհարաբերությունների առնչությամբ:

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,
Հայ-ռուսական համալսարանի պետության և
իրավունքի տեսության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՆՑԱԿԻՑՆԵՐԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱՑԱՈՈՂ
ԲՆՈՒՅԹԻ (PRECLUSION) ԵՎ ՆԱԽԱԴԱՏԵԼԻՈՒԹՅԱՆ (PRAEJUDICIUM) ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության հարցերը, թերևս, դատավարագիտության և իրավակիրառ պրակտիկայի առավել բարդ հիմնախնդիրներից են, քանի որ այս տիրույթում խաչվում են բազմաթիվ և բազմաշերտ իրավաչափ շահեր (նպատակներ): Հոդվածում հեղինակը քննարկում է դատավարական որոշումների բացառիկ (պրեկլյուզիվ) և նախադատելի (պրեյուդիցիալ) բնույթի ընդհանուր բնութագիրը, հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության վերաբերյալ ձևավորված պրակտիկան, ինչպես նաև հանցակիցների մեղադրանքների փոխազդեցության վերաբերյալ իրավական սկզբունքները դատավարագիտության մեջ և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Այս համատեքստում հեղինակը, մասնավորապես, անդրադառնում է.

- 1) դատաքննությանը չմասնակցած ենթադրյալ հանցակցի մասին հիմնական գործով կայացված դատական ակտում դատողության իրավաչափությանը,
 - 2) հանցակցությանը կատարված հանցագործությունների վերաբերյալ գործով կասեցված վարույթի ողջամիտ ժամկետին և քրեական հետապնդման որոշակիությանը,
 - 3) պարզեցված դատական վարույթի արդյունքով կայացված դատական ակտի նախադատելիության սահմաններին,
 - 4) այն իրավիճակներին, երբ կատարողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է մինչդատական վարույթում, իսկ այլ հանցակցի վերաբերյալ քրեական հետապնդում շարունակվել է դատարանում,
- Բանալի բառեր՝** հանցակիցներ, նախադատելի փաստեր, մեղադրանք, վարույթը կասեցնել, ողջամիտ ժամկետ, ապացույցների ազատ գնահատում, քրեական հետապնդման որոշակիություն:

АРТУР ГАМБАРЯН

Заместитель Председателя Следственного комитета РА,
заведующий кафедрой Теории государства и
права Российско-Армянского Университета,
доктор юридических наук, профессор

**ВЗАИМОДЕЙСТВИЕ ОБВИНЕНИЙ СОУЧАСТНИКОВ В КОНТЕКСТЕ ИСКЛЮЧИТЕЛЬНОСТИ И
ПРЕЮДИЦИАЛЬНОСТИ ПРОЦЕССУАЛЬНЫХ АКТОВ**

Вопросы взаимодействия обвинений соучастников являются одной из самых сложных проблем науки процессуального права и практики, так как в этом домене пересекаются различные и многослойные юридические интересы (цели).

В статье Автором обсуждается общий характер процессуальных актов в контексте их преюдициальности и уникальности, практика взаимодействия обвинений соучастников, а также принципы такого взаимодействия в науке процессуального права и в прецедентном праве Европейского суда по правам человека. В этом контексте Автор особо обращает внимание на следующие вопросы:

- 1) легитимность изложений в решении суда по основному делу касательно предполагаемого соучастника, который не принимал участия в судебном заседании,
- 2) разумные сроки приостановленного процесса по делу о преступлениях, совершенных в соучастии, и определенность уголовного преследования,
- 3) границы преюдициальности судебных решений, принятых в упрощенном порядке,
- 4) случаи, когда обвинение в связи с исполнителем преступления было прекращено на стадии расследования, в то время как преследование соучастника продолжается в суде.

Ключевые слова: соучастники, преюдициальные факты, обвинение, приостановление разбирательства, разумные сроки, свободная оценка доказательств, уголовное преследование, определенность уголовного разбирательства.

ARTUR GHAMBARYAN

Deputy Chairman of the Investigative Committee of the Republic of Armenia,
 Head of the Chair of Theory of State and Law
 of the Russian-Armenian University,
 Doctor of Law, Professor

INTERACTION OF CRIMINAL CHARGES OF ACCOMPLICES IN THE CONTEXT OF PRAEJUDICIUM AND PRECLUSION

The issues of the interaction of the charges of accomplices are one of the most difficult problems of science of procedural law and practice, as in this domain various and multilayer legal interests (purposes) are being crossed.

In the article the Author discusses the general nature of the procedural acts in the context of praesudicium and preclusion, the practice of the interaction of the charges of accomplices, as well as the principles of such interaction in the science of procedural law and in the case-law of the European Court of Human Rights. In this context the Author particularly pays attention to the following issues:

- 1) legality of the statement concerning the presumed accomplice who has not taken part in the trial in the court decision in regard with the main case,
- 2) reasonable time limit of the suspended procedure of the case on the crimes committed by complicity and the certainty of prosecution,
- 3) the borders of praesudicium of the court decisions held by facilitated procedure,
- 4) cases when the prosecution in regard with the perpetrator has been ceased on the stage of investigation, whilst the prosecution of the accomplice continues in court.

Keywords: accomplices, praesudicium, criminal charge, suspension of the proceeding, reasonable time, free assessment of the evidences, criminal prosecution, certainty of criminal prosecution.

* * *

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ,
 Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս,
 իրավաբանական գիտությունների թեկնածու

ԼԻԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարան (ՀՖՀՀ)
 իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատի
 2-րդ կուրս

ԿԱԼԱՆՔԻ՝ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԿՉՐՈՒՆՔԻ

Սույն գիտական աշխատությունը նվիրված է անմեղության կանխավարկածի սկզբունքին, որը, լինելով արդարադատության սահմանադրական սկզբունք, իր ամրագրումն է ստացել ինչպես միջազգային իրավունքի աղբյուրներում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրության մեջ՝ ՀՀ Սահմանադրության 66-րդ և ՀՀ քր. դատ. օր-ի 18-րդ հոդվածներում: Սույն հոդվածի շրջանակներում ներկայացվում են ոչ միայն անմեղության կանխավարկածի բնութագիրը և առանձնահատկությունները, այլև անդադարձ է կատարվում իրավաստեղծ գործընթացում տեղ գտած սխալներին, որոնք, ըստ էության՝ անմեղության կանխավարկածի խախտման պատճառ են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման պատճառ առավել շատ կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառումն է, սույն հոդվածում առավել մանրամասնորեն անդադարձ է կատարվում կալանքի անհիմն կիրառման պատճառներին, որոնք, ըստ էության՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման հիմք են: Ընտրված թեման արդիական է և ելակետային՝ պայմանավորված միջազգային և ներպետական իրավունքում ամրագրված տվյալ սկզբունքի բաղկացուցիչ մասը կազմող տարրերի վերլուծության անհրաժեշտությամբ:

Սույն հոդվածում ուսումնասիրության օբյեկտ են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը, առավելապես՝ Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիան, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները: Հաշվի են առնվել նաև Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և Արդարադատության խորհրդի՝ նախնական կալանքը որպես պատժի միջոց կիրառելու անթույլատրելիության վերաբերյալ վճիռներում և որոշումներում արտահայտած դիրքորոշումները, որոնք հիմնված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի վրա: Հոդվածում անդադարձ է կատարվում նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծին, որում կատարված փոփոխությունները, ըստ էության՝ միտված են խափանման միջոցների կիրառման հիմքերի հստակեցմանը՝ նպատակ ունենալով համապատասխանեցնել դրանք Մարդու իրավունքների Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Ակնկալվում է, որ սույն աշխատանքի շնորհիվ վեր հանված խնդիրները հնարավորություն կտան առաջարկել անմեղության կանխավարկածի անհիմն կիրառման դեպքերի հետ սերտորեն առնչվող տեսական և գործնական խնդիրների լուծման հնարավոր տարբերակները:

Բանալի բառեր. անմեղություն, իրավական կանխավարկած, խափանման միջոց, կալանք, հիմնավոր կասկած, նվազագույն միջամտություն, ողջամիտ հիմքեր:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

ԱԿ ԱՐՄԻՅԱՆ

Прокурор прокуратуры административного района Шенгавит,
преподаватель Французского университета в Армении,
кандидат юридических наук

ԼԻԱՆԱ ԿԱԶԱՐՅԱՆ

Студентка юридического факультета
Французского университета в Армении,
второй курс бакалавриата

**ПРОПОРЦИОНАЛЬНОСТЬ ПРИМЕНЕНИЯ АРЕСТА КАК МЕРЫ ПРЕСЕЧЕНИЯ В СООТВЕТСТВИИ
С ПРИНЦИПОМ ПРЕЗУМЦИИ НЕВИНОВНОСТИ**

Данная научная работа посвящена принципу презумпции невиновности, которая, являясь конституционным принципом юстиции, прикреплена как в источниках международного права, в частности, в Европейской конвенции о защите прав человека и основных свобод, так и во внутригосударственном законодательстве РА в 66-ой статье Конституции РА и в 18-ой статье уголовно-процессуального кодекса. В рамках данной статьи представляются не только описание и особенности презумпции невиновности, но и отражены ошибки правотворческих процессов, которые, по сути, являются причиной нарушения презумпции невиновности. Выбранная тема очень актуальна в связи с необходимостью анализа элементов данного принципа, закреплённого в международных и межгосударственных правах. В данной статье объектом исследования стали знаменитые нормы международного права, по большей части - Европейская конвенция по правам человека, а также прецедентные решения Европейского суда по правам человека. Отчитывались также установки, выраженные в указах и постановлениях Конституционного и Кассационного судов и Совета юстиции о недопустимости применения ареста как меры пресечения, которые основываются на прецедентном праве, оформленном Европейским судом по правам человека. В статье также отражен проект нового уголовно-процессуального кодекса, изменения которого, по сути, склонны к пояснению оснований применения мер пресечения, с целью соответствия к условиям, предусмотренным 5-ой статьёй Конвенции по правам человека. Ожидается, что проблемы, описанные в данной работе, дадут возможность предлагать возможные варианты решения теоретических и практических проблем, тесно связанных со случаями необоснованного применения презумпции невиновности.

Ключевые слова: невинность, правовая презумпция, мера пресечения, арест, обоснованное сомнение, минимальное вмешательство, разумные основания.

HAYK HARUTYUNYAN

Prosecutor of Shengavit District,
Lecturer in French University in Armenia,
Doctor of Juridical Science

LIANA GHAZARYAN

Student of Faculty of Law in
French University in Armenia,
bachelor degree, 2nd year

**THE SYMMETRY OF DETENTION PRACTICE AS PRECAUTIONARY MEASURE ACCORDING
TO THE PRESUMPTION OF INNOCENCE PRINCIPLE**

This scientific work is devoted to the presumption of innocence principle, which being a constitutional principle of justice has been fixed both in sources of international law, particularly in European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms and in domestic legislation of Republic of Armenia: article 66 of Armenian constitution and article 18 of Armenian criminal court legislation. This article represents not only the nature and features of presumption of innocence but also refers to the mistakes found in the lawmaking process. These mistakes upset the presumption of innocence. Taking into consideration the circumstance that mainly the detention practice as precautionary measure upsets the presumption of innocence principle this article minutely refers to the reasons of baseless detention practice, legislative gaps and drawbacks which, basically, cause presumption of innocence principle infraction. The selected theme is contemporary and initial, conditioned by the necessity analysis of elements, which are components of the given principle, which is fixed in international and national law.

The objects of study in this article are popular norms in international law, mainly European Convention of Human Rights, as well as precedential decisions of European Court of Human Rights. The attitudes expressed in the decisions of Constitutional Court, Supreme Court and Justice Council related the impermissibility of using pre arrest as measure of punishment have been taken into consideration. These attitudes are based on the precedential law formed by European Court of Human Rights. Annual reports of Judicial Department concerning to the baseless detention practice have also been taken into account. This article also refers to the new Code project of Criminal trial. The changes made in new project are aimed to the specification of precautionary measures, intended to compliance them with the requirements provided the article 5 of Convention on Human Rights. In this article, we have also done a comparative analysis between legal regulations referred to the basis of detention practice according to the current Criminal Procedure Code and the project of new Criminal Procedure Code. It is expected that the problems mentioned here will give an opportunity to suggest possible options for theoretical and practical problems referred to baseless detention practice.

Keywords: innocence, legal presumption, precautionary measure, detention, reasonable suspicion, minimum interference, reasonable basis.

ՆԱՐԵԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության
ծառայողական քննությունների բաժնի տեսուչ,
«Գլաժոր» համալսարանի ասպիրանտ

«ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ» ԵՎ «ՄԵՂԱԴՐԱՆՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բավականին հաճախ են քրեական հետապնդումը նույնացնում մեղադրանքի հետ: Երբեմն թեև տարբերում են այդ երկու հասկացությունը, սակայն չեն կարողանում տեսնել դրանց սահմանագծերը, որոնցով կարողանան դրանք տարբերակել: Եվ դա լիովին բացատրելի է: Չէ որ պատմականորեն այդ հասկացությունները մոտ էին իրար: Ավելին՝ եղել են պատմական ժամանակաշրջաններ, երբ քրեական հետապնդումն ու մեղադրանքը համարվել են նույն բանը: Քանի որ քրեադատավարական գործող օրենսդրությամբ այդ հասկացությունները հավասարապես կիրառվում են, ուստի կարևոր է դրանց հարաբերակցության հարցի գիտական ուսումնասիրությունը:

Բանալի բառեր. մեղադրանք, քրեական հետապնդում, գործառույթ, հարաբերակցություն, մեղադրյալ:

НАРЕК МИНАСЯН

Инспектор отдела служебного расследования управления
внутренней безопасности Полиции РА,
аспирант Ереванского Университета Гладзор

ОБЩНОСТЬ И РАЗЛИЧИЕ ПОНЯТИЙ «УГОЛОВНОЕ ПРЕСЛЕДОВАНИЕ» И «ОБВИНЕНИЕ» В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

Довольно часто понятие уголовное преследование отождествляют с обвинением. Иногда хоть и ставят различие между двумя этими понятиями, однако не видят линий разграничения, по которым могли бы различать их. И это полностью объяснимо. Ведь исторически эти понятия были близки друг другу. Более того, были исторические периоды, когда уголовное преследование и обвинение считались идентичными. Поскольку по действующему процессуальному законодательству эти понятия применяются в равной степени, постольку важно научное изучение вопроса их соотношения (корреляции).

Ключевые слова: обвинение, уголовное преследование, функция, соотношение (корреляция), обвиняемый.

NAREK MINASYAN

Inspector of service investigation division of
internal security department of police of the Republic of Armenia
PhD student, Yerevan University, Gladzor

THE GENERALITY OF THE NOTIONS “CRIMINAL PROSECUTION” AND “ACCUSATION” AND THEIR DIFFERENCE IN CRIMINAL PROCEDURE

Criminal prosecution is very often identified with the accusation. Though these two notions are sometimes differentiated, but their borderlines are not seen, owing what they can be differed from each other. And it is completely explainable. Those notions were historically close to each other, weren't they? Moreover, there were historical periods, when criminal prosecution and accusation were the same thing. So far as via the operating criminal procedure legislation those notions are equally applied, thus it is important the scientific study of their correlation issue.

Keywords: accusation, criminal prosecution, function, correlation, accused.

* * *

ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՖԻՆԱՆՍԻՆԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԻՍԱՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվում ֆինանսիայի կառավարման ձևի առանձնահատկություններին, ցույց է տրվում, թե ինչպիսի դրսևորումներ են ունեցել նախագահ-կառավարություն փոխհարաբերությունները տարբեր ժամանակահատվածներում:

Բանալի բառեր. կառավարման կիսանախագահական համակարգ, նախագահ, պառլամենտ, կառավարություն, սահմանադրական բարեփոխումներ:

ГРАЙР ТОВМАСЯН

Руководитель – генеральный секретарь аппарата НС РА,
кандидат юридических наук, доцент,
докторант академии государственного управления РА

ОСОБЕННОСТИ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ ФИНЛЯНДИИ В КОНТЕКСТЕ ПОЛУПРЕЗИДЕНТСКОЙ СИСТЕМЫ ПРАВЛЕНИЯ

Статья относится к особенностям формы правления Финляндии, в статье показывается, какие проявления имело соотношение президент-парламент в разные периоды.

Ключевые слова. полупрезидентская система правления, президент, парламент, правительство, конституционные реформы.

HRAYR TOVMASYAN

The RA NA Chief of Staff – Secretary General,
PhD in Law, Associate Professor,
Postdoctoral Researcher of the Public Administration Academy of RA

THE SPECIFICITIES OF THE FORM OF GOVERNMENT OF FINLAND IN THE CONTEXT OF SEMI-PRESIDENTIAL SYSTEM

The article discusses the specificities of the form of government of Finland, the relations of the president and the government are displayed within different time periods.

Keywords: semi-presidential form of government, the President, Parliament, Government, constitutional reforms.

* * *

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն
և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության
առաջին կարգի մասնագետ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015Թ. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ)**

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության առարկա են ՀՀ 2015թ. փոփոխություններով Սահմանադրությանը Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը բնութագրող հիմնական հատկանիշները, ինչպես նաև զսպումների և հավասարակշռման այն մեխանիզմները, որոնց միջոցով Ազգային ժողովը փոխկապակցված է պետական իշխանության մյուս ճյուղերի հետ: Կատարված ուսումնասիրության շնորհիվ նշվում է, որ իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման ապահովման վրա մեծ ազդեցություն են ունենում քաղաքական գործոնները: Միաժամանակ՝ պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև հավասարակշռության ապահովման գործում առանձնակի կերպով կարևորվել է պառլամենտական ընդդիմության դերակատարությունը:

Բանալի բառեր. իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունք, Ազգային ժողովի գործառնություններ, Ազգային ժողովի արձակում, պառլամենտական ընդդիմություն, Ազգային ժողովի պատասխանատվություն:

АЙК КЕСОЯН

Аспирант академии государственного управления Республики Армения
министерства юстиции управления антикоррупционной и
пенитенциарной политики, специалист первой категории

**КОНСТИТУЦИОННЫЙ СТАТУС НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
В СИСТЕМЕ РАЗДЕЛЕНИЯ И БАЛАНСА ВЛАСТЕЙ
(В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С ПОПРАВКАМИ, ВНЕСЕННЫМИ В 2015 ГОДУ)**

В рамках этой статьи, в системе органов государственной власти, основные черты, характеризующие конституционный статус Национального Собрания, а также механизмы сдержек и противовесов, с помощью которых

Национальное Собрание взаимосвязано с другими органами государственной власти, были предметом исследования в контексте Конституции Республики Армения с изменениями, внесенными в 2015 году.

В результате исследования было выявлено, что на обеспечение механизмов сдержек и противовесов между законодательной и исполнительной ветвями государственной власти оказывают существенное влияние также политические факторы, где особое значение имела роль парламентской оппозиции в обеспечении баланса между законодательной и исполнительной ветвями власти.

Ключевые слова: принцип разделения и баланса властей, функции Национального Собрания, роспуск Национального Собрания, парламентская оппозиция, ответственность Национального Собрания.

HAYK KESOYAN

Phd student of public administration academy of the Republic of Armenia
Staff of the ministry of justice of Republic of Armenia
anti-corruption and penitentiary policy development department
first-class specialist

THE CONSTITUTIONAL STATUS OF THE NATIONAL ASSEMBLY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE SYSTEM OF DIVISION AND BALANCE OF AUTHORITIES (IN THE CONTEXT OF THE CONSTITUTION OF THE REPUBLIC OF ARMENIA WITH THE AMENDMENTS MADE IN 2015)

Within the framework of the article, in the system of state's power bodies the main features characterizing the constitutional status of the National Assembly, as well as the mechanisms of checks and balances, with the help of which the National Assembly is interconnected with other public authorities, have been a subject of the study in the context of the Constitution of the Republic of Armenia with the amendments made in 2015.

As a result of the study, it was revealed that political factors as well have a significant impact on the provision of mechanisms of checks and balances between the legislative and executive branches of government where the role of the parliamentary opposition had a special importance in ensuring a balance between the legislative and executive branches of government.

Keywords: the principle of division and balance of authorities, the functions of the National Assembly, dissolution of the National Assembly, the parliamentary opposition, the responsibility of the National Assembly.

* * *

ՀԱՄԼԵՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Փաստաբանությունը՝ որպես հասարակությունում ձևավորված պահանջմունքի արդյունք, առաջացել է վաղ քաղաքակրթության հետ մեկտեղ և իրեն բնորոշ այժմեական գծերը ձեռք է բերել պետության կողմից պաշտոնապես ճանաչում ստանալուց հետո: Ընդ որում՝ եթե դատարանները պատմականորեն առաջացել են ոչ վաղ անցյալում, ապա դրանից առաջ ծնունդ առած պաշտպանությունը մշտապես փնտրել է իր աշխատանքի օբյեկտը: Հատկանշական է, որ փաստաբանության բնորոշ գծերը և հատկանիշները ձևավորվել են Հռոմում. արդեն իսկ Հռոմեական կայսրության ժամանակներում փաստաբանությունը ճանաչվեց պետության կողմից և հիմք հանդիսացավ տարբեր պետություններում փաստաբանության ինստիտուտի զարգացման համար:

Պատմականորեն, մինչիրավական և իրավական պետականության զարգացմանը զուգընթաց, փաստաբանությունն ունեցել է տարբեր կարգավիճակ՝ գտնվել է պետությունից կախյալ կամ հարաբերականորեն անկախ վիճակում: Օրինակ՝ 18-րդ դարի Գերմանիայում փաստաբանները փոխարինվեցին վարձատրվող դատարանի պաշտոնյալներով, իսկ Խորհրդային Ռուսաստանում (այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում) փաստաբանությունը հռչակվեց որպես հանրային ինստիտուտ և դիտարկվում էր որպես հասարակական կազմակերպություն, սակայն, իրականում, Խորհրդային փաստաբանությունը մինչև վերջ մնաց կուսակցական-պետական մեքենայի մասը և նրա շահերը սպասարկող գործիքներից մեկը:

Փաստաբանությունը՝ որպես ըստ կազմակերպական-իրավական ձևի հասարակական կազմակերպություն, չի կարող լինել հանրային իշխանության կազմում, այլ, որպես այդպիսին, օժտված է կորպորատիվ իշխանությամբ, փաստաբանական գործունեությունն ունի ոչ առևտրային բնույթ:

Հայրենական փաստաբանության ձևավորումը, Հայաստանի 1-ին Հանրապետության ժամանակաշրջանից սկսած, ընթացավ Ռուսաստանի փաստաբանության ձևավորման օրինաչափություններին ու կանոններին համահունչ: Սակայն Հայաստանի անկախությունը հայրենական փաստաբանության համար նշանավորեց զարգացման նոր փուլ: 1998թ. հունիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը լուծեց ՀՀ փաստաբանների միություն հիմնադրելու, փաստաբանության կարգավիճակին

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 97 2017

բնորոշ՝ օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից օգտվող, անկախ, ինքնակառավարվող միավորում լինելու, փաստաբանների արտոնագրման, փաստաբանական ծառայության վճարովիության, մրցակցության հիմնահարցը:

«Ազգային ժողովը 2004 թ. դեկտեմբերի 14-ին ընդունեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը՝ նոր խմբագրությամբ, և սկսվեց փաստաբանության զարգացման արդի փուլը: Որպես արդյունք՝ ստեղծվեց մեկ միասնական կառույց՝ ՀՀ փաստաբանների պալատը: Օրենքը նպատակ է հետապնդում հզորացնել այդ կառույցը, բարձրացնել փաստաբանության հեղինակությունը: ՀՀ փաստաբանների պալատը, որպես փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից:

Օրենսդրությամբ սահմանված՝ փաստաբանության կարգավորման կառուցակարգերն ընդհանուր առմամբ համապատասխանում են միջազգային նորմերին: Փաստաբանության արդի փուլի վերջին մի քանի տարիները բնութագրվում են աննախադեպ առաջընթացով. փաստաբանների պալատն ապահովված է նյութատեխնիկական առումով հագեցած, պետական, իրավապահ մարմիններին պատկանող կառույցներին ոչնչով չզիջող շենքով, սակայն փաստաբաններին տեղերում շենքերով ապահովելը մնում է խնդրահարույց, և այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերականգնել խորհրդային ժամանակների փորձը. ՀՀ տարածքի վարչական միավորներում անհատույց օգտագործման հիմունքներով առանձնացնել մեկուսի տարածքներ, որտեղ, փաստաբանների պալատի որոշմամբ, կարող են գործունեություն ծավալել սկսնակ և դրա կարիքը ունեցող փաստաբանները:

Նոր օրենքի համաձայն՝ Պալատի նախագահի պաշտոնավարման ժամկետը, նախագահի՝ ավտորիտար կառավարիչ դառնալու երկյուղով պայմանավորված, սահմանափակ է. նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ: Մեր կարծիքով՝ բացառիկ դեպքերում, եթե նախագահը, անմնացորդ նվիրված լինելով փաստաբանության զարգացմանը, իրականացնում է լայնածավալ բարեփոխումներ, որոնք շարունակական են և, որ կարևոր է՝ վայելում է փաստաբանների գերակշիռ մասի վստահությունը, ապա նրան պետք է ընձեռել հետագա ընտրություններին մասնակցելու հնարավորություն:

Երկրում իրականացվող դատաիրավական բարեփոխումների համատեքստում արմատական փոփոխություններ է կրել փաստաբանության համակարգը, բարձրացել են դրա դերն ու նշանակությունը քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության ամրապնդման գործում, որի ուժով փաստաբանությունը ձեռք է բերել պետության կարևորագույն իրավական ինստիտուտի որակ, իրավական բնույթով ու գործառույթներով հենասյունային նշանակություն ունի իրավական պետության և քաղաքակիրթ հասարակության կառուցման համար:

Բանալի բառեր: փաստաբանություն, քաղաքացիական հասարակություն, Սահմանադրություն, Փաստաբանների պալատ, ինքնակառավարվող միավորում:

ГАМЛЕТ СТЕПАНЯН

адвокат палаты адвокатов РА

**АДВОКАТУРА КАК ИНСТИТУТ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА:
ПОНЯТИЕ, ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ**

Адвокатура, как результат, формулирующийся потребностью в обществе, зарождалась совместно с ранней цивилизацией, а свои сегодняшние черты приобрела после официального признания государством. Причем, если суды исторически образовались не в давнем прошлом, то до того существовавшая защита искала объект своего воздействия. Примечательно, что характерные черты и признаки адвокатуры сформировались в Риме: уже в период Римской империи адвокатура была признана государством и служила основой для развития этого института в разных государствах.

Исторически, параллельно развитию доправовой и правовой государственности, правовой статус адвокатуры был разным – она находилась от государства как в зависимом, так и в относительно независимом положении. Например, в 18-ом веке в Германии адвокаты были заменены должностными – присяжными при судах, а в постреволюционной России (в том числе- в Армении) адвокатура была провозглашена общественным институтом и рассматривалась как общественная организация, но, в действительности, советская адвокатура осталась одним из инструментов обслуживания партийно-государственной машины.

Адвокатура, по организационно-правовой форме как общественная организация, не может быть в составе публичной власти, она, как таковая, наделена корпоративной властью, адвокатская деятельность носит некоммерческий характер.

Формирование отечественной адвокатуры, начиная со времен 1-ой Республики Армения, происходила адекватно закономерностям и правилам формирования Российской адвокатуры. Однако независимость Армении для отечественной адвокатуры ознаменовала новый этап развития. Национальное собрание 18-го июля 1998 года приняло закон РА “Об адвокатской деятельности”, который разрешил такие злободневные вопросы, как основание независимого, самоуправляющегося Союза адвокатов, их лицензирование, порядок оплаты услуг, состязательность и др. А вот 14-го декабря 2004 года был принят закон РА “Об адвокатуре”, и с этого момента началось нынешняя эпоха развития отечественной адвокатуры. В результате было учреждено единое образование – Палата адвокатов РА. Закон преследует цели усилить этот институт, повысить авторитет адвокатуры.

Конституированные законом принципы организации адвокатуры, в основном, соответствуют международным нормам. За последние годы отечественная адвокатура беспрецедентно прогрессирует. Палата адвокатов обеспечена

технически оснащенным, современным зданием, но на местах пока данный вопрос остается нерешенным. поэтому поводу, как нам кажется, целесообразно восстановить опыт советских времен, когда в административных единицах выделялись площади, где по решению палаты могли бы работать начинающие, в этом нуждающиеся адвокаты.

По новому закону – срок пребывания в должности председателя Палаты, обусловленный тем, что он со временем может стать авторитарным, ограничен. председатель избирается сроком на четыре года, но не более чем два раза подряд. Было бы правильно, в исключительных случаях, когда председатель, будучи преданным делу развития адвокатуры, осуществляет широкомасштабные преобразования и, что важно, пользуется доверием доминирующей части адвокатов, ему предоставить возможность участвовать на следующих выборах.

В результате осуществления в стране судебноправовых реформ, коренным образом претерпела изменения и система адвокатуры, повысилась ее роль и значение в деле укрепления верховенства права и гражданского общества, в силу чего адвокатура приобрела качество важнейшего государственного института, своей юридической природой и функциональностью имеет значение краеугольного камня для построения правового государства и цивилизованного общества.

Ключевые слова: адвокатура, гражданское общество, Конституция, Палата адвокатов, самоуправляющиеся объединения.

HAMLET STEPANYAN

Advocat of the Chamber of Advocates of RA

THE ADVOCACY AS AN INSTITUTION OF A CIVIL SOCIETY, THE NOTION, DEVELOPMENT AND CREATION PROBLEMS

The Bar, as a result of public demand, has emerged along with the early civilization. It has acquired its modern features after being officially recognized by the state. If the courts have been historically established not a long time ago, then the Bar, which was born before that, have always been looking for its object of influence.

It is noteworthy that the characteristic features of the Bar have been shaped in Rome. Under the Roman Empire the Bar was recognized by the state and served as a basis for development of the institute of the Bar in various states.

Historically, the Bar had different status in parallel to the development of preconstitutional and constitutional state it was either dependent or relatively independent from the state.

For example, in the 18th century in Germany, the lawyers were replaced by paid court clerks, while in Soviet Russia, including Soviet Armenia, the Bar was declared as a public institute and was perceived as a non-governmental organization. Still, in reality, the soviet Bar was a part of the political machine and was one of the tools serving its interests.

Still the Bar as a non-governmental organization by its structure, cannot be a part of the state power. It is endowed with corporate power and is non-commercial by nature.

The development of the Bar in Armenia has followed the logic and rules of the Bar in Russia starting from the period of the First Armenian Republic.

But the independence of Armenia marked a new era for the Bar in the country.

On Jun 18, 1998 the National Assembly accepted the Law on Advocacy, which has solved the issue of founding the Union of Lawyers of Armenia as an independent union, which has all the rights granted by the law, independent, self-regulatory union, as well as the issue of certification of the lawyers, the charges for the legal service and competition.

The National Assembly of the Republic of Armenia accepted the amended law on advocacy in 2004 with which the modern phase of the Bar in the country started. As a result the Chamber of Lawyers of Armenia was established. The law aims at strengthening this institution though increasing the reputation of the Bar. The Chamber of Lawyers of the Republic of Armenia, as a professional, independent, non-commercial organization, gets a status of legal entity from the moment of being registered in accordance with the Law.

Regulations of the legal profession defined by the Law in general correspond to the international norms. The recent years of the modern phase of the Bar witnessed unprecedented progress.

While the Chamber of Lawyers has a fully equipped building equal to the ones of other public and legal bodies, still providing space to the lawyers is still an issue. In this regard, we believe that the soviet experience should be considered. In essence, free spaces should be provisioned for the use of lawyers in the administrative units of the Republic of Armenia, where the new lawyers or the lawyers who need it will practice according to the decision of the Chamber of Lawyers.

According to the new law, the president of the Chamber is elected for a four-year term and no more than two times in a row because of the concern of authoritarian rule.

We believe that in those cases, when the president is devoted to the development of advocateship and is doing large-scale improvements enjoying the trust of the majority of lawyers, then he/she should have an opportunity to participate in the upcoming elections.

Within the context of legal improvements in the country, the system of the Bar has undergone drastic changes. Its role in strengthening the rule of law and civil society has increased, which helped the Bar to get the quality of a significant legal institute, serving as a pillar for building a constitutional state and civil society.

Keywords: advocacy, social society, Constitution, chamber of advocate, self-governing union.

ՎԱՐՍԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ,
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, Հայդելբերգի համալսարանի հրեագիտության ինստիտուտի մագիստրանտ (Հայդելբերգ, Գերմանիա)

ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ. ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ուսումնասիրվում են Իսրայելում առանձին կրոնական համայնքների գործունեությանը պետական ներգրավվածության, այդ թվում՝ դրանց ֆինանսավորման հետ կապված հարցերը: Ինչպես կտեսնենք՝ կրոնական ինստիտուտների գործունեության պետական կարգավորումը, հատկապես՝ սահմանափակ ռեսուրսների դեպքում, նպատակ ունի ապահովելու կրոնական ազատության առավելագույնս իրացումը:

Այնուհետև՝ այս մեթոդաբանական հիմքի վրա վերլուծության կենթարկվեն Իսրայել պետության տարածքում գտնվող Սուրբ վայրերում առանձին կրոնական համայնքների, ինչպես նաև նույն համայնքի առանձին դավանաբանական ուղղությունների վարքագծի կարգավորման առանձնահատկությունները:

Բանալի բառեր. Իսրայել, հուդայականություն, կրոն, կրոնական ազատություն, կրոնական համայնք, Սուրբ վայրեր

ВАРСЕР КАРАПЕТАН

Заместитель руководителя канцелярии общественного защитника палаты адвокатов Республики Армения, аспирант кафедры теории государства и права и истории юридического факультета ЕГУ, магистр института иудаики университета Гейдельберга (Гейдельберг, Германия)

ПРОБЛЕМА ВОВЛЕЧЕННОСТИ ГОСУДАРСТВА В ДЕЯТЕЛЬНОСТЬ РЕЛИГИОЗНЫХ ИНСТИТУТОВ В ИЗРАИЛЕ: ОСОБЕННОСТИ РЕГУЛИРОВАНИЯ РЕЛИГИОЗНОЙ ЛИНИИ ПОВЕДЕНИЯ В СВЯТЫХ МЕСТАХ

В статье рассматриваются вопросы, связанные с государственной вовлеченностью в деятельность отдельных религиозных общин в Израиле, в том числе – связанные с их финансированием. Как увидим далее, государственное регулирование деятельности религиозных институтов, особенно в условиях ограниченных ресурсов, имеет целью обеспечить максимальную реализацию религиозной свободы.

Далее, на базе данной методологии подвергнутся анализу особенности регулирования линии поведения отдельных религиозных общин, а также отдельных богословских течений тех же общин в Святых местах, находящихся на территории государства Израиль.

Ключевые слова: Израиль, иудаизм, религия, религиозная свобода, религиозная община, Святые места

VARSER KARAPETYAN

Deputy Head at the Public Defender Office of the Chamber of Advocates of the RA
PhD Student at the Chair of Theory and History of State and Law,
Law Department, YSU
MA, University of Heidelberg, Hochschule for Jewish Studies
(Heidelberg, Germany)

THE ISSUE OF STATE INVOLVEMENT IN THE ACTIVITY OF RELIGIOUS INSTITUTIONS IN ISRAEL: PARTICULARITIES OF REGULATION OF RELIGIOUS BEHAVIOR IN HOLY SITES

In the article issues regarding the state involvement in the activity of separate religious communities, including financing thereof in Israel are examined. As we are going to see, state regulation of the activity of religious communities, especially in the case of limited resources, is aimed at the utmost securing of religious freedom.

Further, on this methodological basis particularities of regulation of behavior of separate religious communities, as well as of separate denominations within the same communities in Holy Sites located in the area of the State of Israel will be analyzed.

Keywords: Israel, Judaism, religion, religious freedom, religious community, Holy places.

ՀՀ ՂԱՏԱՆԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունն առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: